891.71
S-80

6283
891.71 | ՏՈԼՍՏՈՅ
Տ-80 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ
ՊԲ. „Ա"
5583 | 3/XII 14
11 | 16/VIII 46
808 | 13/III 14
145 | 26/XI 65
10562 | 31/III 81

№ 2 Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴ № 2
19 NOV 2010
891.71-3
Տ-80
Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

(Հեղինակի ծննդեան ութսունամեայ յոբելեանի առիթով)

592

ԹԱՐԳՄ. Ա. Մ.

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊՐ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՏ., 7.
1908

23.08.2013
14083

«Ա. Պողոսեանի գրական Ֆոնդի» խմբագրական Յանձնաժողովը, կամենալով ի Թիւս ուրիշների մատնակցել ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյի ծննդեան ութսունամեայ յոբելեանի ոգիով կատարուելիք գրական հատուածարձակային տօնին, վճռեց թարգմանել տալ նրա գրուածքներից մի քանի ժողովրդական պատմուածքներ եւ հրատարակել **Ի ՊԱՏԻՒ ԱՅԴ ՅՕԲԵԼԵԱՆԻ**:

I.

Երկու ծերունի խօսք էին տուել իրար Երուսաղէմ ուխտ գնալու։ Մէկը նրանցից—Եֆիմ Տարասիչ Շեւելեւովը — հարուստ գիւղացի էր, իսկ միւսը—Ելիսէյ Բոգրովը — հարուստ չէր։

Եֆիմը ծանրաբարոյ, խիստ ու հաստատակամ մարդ էր. նա ոչ օղի էր խմում, ոչ ծխախոտ ծխում, ոչ քթախոտ քաշում, իսկ հայհոյանք ասած բանը նա երբէք, իր ամբողջ կեանքում, բերանից չէր հանել։ Երկու անգամ Եֆիմ Տարասիչը տանուտէր էր ընտրուել և երկու անգամն էլ իր պաշտօնը կատարել էր ազնուութեամբ, առանց գիւղական փողերից իր վրայ մի կոպէկ պարտք թողնելու։ Նա մեծ ընտանիքի տէր էր. ունէր երկու որդի և մի ամուսնացած թոռն, և նրանք բոլորն էլ ապրում էին միասին։ Եֆիմը առողջ, մեծ մօրուքով մարդ էր, ման էր գալիս ուղիղ, գլուխը բարձր բռնած. չը նայելով որ նրա տարիքը վաթսունից անց էր՝ բայց սպիտակ

մաղեր նոր-նոր էին սկսել երևալ նրա փառահեղ մօրուքի մէջ։

Ելիսէյը ոչ հարուստ և ոչ էլ աղքատ մի ծերունի էր. առաջ, երիտասարդ ժամանակ, նա գնում էր ուրիշ տեղեր հիւսնութիւն անելու, իսկ երբ ծերացաւ՝ ետ դարձաւ տունն ու սկսեց ճանճ պահել։ Նրա որդիներից մէկը դուրսն էր աշխատում, միւսը—տանը։ Մի բարի և ուրախ մարդ էր Ելիսէյը, և՛ օղի էր խմում, և՛ քթախոտ քաշում, և՛ միևնոյն ժամանակ սիրում էր խաղ ասել, բայց խաղաղ բնաւորութեան տէր էր, թէ իր տանեցիների և թէ հարևանների հետ սիրով ու հաշտ էր ապրում։ Նա տեսքով մարդ չէր—ցածրահասակ, թուխ երեսով, գանգուր մօրուքով ու ամբողջ գլուխն էլ տկլոր՝ իր անուանակից Եղիշէ մարգարէի նման։

Ծերունիները վաղուց խօսք էին կապել միասին գնալու, բայց Տարասիչը շարունակ զբաղուած էր և ժամանակ չէր գտնում. նրա գործերն անվերջ էին. հէնց որ մէկը վերջանում էր՝ միւսն էր սկսվում։ Էս է—թոռն է ամուսնացնում, էս է—որդու գալուն է սպասում զինուորական ծառայութիւնից, կամ թէ չէ՝ նոր տուն է սկսում շինել։

Մի տօն օր ծերունիները պատահեցին իրար ու նստան գերանների վրայ։

—Է՛, ե՞րբ պիտի գնանք պարտքերս տալու,—հարցրեց Ելիսէյը։

Եֆիմը յօնքերը կախեց։

—Ի՞նչ անեմ, պէտք է սպասել,—պատասխանեց Եֆիմը,—էս տարին շատ դժուար տարի էր ինձ համար. ես որ սկսեցի տունը շինել, կարծում էի, թէ հարիւր մանէթից քիչ աւել բանով կը պրծնեմ, հիմա

տեսնում եմ, որ երեք հարիւրին է մօտենում. դեռ էլի խօ չեմ վերջացրել։ Երևում է, մինչև ամառ պէտք է սպասել, իսկ ամառը, թէ որ Աստուած կամեցաւ, անպատճառ կը գնանք։

—Թէ ինձ կը հարցնես,—ասաց Ելիսէյը,—յետ դցելն աւելորդ է. թէ գնալու ենք՝ հէնց հիմա գնանք. գարունը լաւ ժամանակ է։

—Էդ խօ էդպէս է. բայց բանն այն է, որ գործն արդէն սկսուած է, ինչպէս հիմա կիսատ թողնեմ։

— Մարդ չունես տանդ ինչ է. տղէդ կը շինէ քո տեղակ։

— Կը շինէ, բայց ինչպէս. մեծս շատ էլ յուսալի մարդ չէ—կոնծողներից է։

— Մահկանացու ենք, սանահէր. որ մեռնենք՝ չէ՞ որ մեր տղէքն առանց մեզ պիտի ապրեն. թող տղէդ հիմիկուանից սովորի։

— Ուզիղ է, ուզիղ, բայց էլի ուզում եմ, որ իմ ձեռքովս բանը վերջացնեմ։

— Է՛հ, բարեկամ, որ գործերի ետևից ընկնես՝ ոչ մի ժամանակ էլ չես վերջացնի։ Այ քեզ օրինակ, քիչ առաջ մեր հարսները տուն էին դուրս գցել, սըրբում, լուանում էին տօներից առաջ. համ էս պիտի անէին, համ էն. էնքան գործ կար, որ չը գիտէին, թէ որին հասնեն։ Մեծ հարսս խելացի կնիկ է. «Պիտի փառք տանք Աստծուն,—ասում է,—որ տօները գալիս են, մեր հրամանին չեն սպասում, թէ չէ՝ ինչքան էլ բան անէինք, էլի չը պիտի պրծնէինք»։

Տարասիչը մտածման մէջ ընկաւ։

— Բանն այն է,—ասաց նա վերջապէս,—որ շատ փող ծախսեցի ես էդ տան վրայ. իսկ ճանա-

պան գնալն էլ խո դատարկ ձեռքով չի լինի. քիչ փող չէ—հարիւր մանէթ է հարկաւոր։

Ելիսէյը ծիծաղեց։

— Հոգուդ մեղք մի անի, սանահէր,—ասաց նա,—քո կարողութիւնդ իմիցս տասն անգամ աւելի է, ու փողի մասին դու ես խօսում։ Ինձ միայն ասա, թէ որ օրը դուրս գանք—ես փող չունեմ էլ, բայց կը գտնեմ։

Տարասիչը ժպտաց քթի տակ։

— Տեսնում ես ինչ հարուստն է եղել, որ տեղից կը գտնես։

— Մի քիչ տան էս ու էն անկիւնից կը հանեմ. ինչ էլ որ պակասի՝ հինգ-տասը փեթակ կը ծախեմ հարևանիս. վաղուց ուզում է։

— Լաւ ձագի տարի կը լինի—կը փոշմանես։

— Փոշմանել. չէ, սանահէր, կեանքիս մէջ բացի մեղքերիցս ոչ մի բանի վրայ չեմ փոշմանել։ Ոչ մի բան հոգուս առաւել չէ։

— Ուզիլ ես ասում, բայց էլի լաւ չէ, երբ տան մէջ կիսատ-պռատ գործեր կան։

— Է, որ մեր հոգու գործերի մէջ կիսատ-պռատ բաներ մնան—էդ խո աւելի վատ է։ Զէ, որ մի անգամ ուխտ ենք արել՝ պիտի գնանք։ Հաւատա, արի գնանք։

II

Ելիսէյն սկսեց համոզել իր ընկերոջը։ Մտածեց—մտածեց Եֆիմն և առաւօտեան եկաւ Ելիսէյի մօտ։

—Է, լաւ, գնանք,—ասաց,—դու ճշմարիտ ես ասում։ Մեր մահն ու կեանքը Աստծու ձեռքին է։ Քանի կենդանի ենք ու ոտներիս մէջ ոյժ կայ՝ պէտք է գնալ։

Տարասիչը տանը փող ունէր. ճանապարհի համար վեր առաւ 100 մանէթ, իսկ 200 մանէթ էլ թողեց կնոջ մօտ։

Ելիսէյն ևս պատրաստուեց. հարևանին ծախեց 10 փեթակ և բոլոր ձագերը, ինչքան որ կը ստացուին այդ փեթակներից, նոյնպէս խոստացաւ տալ հարևանին. այս ամենի համար նա վերցրեց 70 մանէթ. մնացած 30 մանէթն էլ բոլոր տանեցիների հոգեպահուստներից լրացրեց. նրա պառաւ կինը վերջին փողերը տուեց, որ պահում էր իր թաղման համար. հարսն էլ իր ունեցածը տուեց։

Եֆիմ Տարասիչը բոլոր գործերը մեծ որդուն յանձնեց և մէկ-մէկ պատուիրեց, թէ որտեղ ինչքան խոտ-

հարք վերցնէ, ուր կրէ թրիքը, ինչպէս գինէ, վերջացնէ ու ծածկէ տունը։ Ամեն բանի մասին հոգաց, ամեն ինչ կարգադրեց։ Իսկ Ելիսէյը պատուիրեց միայն պառաւին, որ ծախուած փեթակների ձագերը, երբ դուրս գան, առանձին փեթակների մէջ ու առանձին տեղ դնեն և յետոյ տան հարևանին առանց խաբելու. տնական գործերի մասին նա խօսել անգամ չուզեց։ «Ի՞նչ խօսեմ,—ասաց նա մի անգամ,—ինքը գործը նշանց կը տայ, թէ ինչն ինչպէս պէտք է անել. դուք ինքներդ տանտէրեր էք, ինչպէս լաւ է, էնպէս էլ կանէք»։

Երբ ծերունիներն արդէն պատրաստ էին, տանեցիք նաղուկ թխեցին, պարկեր կարեցին ճանապարհի պաշարի համար, նոր սռնապաններ կտրեցին. ծերունիները նոր տրեխներ հագան, մի-մի զոյգ էլ ուրիշ վերցրին իրանց հետ ու գնացին։ Տանեցինք դուրս եկան գիւղից ճանապարհ գցելու նրանց. համբուրուեցին իրար հետ ու մեր ծերունիները ճանապարհ ընկան։

Ելիսէյը դուրս եկաւ տանից ուրախ-դուարթ և հէնց որ քիչ հեռացաւ գիւղից, տնական բոլոր բան ու գործը մոռացաւ։ Նա միայն այն էր մտածում, թէ ինչպէս աւէ, որ ընկերոջը ճանապարհին պէտք գայ, ոչ օրի մի կողմից խօսք չասէ, խաղաղ ու սիրով տեղ հասնի ու տուն վերադառնայ։ Գնում էր Ելիսէյն առաջ ու ինքն իրան կամ աղօթք էր մրմնջում, կամ սուրբերի պատմութիւններ, ինչ որ գիտէր, միտն էր բերում ու անգիր ասում։ Իսկ երբ ճանապարհին հանդիպում էր մի մարդու կամ երբ հասնում էր իջևան, աշխատում էր ամենքի հետ քաղցր վարուել ու այնպիսի խօսք ասել, որ Աստծու սրտին դուր

գայ։ Գնում էր Ելիսէյն և ուրախանում։ Մի բան միայն չը կարողացաւ անել նա։ Ուզում էր յետ կենալ քթախոտ քաշելուց,—դրա համար էլ քթախոտամանը տանը թողեց,—բայց չը կարողացաւ. մի սեսակ տխրութիւն եկաւ վրան։ Ճանապարհին մի անցորդ քթախոտ տուեց նրան և նա մէկ-մէկ յետ էր ընկնում ընկերից, որպէս զի մեղքի պատճառ չը դառնայ, ու քաշում էր ծածուկ։

Գնում էր և Եֆիմ Տարասիչը լաւ, հաստատ քայլերով, վատ բան չէր անում և դատարկ խօսքեր չէր ասում, բայց նրա սիրտը թեթև չէր։ Մտքից չէին դուրս գալիս տնական հոգսերը. շարունակ յիշում էր ինչ որ տանը պիտի անուէր։ Արդեօք բան չէ՞ մոռացել որդուն պատուիրելու. արդեօք այնպէս է անում որդին, ինչպէս պատուիրել է ինքը։ Երբ տեսնում էր ճանապարհին, որ գետնախնձոր են ցանում կամ աղը են կրում, միշտ մտածում էր, թէ իր որդին իր ասածի նմանն է անում։ Փիչ էր ճնում, որ տուն դառնայ և ամեն ինչ ցոյց տայ կամ ինքն անէ։

III.

Լինդ շաբաթ էր, որ ծերունիները ճանապարհ էին գնում. նրանք մաշեցին իրանց տնական տրեխները, արդէն նորերն սկսեցին գնել, երբ հասան խախօլների երկիրը։ Տանից որ դուրս եկան՝ իջևանի և ճաշի համար փող էին տալիս, իսկ երբ խախօլների երկիրը հասան, էլ չը գիտէին, թէ որի տունը հիւր գնան, այնքան շատ էին կանչողները։ Այնտեղ համ ներս էին առնում, համ կերակուր տալիս, համ փող չէին առնում և դեռ ճանապարհորդական պարկերը լցնում էին հացով և մինչև անգամ նազուկով։ Այսպէս յաջողութեամբ ծերունիներն անցան եօթ հարիւր վերստ, անցան էլի մէկ նահանգ և հասան այնպիսի տեղեր, ուր հացն այդ տարի չէր եկել։ Ուղիղ է, այդտեղ էլ ներս էին առնում, գիշերելու տեղ տալիս, բայց չէին կերակրում. հաց էլ ամեն տեղ չէին տալիս, և մինչև անգամ պատահում էր, որ փողով հաց չէր ճարվում։ Ժողովուրդը պատմում էր, որ անցած տարի հացն իսկի չէր եկել. հարուստներն ամեն ինչ ծախել-ծախծխել, քանդուել էին. ով առաջ քիչ թէ շատ լաւ էր ապրում՝ բոլորվին աղքատացել էր,

իսկ աղքատները կամ ցրուել էին այս ու այն կողմերը, կամ փողոցներում ողորմութիւն էին խնդրում և կամ տանը մի կերպ անց էին կացնում օրերը։ Զմեռը կամ թեփ և կամ չորացրած կոնաշներ էին ուտում.

Ծերունիներն իջևանել էին մի անգամ մի գիւղում. այնտեղ նրանք տասնևհինգ գրուանքայ հաց առան, գիշերն անց կացրին ու կանուխ առաւօտեան դուրս եկան, որ շոգն ընկնելուց առաջ ճանապարհ կարեն։ Անցան տասը վերստ ու հասան մի գետի ափ. այնտեղ նստեցին, ջուր առան ճանապարհի թասերով, հացը թրջեցին մէջը, կերան և փոխեցին ոտի փաթաթանները։ Մի քիչ նստեցին հանգստանալու։ Ելիսէյը հանեց քթախոտամանը։ Եֆիմ Տարասիչը գլուխը տարաւ ու բերեց։

—Էդ անպիտան բանն ինչ է, որ չես կարողանում յետ կենալ,—ասաց նա։

Ելիսէյը թափ տուեց ձեռքը։

—Զարը զօրաւոր է, յաղթում է ինձ. ինչ անեմ։

Նրանք վեր կացան ու նորից ճանապարհ ընկան։ Էլի մի տասը վերստ անցան, հասան մի մեծ գիւղ ու նրա միջով անցան մի ծայրից մինչև միւսը։ Շոգը սաստկացաւ։ Ելիսէյը դադրել էր. նա ուզեց հանգստանալ, ջուր խմել, բայց Տարասիչը կանգ չէր առնում։ Տարասիչը ման գալու մէջ աւելի դիմացկուն էր և Ելիսէյը դժուարանում էր գնալ նրա հետ համահաւասար։

—Ծարաւ եմ, ջուր եմ ուզում,—ասաց Ելիսէյը։

—Ջուր ես ուզում՝ խմիր, ես չեմ ուզում։

Ելիսէյը կանգ առաւ։

—Դու ինձ մի սպասիր,—ասաց Ելիսէյը,—ես

խկոյն վազ կը տամ այ էն խրճիթը, ջուր կը խմեմ և ձեռաց կը հանեմ եռևիցդ։

—Լաւ,—ասաց Եֆիմն և սկսեց մենակ առաջ գնալ ճանապարհով, իսկ Ելիսէյը շուռ եկաւ դէպի խրճիթը։

Ելիսէյը մօտեցաւ խրճթին։ Դա մի փոքրիկ, դրսից սուաղած տնակ էր՝ տակի մասը—սև, վերևինը—սպիտակ։ սուաղը շատ տեղ թափթփել էր։ երևում էր, որ վաղուց նորոգած չէր։ կտուրն էլ մի կողմից էր բացուել։ Խրճթի մուտքը բակից էր։ Ելիսէյը մտաւ բակը, տեսաւ որ դռան թմբիկի մօտ մի մարդ է պառկած—ջահել, անմօրուս, լղար, շապիկն անդրավարտիկի մէջ կոխած, ինչպէս անում են խախօլները։ Մարդը, երևի, պառկել էր գով ըստուերի մէջ, բայց արևն եկել, ուղիղ ընկել էր վրան։ Նա դեռ պառկած էր ու քնած էլ չէր։ Ելիսէյը դարձաւ նրան ու ջուր խնդրեց, բայց պառկողը ձայն չը հանեց։ «Կամ հիւանդ է, կամ բարի սիրտ չունի», մտածեց ինքն իրան Ելիսէյն և մօտեցաւ դռանը։ Լսում է, որ երեխայի լացի ձայն է գալիս։ Ելիսէյը թիկթիկացրեց դռան օղակը։ «Մ՛յ տան տէրեր»։ Ոչ մի պատասխան։ Ելիսէյն սկսեց դուռը ծեծել ձեռքի գաւազանով։ «Մ՛յ քրիստոնէք»։ Ձայն չեն տալիս։ «Մ՛յ Աստուած սիրողներ»։ Էլի ոչ մի ձայն։ Ելիսէյն ուզում էր արդէն հեռանալ, բայց յանկարծ կարծես թէ դռան ետևից նրա ականջին հառաչանքի ձայն հասաւ։ «Չը լինի թէ մարդկանց մի անբախտութիւն է պատահել, պէտք է մտիկ տալ»։ Եւ Ելիսէյը մտաւ խրճիթը։

Հ. Ս. Ս. Հանրային Գրադարան
Հանրային Գրադարան
Հ. Ս. Ս. Հանրային Գրադարան
Հ. Ս. Ս. Հանրային Գրադարան
Հ. Ս. Ս.

—Ի՞նչ ես ուզում,—ասաց,—այ մարդ, ոչինչ չունենք, չունենք ոչինչ։

Ելիսէյը մօտեցաւ նրան։

—Ես,—ասաց,—ներս մտայ ջուր խմելու։

—Ջը կայ, չը կայ, ոչ ջուր կայ, ոչ ջրաման։ Ճանապարհդ գնա։

Ելիսէյն սկսեց հարց ու փորձ անել։

—Էս ինչ բան է. մի առողջ մարդ էլ չունէք, որ էս կնկան մտիկ անէ։

—Ոչ ոք չունենք. մեր տղամարդը դռանն է մեռնում, մենք էլ՝ էստեղ։

Երեխան որ օտար մարդ տեսաւ՝ ձայնը կտրեց, բայց հէնց որ պառաւն սկսեց խօսել՝ նորից բռնեց պառաւի թևից։ «Հա՛ց եմ ուզում, տա՛տի, հա՛ց», ու նորից լաց եղաւ։

Ելիսէյն էն է բան էր ուզում հարցնել պառաւին, որ դռանը պառկած տղամարդը ներս ընկաւ, պատերը բռնելով ուզեց հասնել թախտին ու նստել, բայց չը կարողացաւ ու վայր ընկաւ անկիւնում, շէմքի մօտ։ Նա էլ չաշխատեց վեր կենալ ընկած տեղից ու սկսեց խօսել. բայց Աստուած խօսել համարէ. մէկ խօսք էր ասում, կարծես, զօրով դուրս քաշում բերանից, մէկ շունչ քաշում, հանգստանում, մինչև որ միւսը կասէր։

—Համ հիւանդ ենք, համ... քաղցած։ Տէս, քաղցից մեռնում է։ Եւ նա գլխով ցոյց տուեց երեխային ու լաց եղաւ։

Ելիսէյը թափ տուեց ուսերի վրայ գցած պարկը, ձեռքերն ազատեց, պարկը վայր դրեց գետին, յետոյ հանեց սեղանին ու սկսեց կապը բաց անել։ Բաց արաւ, հանեց հաց, դանակ, կտրեց մի պատառ ու

տուեց տղամարդին։ Տղամարդը չը վերցրեց. նա ցոյց տուեց տղային ու աղջկան, իբր թէ նրանց տուր։ Ելիսէյը տուեց տղային։ Տղան որ հացի հոտն առաւ, թեերը մեկնեց, երկու ձեռքով պինդ բռնեց պատառն և քթթ ու բերանն ամբողջովին կոխեց հացի մէջ։ Վառարանի ետևից դուրս եկաւ մի աղջիկ ու աչքերը գցեց հացի վրայ։ Ելիսէյը նրան էլ տուեց։ Էլի մի կտոր կտրեց, տուեց պառաւին։ Պառաւը վերցրեց ու սկսեց յոլմել։

—Ջուր որ բերուէր,—ասաց,—շատ լաւ կը լինէր, թէ չէ դրանք ծարաւ՝ պապակում են. ես երեկ էր թէ էսօր—միտքս անգամ չէ գալիս—ուզում էի ջուր բերել, բայց վայր ընկայ, տեղ չը հասայ ու ջրամանն էլ տեղնուտեղը մնաց, թէ որ մարդ տարած չը լինի։

Ելիսէյը հարցրեց, թէ ո՞րտեղ է ջրհորը։ Պառաւը հասկացրեց։ Ելիսէյը գնաց, ջրամանը գտաւ, ջուր բերեց ու տուեց նրանց խմելու։ Երեխաները ջրի հետ էլի հաց կերան. կերաւ և պառաւը, բայց տղամարդը չուզեց ուտել։ «Բերանս չէ բացվում»—ասաց։ Իսկ ջահել կինը տեղից անգամ չը շարժուեց և ոչ էլ ուշքի եկաւ, միայն կողքից կողք էր ընկնում ու տանջվում իր տեղում։ Ելիսէյը գնաց, գտաւ գիւղի խանութը. ձաւար, աղ, ալիւր ու իւղ գնեց։ Կացինը գտաւ, փայտ կոտորեց, սկսեց վառարանը վառել։ Աղջիկն օգնում էր նրան։ Ելիսէյն սպաս ու խաշիլ եփեց և կերակրեց ամենքին։

V.

Ի քիչ կերաւ ազամարդը, մի քիչ էլ պառաւը, իսկ աղջիկն ու փոքրիկ տղան ամանները անդամ լիզեցին ու փաթաթուած պառկեցին քնելու։

Տղամարդն ու պառաւն սկսեցին պատմել, թէ ինչպէս եղաւ, որ այդ անբախտութիւնն եկաւ իրանց գլխին։

—Մենք առաջ էլ,—ասացին,—խեղճ էինք ապրում. դրա վրայ եկաւ այն, որ անցած տարի արտերը փչացան, ոչինչ չստացանք. աշունքուանից ըսկսեցինք ուտել ինչ որ ունէինք։ Կերանք, պրծանք, հարևաններից և ուրիշ մարդկանցից սկսեցինք ուզել։ Առաջ տալիս էին, իսկ յետոյ էլ չը տուին։ Շատերն էլի ուրախութեամբ կը տային, բայց բանն այն է, որ իրանք էլ չունէին։ Մէկ էլ որ՝ խնդրելուց արդէն ամաչում էինք—ամենքին պարտական էինք, որին՝ փող, որին՝ ալիւր, որին՝ հաց։ Ես աշխատանք էի որոնում,—ասաց աղամարդը,—բայց աշխատանք չը կար. թէ մի տեղ էլ ճարվում էր՝ ամենքը միասին վրայ էին թափվում քաղցածութիւնից. այնպէս որ մի օր աշխատում էի, երկու օր պարապ ման գալիս, աշ-

խատանք որոնում։ Պառաւն ու աղջիկը վեր կացան, հեռու տեղ գնացին ողորմութիւն հաւաքելու, թէև ողորմութիւնից էլ մի բան չէր դուրս գալիս—ոչ ոք հաց չունէր ուտելու. բայց էլի մի կերպ քաշ էինք տալիս, կարծում էինք, թէ լաւ-վատ՝ կը հասնենք նոր հունձին։ Արի տես, որ գարունքուանից սկսած ողորմութիւնն էլ կարուեց. էլ ոչ ոք չէր տալիս. դրա հետ միասին վրայ հասան հիւանդութիւններ. շատ նեղն ընկանք. թէ մի օր ուտում էինք, երկու օր քաղցած էինք անցկացնում։ Սկսեցինք կանաչ խոտ ուտել. հիմի չը գիտենք՝ խոտիցն էր, թէ մի ուրիշ բանից՝ մեր հարսը հիւանդացաւ, պառկեց։ Իմ մէջ էլ,—աւելացրեց աղամարդը,—ոյժ չէ մնացել ու չը գիտեմ, թէ ինչպէս պիտի ողջանձս հաւաքեմ։

—Մենակ ես էի,—ասաց պառաւը,—դէս ու դէն ընկնում, չարչարվում. ես էլ ուժից ընկայ, թուլացայ անօթի օրս անցնելով։ Աղջիկն էլ թուլացաւ ու վախ ընկաւ սիրտը։ Ուղարկում էինք հարևանների մօտ՝ չէր գնում. մտել էր անկիւնն ու դուրս չէր գալիս։ Երեկ չէ առաջի օրը հարևանի կինը ներս մըտաւ, բայց տեսաւ որ քաղցած ու հիւանդ ենք՝ կրնկի վրայ յետ դարձաւ։ Ինքն էլ խեղճը նեղ տեղն է, մարդը թողել գնացել է, երեխաներին հաց չը կայ տալու։ Ահա էսպէս էր մեր դրութիւնը. վար էիք թափուել ու մնում էինք մահուան։

Ելիսէյը լսեց նրանց ասածն ու էլ չը գնաց նոյն օրն ընկերոջը հասնելու և գիշերը մնաց այնտեղ։ Առաւօտեան նա վեր կացաւ քնից, սկսեց տնական գործերը կատարել, կարծես թէ ինքը լինէր տանտէրը։ Պառաւի հետ միասին խմոր հունցեց ու վառարանը վառեց։ Յետոյ փոքրիկ աղջկայ հետ միասին գնաց

հարևանների մոտ՝ ուզելու ինչ որ պէտք էր։ Ինչ բան որ ուզում էր գտնել տանը՝ տեսնում էր—ոչինչ չը կայ, ամեն ինչ ծախած, կերած է թէ տանու պէտքական բաներից, թէ շորեղէնից։ Ու Ելիսէյն սկսեց մէկ-մէկ ձեռք բերել այն բոլոր բաները, ինչ որ պէտք էին. որն ինքն էր շինում, որը՝ փողով գնում։ Այսպէս Ելիսէյը մնաց մէկ օր, մնաց երկու օր, մնաց և երրորդ օրը։ Փոքրիկ տղէն լաւացաւ, սկսեց թախտի վրայ մտն գալ ու փաթաթուել Ելիսէյին։ Իսկ տղջկայ սիրտը բոլորովին տեղն ընկաւ. նա ուրախ-ուրախ ամեն բանում օգնում էր Ելիսէյին. շարունակ մտն էր գալիս նրա եռևից ու կանչում. «Պապի, պապի ջան»։ Պառաւն էլ վեր կացաւ տեղից, տանից դուրս ելաւ ու գնաց հարևանի մոտ։ Պատերը բռնած սկսեց մտն գալ և տղամարդը։ Պառկած մնացել էր միայն հարսը, բայց նա էլ երրորդ օրն ուշքի եկաւ և ուտել ուզեց։ «Էհ,—մտածում էր Ելիսէյը,—չէի կարծում, թէ այսքան կուշանամ. հիմի արդէն կը գնամ»։

VI.

Երրորդ օրը մօտեցաւ պատէլը։ Ելիսէյը մտածում էր ինքն իրան. «Արի սրանց հետ միասին պատս բաց անեմ, քիչ ու միչ բան առնեմ տօն օրուայ համար և երեկոյեան ճանապարհ ընկնեմ»։ Ելիսէյը նորից գնաց գիւղամէջ, կաթ, սպիտակ ալիւր ու խոզի ճարպ առաւ և և բերեց տուն։ Պառաւի հետ միասին եփեցին—թափեցին և առաւօտեան Ելիսէյը ժամ գնաց պատարագ տեսնելու, յետոյ տուն եկաւ ու պատը բաց արաւ բոլորի հետ միասին։ Այդ օրը հարսն էլ վեր կացաւ անկողնից, սկսեց քիչ-քիչ մտն գալ։ Իսկ տղամարդն ածիլեց երեսը, մաքուր շապիկ հագաւ, որ պառաւը լուացել էր, և գնաց հարուստ գիւղացու մոտ։ Այդ գիւղացու մոտ գրաւ էին դրուած թէ նրա արտն և թէ խոտատեղը. նա գնաց, որ խնդրէ, տեսնի, յետ չի՞ տայ արդեօք հարուստ գիւղացին արտն ու խոտատեղը մինչև նոր հունձը։ Երեկոյեան ախուր-տրտում տուն դարձաւ նա և դառն արտասուքով լաց եղաւ։ Յետ չէր տուել հարուստ գիւղացին. ասել էր՝ «Փողերը բեր»՝ յետոյ։

Ելիսէյը նորից մտածման մէջ ընկաւ։ «Ինչպէս ուրեմն պիտի ապրեն սրանք,— մտածում էր նա ինքն իրան,—ուրիշները կը գնան խոտ քաղելու, սրանք— չէ, խոտատեղը գրաւ է դրած։ Կորեկը կը հասնի, ուրիշները կը գնան հնձի (Աստծու տուածից ինչպէս էլ լաւ է բուսնել), իսկ սրանք պիտի նստեն ձեռները ծալած, յուսահատ, որովհետև արտ չունեն, արտը գրաւ է հարուստ գիւղացու մօտ։ Ես որ գնամ՝ սրանք նորից նեղը կընկնեն»։ Ելիսէյն սկսեց տատանուիլ ու երեկոյեան ճանապարհ չընկաւ, թողեց բանը մինչև առաւօտ։ Գնաց բակը քնելու։ Աղօթք արաւ, պառկեց տեղը, բայց չը կարողացաւ քնել—քունը չէր տանում. ինքն էլ չը գիտէր ինչ անէր—համ ուզում էր գնալ,—առանց էն էլ շատ փող էր ծախսել ու շատ ժամանակ կորցրել,—համ ցաւում էր մարդկանց վրայ։ «Ամենքին տալ, երևում է, անկարելի է։ Ուզում էի նրանց համար ջուր բերել ու մի-մի պատառ հաց տալ, բայց տես թէ բանն ուր հասաւ։ Հիմի էլ արի խոտատեղն ու արտը թափիր գրաւից։ Էդ էլ անելուց յետոյ՝ արի մի կով առ երեխաների համար, իսկ տան տիրոջ համար—մի ձի, որ խուրձերը կրէ։ Է՛, երևում է, ճամփէդ կորցրիր, Ելիսէյ Կուզմիչ ախպէր, կարպետի պոչը բաց թողիր, հիմի դու ինքդ էլ չը գիտես, թէ ինչ պիտի անես»։ Ելիսէյը վեր կացաւ, հանեց գլխատակից արխալուղը, ձեռքը տարաւ գրպանը, գտաւ քթախոտի տուփն ու սկսեց քաշել, որ ինչ է՝ մի քիչ միտքը պարզուի, խելքը գլուխը գայ, բայց ինչքան էլ մտածեց՝ ոչ մի բանի վրայ չը կարողացաւ կանգ առնել։ Համ գնալ էր ուզում, համ խղճում էր մարդկանց։ Ինքն էլ չը գիտէր, թէ ինչ անէր։ Արխալուղը ծալեց, դրեց գլխատակին ու

կրկին պառկեց։ Պառկեց, պառկեց, արդէն աքաղաղները կանչեցին, նոր միայն քունը տարաւ։ Յանկարծ մէկը կարծես զարթեցրեց նրան։ Եւ տեսնում է նա, թէ իբր բոլորովին հագնուած է, պարկը՝ ուսին, գաւազանը՝ ձեռքին և ուզում է բակի մեծ դռնից դուրս գալ, բայց դուռը բաց է այնքան միայն, որ մի մարդ հազիւ կարող է անցնել։ Աշխատում է անցնել դրանից՝ չէ կարողանում. նայում տեսնում է, որ պարկը ընկել է դռան տախտակին. ուզում է յետ անել՝ տեսնում է ոտի փաթաթանն է կպել դռանը միւս կողմից ու քանդուել։ Սկսեց նա փաթաթանը յետ անել, տեսաւ հիմա էլ ցանկապատին է կպել. լաւ նայեց և իսկոյն իմացաւ, որ ցանկապատը չէ իրան բռնողն, այլ աղջիկը. բռնել է փէշերից ու կանչում. «Պապի, պապի ջան, հաց»։ Նայեց ոտքին, զանգատանից էլ փոքրիկ տղէն է կախ ընկել, իսկ պատուհանից պառաւն ու տղամարդն են մտիկ տալիս։ Զարթեց Ելիսէյն ու ինքն իրան սկսեց խօսել. «Կը գնամ վաղը խոտատեղն ու արտը կազատեմ գրաւից, ձի կառնեմ, ալիւր կառնեմ այնքան, որ մինչև նոր հունձը բաւականանայ ու մի կով կը գնեմ երեխաների համար։ Թէ չէ կը գնաս հեռու աշխարհներ, ծովերի էն կողմը Քրիստոս գտնելու, իսկ քո մէջդ կը կորցնես նրան։ Պէտք է մարդկանց ոտքի կանգնեցնել»։ Ու Ելիսէյը քնեց մինչև առաւօտ։ Կանուխ առաւօտեան վեր կացաւ, գնաց հարուստ գիւղացու մօտ, արտն ու խոտատեղը հանեց գրաւից։ Գնաց գերանդի առաւ,—էդ էլ էր ծախուած,—ու բերեց տուն։ Տղամարդուն ուղարկեց խոտ քաղելու, իսկ ինքը գնաց գիւղամէջ. հարց ու փորձ արեց, իմացաւ, որ խանութպանի մօտ ձի և սայլ կայ ծախու. գնաց, բարիշեց ու գնեց·

գնեց նաև մի մեծ պարկ ալիւր, գցեց սայլին ու գնաց կով առնելու։ Ճանապարհին նրա առաջից գնում էին երկու կին ու իրար հետ զրոյց անում։ Թէև նրանք խօսում էին իրանց լեզուով, բայց Ելիսէյը հասկանում էր, որ նրա մասին էին խօսում։

—Մտիկ տուր, տես, առաջ նրան չը ճանաչեցին. էնպէս կարծեցին, թէ հասարակ մարդ է։ Ասում են տուն է մտել ջուր խմելու ու էնտեղ էլ մնացել, սկսել է ապրել։ Էլ ինչէր ասես չէ գնել նրանց համար. ես ինքս տեսայ, որ էսօր ձի ու սայլ առաւ օղեվաճառից։ Էդ տեսակ մարդիկ կարող են լինել աշխարհիս վրայ. զարմանք է։

Լսելով այդ խօսակցութիւնը՝ Ելիսէյը հասկացաւ, որ գովում են իրան ու էլ չը գնաց կով առնելու։ Յետ դարձաւ օղեվաճառի մօտ, փողերը տուեց, ձին լծեց ու ալիւրը տարաւ տուն։ Երբ հասաւ դռան մօտ, ձին կանգնեցրեց ու վայր իջաւ սայլից։ Տանտէրերն, երբ տեսան ձին ու սայլը, զարմացան։ Թէև հասկանում էին, որ ձին ու սայլն իրանց համար է գնել, բայց չէին համարձակվում հարցնել։ Տղամարդը դուրս եկաւ, դուռը յետ արեց։

—Ո՞րտեղից է քեզ էդ ձին, պապի։

—Գնեցի,—ասաց,—էժան պատահեց. մի քիչ խոտ քաղիր ու գիշերն առաջը գցիր։ Համ էլ ալիւրը ներս տար։

Տան տէրը ձին արձակեց, ալիւրը տարաւ ամբարը, մի խուրձ խոտ քաղեց, գցեց ձիու առաջը։ Պառկեցին քնելու։ Ելիսէյը պառկեց դուրսն ու իրիկուանից այնտեղ տարաւ նաև իր պարկը։ Գիւղում ամենքը քնեցին։ Ելիսէյը վեր կացաւ, շորերն ու ոտնամանները հագաւ, պարկն ուսեց ու ճանապարհ ընկաւ Եֆիմին հասնելու։

VII.

Ելիսէյը հեռացաւ գիւղից հինգ վերստ. լոյսն սկսեց բացուել։ Նստեց նա մի ծառի տակ, պարկը վայր առաւ ուսից ու սկսեց փողերը համարել։ Հաշուեց, տեսաւ, որ 17 մանէթ 20 կոպէկ է մնացել։ «Է՛, — մտածում է ինքն իրան,—էսքան փողով ծով ու ցամաք չի լինի անցնել, իսկ եթէ ողորմութիւն ուզելով գնամ—Աստծու անունը միշտ բերան բերելով.—վա՛յ թէ հոգուս աւելի մեղք անեմ։ Սանահէր Եֆիմը մենակ էլ տեղ կը հանի, ինձ համար էլ մոմ կը վառէ։ Իսկ իմ վզին պարտքը, երևի, կը մնայ մինչև մահ. Է՜հ, գոհանամ շուքրիմ, պարտատէրն ողորմած է, կը համբերէ»։

Ելիսէյը վեր կացաւ տեղից. պարկն ուսեց ու դարձաւ դէպի յետ։ Միայն յետ դառնալիս չանցաւ գիւղամիջով, այլ պտոյտ տուեց, որ մարդիկ չը տեսնեն նրան։ Ու շուտով Ելիսէյը տուն հասաւ։ Երբ որ առաջ էր գնում Եֆիմի հետ, ճանապարհը դժուար էր թւում, շատ անգամ զօրով էր հասնում Եֆիմի եռեւից, իսկ երբ տուն էր դառնում, Աստուած այնպիսի ոյժ էր տուել, որ իսկի չէր դադրում։ Գնում էր խաղալով-խնդալով, գաւազանը թափ տալով և օրական 70 վերստ ճանապարհ էր կտրում։

Երբ Ելիսէյը տուն հասաւ, տանեցիք արդէն վերջացրել էին դաշտի աշխատանքը. շատ ուրախացան, որ ծերունին տուն դարձաւ ու սկսեցին հարց ու փորձ անել, թէ ինչու կամ ինչպէս եղաւ որ ընկերոջից յետ ընկաւ, ինչու տեղ չը հասաւ ու տուն դարձաւ։

Ելիսէյը չուզեց պատմել նրանց ամեն բան։

—Աստուած չէր կամեցել,—փողերս ճանապարհին կորցրի ու յետ մնացի ընկերոջից։ Դրա համար էլ չը գնացի։ Թողութիւն արէք, ի սէր Աստուծոյ։

Ելիսէյը մնացած փողերը տուեց իր պառաւ կնոջն ու սկսեց հարց ու փորձ անել տնական գործերի մասին։ Տեսաւ, որ ամեն բան լաւ է. բոլոր գործերը կատարել են, պակաս-պռատ բան չեն թողել և ամենքն էլ իրար հետ սերով ու խաղաղութեամբ են ապրում։

Հէնց նոյն օրը Եֆիմի տանեցիք լսեցին Ելիսէյի գալն ու եկան հարցնելու իրանց ծերունու մասին։ Նրանց էլ նոյն բանն ասաց Ելիսէյը։

—Ձեր ծերունին,—ասաց,—շատ զօր էր գնում, մենք բաժանուեցինք իրարից ս. Պետրոսի տօնից երեք օր առաջ. ուզում էի ես եռևից հասնել, բայց արի տես, որ ճանապարհին փողերս կորցրի, էլ չը կարողացայ առաջ գնալ. ինչով գնայի. ու դրա համար էլ տուն դարձայ։

Լսողները շատ զարմացան։ «Էդ ինչպէս բան է,—մտածում էին նրանք,—խելացի մարդ է ու էդ տեսակ յիմար է վարուել, գնաց ու տեղ չը հասաւ, միայն զուր տեղը փող փչացրեց»։ Այսպէս մտածեցին ու մոռացան։ Մոռացաւ նաև Ելիսէյը։ Սկսեց տնական գործերով պարապել. որդու հետ միասին

ձմեռուայ փայտի պատրաստութիւն տեսաւ, կանանց հետ միասին հացը կալսեց, գոմ ու մարաքի կտուրները ծածկեց, մեղուներին ներս տարաւ, 10 փեթակ իրանց ձագերի հետ միասին տուեց հարևանին։ Նրա պառաւ կինն ուզում էր թագցնել, թէ ինչքան ձագ է ստացուել ծախուած փեթակներից, բայց Ելիսէյն ինքը լաւ գիտէր, թէ որոնք ձագ են տուել և որոնք—ոչ, ու հարևանին 10 փեթակի տեղ տուեց 17։ Այսպէս Ելիսէյն ամեն բան կարգ ու սարք արեց, ուղարկեց որդուն աշխատանքի, իսկ ինքը ձմեռն սկսեց արեխներ հիւսել ու կոճղեր փորել փեթակների համար։

VIII.

Ֆիմը մի ամբողջ օր, երբ Ելիսէյը մտաւ հիւանդների խրճիթը, սպասում էր ընկերին։ Նա մի քիչ առաջ գնաց ու նստեց։ Սպասեց, սպասեց, քունը տարաւ՝ քնեց։ յետոյ զարթեց, էլի նստեց սպասեց—ընկերը չը կայ ու չը կայ։ Ճանապարհին մտիկ տալով աչքերը ջուր կըտրուեցին։ Արևն արդէն անցաւ ծառերի եռևը, բայց Ելիսէյը չկար դեռ ևս։ «Չը լինի՞ թէ ժողովրդս անցկացաւ,—մտածում էր Եֆիմը,—ոտով կամ սայլով (գուցէ մէկը նստեցրեց սայլի վրայ) ու ինձ չը նկատեց քնածս ժամանակ։ Բայց անկարելի է, որ չը նկատէր։ Այս հարթ-հաւասար դաշտի մէջ մարդ հեռու է տեսնում։ Թէ յետ գնամ,—մտածում էր,—վայ թէ նա առաջ անցած լինի՝ էլ աւելի իրար կորցնենք։ Չէ, առաջ գնամ, երևի իջևանում կը հանդիպենք իրար»։ Եֆիմը հասաւ մի գիւղ ու խընդրեց գզրին, որ եթէ մի այս տեսակ ծերունի կը գայ՝ բերէ այն խրճիթը, ուր ինքը պիտի իջևանէր։ Ելիսէյը չեկաւ իջևանը։ Եֆիմը հետևեալ օրը շարունակեց ճանապարհն ու ամեն պատահողի հարցնում

էր, թէ չէ՞ տեսել արդեօք մի ճաղատ ծերունու։ Ոչ ոք չէր տեսել։ Զարմացաւ Եֆիմն ու սկսեց մենակ առաջ գնալ։ «Անշուշտ կը գտնենք իրար Օդեսայում կամ նաւի վրայ»—վճռեց իր մտքում Եֆիմն ու էլ չը մտածեց ընկերի մասին։

Ճանապարհին ընկերացաւ մի օտարաշրջիկ մարդու հետ։ Այդ երկար մազերով օտարաշրջիկը, որ թասակ ունէր ծածկած գլխին և հագին՝ վերարկու քահանայի նման, եղել էր Աֆոնի վանքում և հիմա երկրորդ անգամ գնում էր Երուսաղէմ։ Նրանք իրար պատահեցին իջևանում, խօսք խօսքի վրայ՝ սկսեցին զրուցել իրար հետ և գնացին միասին։

Յաջողութեամբ նրանք հասան Օդեսա։ Երեք օր սպասեցին նաւի։ Ուխտաւորները շատ կային. ամենքն էլ զանազան կողմերից։ Եֆիմը նորից ըսկսեց հարց ու փորձ անել Ելիսէյի մասին, բայց դուրս եկաւ, որ ոչ ոք չէր տեսել նրան։

Եֆիմը 5 մանէթ տուեց՝ արտասահմանի անցագիր առաւ։ Բառասուն մանէթ էլ տուեց՝ նաւի տոմսակ առաւ, որով նրան պէտք է տանէին ու յետ բերէին. հաց ու ձուկ առաւ ճանապարհի համար։ Նաւը բեռնեցին, ուխտաւորներին մակոյկներով տարան հանեցին նաւի վրայ։ Տարասիշը նստեց իր ուղեկից օտարականի հետ միասին։ Խարիսխը արձակեցին, հեռացան ափից ու սկսեցին գնալ բաց ծովով։ Ցերեկով նաւը յաջող էր գնում. երեկոյեան դէմ քամի բարձրացաւ, անձրև եկաւ, նաւն սկսեց օրօրուիլ. ջուրը բարձրանում ու թափվում էր տախտակամածի վրայ։ Մարդկանց սիրտն ահ ընկաւ, կանայք սկսեցին բարձր-բարձր լաց լինել, տղամարդկանցից էլ որոնք աւելի թոյլ էին, վազում էին նաւի

վրայ ու ապահով տեղ որոնում։ Եֆիմի սիրտն էլ երկիւղ ընկաւ, բայց նա գիտէր պահել իրան ու ոչինչ ցոյց չը տուեց. ինչպէս որ նաւը մտնելուց յետոյ նստել էր յատակի վրայ, Տամբովի գիւղացիների հետ միասին, այնպէս էլ նստած մնաց ամբողջ գիշերն և հետևեալ ամբողջ օրը։ Եֆիմն ու իր ուղեկիցները միայն իրանց պարկերն էին պաշտպանում և ոչինչ չէին խօսում։ Երրորդ օրը ծովը հանդարտուեց։ Հինգերորդ օրը նաւը կանգ առաւ Կ. Պոլսի գիմացը. ուխտաւորների մէջ եղան այնպիսիներ, որոնք ափ իջան, գնացին տեսնելու ս. Սոֆիայի տաճարը, որ հիմա թուրքերի ձեռքին է։ Տարասիշը չը գնաց քաղաք, մնաց նաւի վրայ, միայն սպիտակ հաց գնեց։ Մի օր կանգնեցին այնտեղ ու նորից առաջ գնացին։ Մէկ էլ կանգ առան Զմիւռնիա քաղաքի, յետոյ Ալէքսանդրիա քաղաքի առաջ և յաջողութեամբ հասան Եաֆֆա քաղաքը։ Եաֆֆայում բոլոր ուխտաւորներն իջնում են. այնտեղից 70 վերստ ոտքով գնալու ճանապարհ է մնում մինչև Երուսաղէմ։ Այստեղ էլ, նաւից դուրս գալու ժամանակ, լաւ վախեցաւ ժողովուրդը. նաւը բարձր էր և ժողովրդին բարձրից գցում էին մակոյկների մէջ, իսկ մակոյկը օրօրվում էր. քիչ էր մնում, որ ընկնողը ոչ թէ մակոյկի, այլ ջրի մէջ ընկնէր։ Երկու հոգի թրջուեցին, բայց էլի յաջողութեամբ ափ իջան։ Իջան ու ոտքով ճանապարհ ընկան։ Երրորդ օրը ճաշից քիչ առաջ հասան Երուսաղէմ։ Իջևանեցին քաղաքից դուրս, ռուսաց հիւրատանը. անցագրերը գրել տուին, ճաշեցին և օտարականի հետ գնացին սուրբ տեղերը տեսնելու։ Յարութեան տաճարը մտնելու դեռ հրաման չը կար։ Գնացին պատրիարքական վանքը, այնտեղ ժողովե-

ցին բոլոր ուխտաւորներին, նստեցրին կնիկ մարդկանց ջոկ, տղամարդկանց էլ ջոկ։ Պատուիրեցին ոտները հանել և բոլորուել։ Առաջ եկաւ մի աբեղայ՝ սրբիչը ձեռքին և սկսեց բոլորի ոտները լուանալ։ Աբեղան լուանում էր ոտները, սրբում ու յետոյ համբուրում. և այսպէս բոլորի ոտներն էլ լուաց։ Եֆիմի ոտներն ևս սրբեց ու համբուրեց։ Գնացին ժամ, աղօթք արին թէ երևկոյի և թէ առաւօտի ժամերգութեան ժամանակ, մոմ վառեցին և յիշելիք տուին ծնողների համար։ Յետոյ նրանց հաց կերցրին, գինի խմեցրին։ Առաւօտեան գնացին Մարիամ Եգիպտացու խուցը, որտեղ նա ճգնութիւն էր արել։ Կրկին մոմ վառեցին, մաղթանք կատարել տուին։ Այնտեղից գնացին Աբրահամու վանքը։ Տեսան Սաբեկայ ծառը, որտեղ Աբրահամը կամենում էր որդուն զոհ բերել Աստծուն։ Ապա գնացին այնտեղ, որտեղ Քրիստոս երևացել էր Մարիամ Մագթադենացուն. յետոյ էլ այցելեցին ս. Յակոբ Տեառնեղբօր եկեղեցին։ Ամեն բան ցոյց էր տալիս թասակ կրող օտարականն ու ամեն տեղ ասում էր, թէ որքան փող պէտք է տալ, որպէս յիշելիք։ Ճաշին վերադարձան հիւրատունը, հաց կերան։ Ճաշից յետոյ հէնց այն էր, որ ուզում էին պտուկել քնելու՝ օտարականն սկսեց ախ ու վախ քաշել, շորերը մէկ-մէկ թափ տալ ու գրպաններում բան որոնել։ «Գրպանից հանել են,— ասաց,— փողերիս քսակը. մէջը 23 մանէթ կար, երկու տասնանոց և երեք մանէթի էլ մանր փող»։ Շատ ցաւեց, ափսոսաց օտարականը, բայց ինչ կարող էր անել։ Պառկեցին քնելու։

IX.

Հասկեց քնելու ուրիշների հետ միասին նաև Եֆիմը և նրա սիրտը կասկած ընկաւ. «Օտարականի դրպանից փող ոչ ոք չէ հանել,—մտածում էր նա,—նրա մօտ, շատ կարելի է, իսկի փող էլ չը կար. ոչ մի տեղ նա փող չը տուեց. միայն ինձ էր պատուիրում տալ. իսկ ինքը չէր տալիս. բացի դրանից դեռ ինձանից էլ մի մանէթ առաւ»:

Մէկ այդպէս էր մտածում Եֆիմը, մէկ էլ ըսկըսում էր ինքն իրան յանդիմանել. «Ի՞նչ իմ բանն է,—մտածում էր,—դատ ու դատաստան անել մարդուն. հոգուս մեղք եմ անում: Չէ, էլ չեմ մտածի»: Բայց հէնց որ մի քիչ բունը տանում, մոռանում էր, էլի նորից սկսում էր յիշել, թէ ինչպէս օտարականն աչքը գցում էր տեսած փողին, թէ փող կորցնողը նրա նման չի խօսի: «Ով գիտէ, իսկի փող էլ չէ ունեցել,—մտածում էր Եֆիմը,—մարդկանց աչքին թոզ է փչում միայն»:

Երեկոյեան դէպ վեր կացան և գնացին Իրիկուայ պատարագ տեսնելու Յարութեան տաճարում,

ուր Քրիստոսի գերեզմանն է: Օտարականը չէր հեռանում Եֆիմից ու ման էր գալիս նրա հետ միասին: Հասան տաճարը: Օտարականը—ուխտաւորների մեծ բազմութիւն էր հաւաքուել ամեն ազգից ու ցեղից—ռուսներ, յոյներ, հայեր, սիրիացիք և էլի ուրիշ շատ ազգեր: Ժողովրդի հետ միասին Եֆիմը կանգնած էր սուրբ դռների առաջ: Մի աբեղայ անց կացրեց նրանց: Անց կացրեց թուրք պահապան-զինուորների մօտից և տարաւ այնտեղ, ուր Քրիստոսին խաչից վայր էին բերել ու օծել և ուր 9 մեծ աշտանակներ են վառվում: Աբեղան ամեն բան ցոյց էր տալիս ու պատմում: Այնտեղ Եֆիմը մոմ վառեց: Յետոյ աբեղաները տարան Եֆիմին աջ կողմը, աստիճաններով դէպի վեր, դէպի Գողգոթա, այսինքն այն տեղը, ուր Քրիստոսի խաչն էր կանգնած: Եֆիմն այնտեղ աղօթք արեց: Յետոյ Եֆիմին ցոյց տուին այն ճեղքուածքը, ուր երկիրը բացուել էր մինչև դժոխքի անդունդը. յետոյ ցոյց տուին այն տեղը, որտեղ Քրիստոսի ոտներն ու ձեռները մեխել էին խաչին. յետոյ ցոյց տուին Ադամի գերեզմանը, որտեղ Քրիստոսի արիւնը թափուել էր նրա ոսկրների վրայ: Ապա եկան մի քարի մօտ, որի վրայ նստել էր Քրիստոս, երբ նրա գլխին փշեայ պսակ էին դնում. յետոյ տարան այն սիւնի մօտ, որից կապել էին Քրիստոսին այն ժամանակ, երբ ծեծում էին նրան: Յետոյ Եֆիմը տեսաւ մի քար, որի վրայ երկու ծակ կար—Քրիստոսի ոտների համար: Էլի ուզում էին ինչ որ բան ցոյց տալ, բայց ժողովուրդը շատացաւ. ամենքը գնում էին դէպի Քրիստոսի գերեզմանի այրը: Այնտեղ ուրիշների պատարագը վեր-

ջացել էր, սկսուել էր յունադաւանների մեջ։ Եֆիմը ժողովրդի հետ միասին գնաց դէպի այրը։

Եֆիմն ուզում էր մի կերպ հեռանալ օտարականից—մաքուր շարունակ նա մեղք էր գործում ու մեղադրում օտարականին,—բայց օտարականը նրանից չէր հեռանում և նրա հետ էլ գնաց պատարագին, որ պիտի լինէր Յարութեան տաճարում։ Նրանք ուզում էին սեղանին աւելի մօտ կանգնել, բայց չը հասան։ Ժողովուրդն այնպէս սեղմուած կանգնած էր, որ ոչ առաջ կարելի էր անցնել, ոչ յետ դառնալ։ Կանգնել է Եֆիմը, նայում է սեղանին, ազօթք անում, բայց մէկ-մէկ էլ գրպանին է ձեռք տալիս, որ տեսնի, թէ փողերը տեղն են։ Երկու բան էր անցնում նրա մտքից. առաջինը՝ նա մտածում էր, թէ օտարականը խաբում է նրան, իսկ երկրորդը՝ որ եթէ չէ խաբում ու ճշմարիտ որ փողերը գողացել են, ուրեմն ինչպէս անէ, որ նոյն բանն իրան էլ չը պատահի։

X.

Եֆիմը կանգնած աղօթք է անում, նայում առաջ, դէպի մատուռը, ուր Քրիստոսի դերեզմանն է և ուր ուղիղ դերեզմանի վրայ 36 կանթեղ է վառվում։ Նայում է Եֆիմն ուրիշների գլխների վրայից և—այ քեզ հրաշք—ինչ է տեսնում։ Կանթեղների տակ, ուղիղ այնտեղ, ուր կենարար հուրն է վառվում, ամենքից առաջ կանգնած է մի ծերունի. արխալուխն հագին ու տրկլոր գլուխն ամբողջովին փայլում է, իսկ և իսկ Ելիսէյ Բոգրովի պէս։ «Նման է,—մտածում է Եֆիմը,—Ելիսէյին. բայց ինչպէս կարող է նա լինել։ անկարելի է, որ ինձանից առաջ հասնէր։ Նաւը մեր գալուց մի շաբաթ առաջ էր գնացել. չէր կարող նա ինձանից առաջ անցնել։ Մեր նաւի վրայ էլ չը կարես բոլոր ուխտաւորներին տեսայ»։

Հէնց այդ էր մտածում Եֆիմը, որ ծերունին սկսեց աղօթք անել և երեք անգամ խոր գլուխ տուեց. մէկ՝ դէպի առաջ, Աստծուն և յետոյ՝ աջ ու ձախ կողմը՝ քրիստոնեայ աշխարհին։ Եւ երբ ծերունին գլուխը դարձրեց դէպի աջ՝ Եֆիմն իսկոյն

ճանաչեց նրան։ Ինքը Բոդրովն է, որ կայ. նրա սև, խուճուճ մօրուքն է, նրա սպիտակ մազերն են թշերի վրայ, նրա յօնքերը, նրա աչքերը, քիթը և ամբողջ երեսը։ Հէնց ինքն է, Ելիսէյ Բոդրովը։

Եֆիմն ուրախացաւ, որ գտաւ ընկերոջը, միայն զարմացաւ, թէ ինչպէս է պատահել, որ Ելիսէյն իրանից առաջ է հասել։ «Այ զօչաղ Բոդրով,—մտածում էր Եֆիմը,—տես թէ ինչպէս առաջ է անցել։ Երևի, ընկերացել է այնպիսի մարդու հետ, որ նրան անց է կացրել։ Արի դուրս գալու ժամանակ գտնեմ նրան, իմ թատակաւոր օտարականին թողնեմ ու նրա հետ սկսեմ ման գալ. կարելի է նա ինձ էլ առաջ անցկացնէ»։

Ու Եֆիմը շարունակ մտիկ էր տալիս, որ աչքից բաց չը թողնի Ելիսէյին։ Բայց երբ պատարագը վերջացաւ՝ ժողովուրդը շարժուեց, մարդիկ զբոնացին համբուրելու, խառնուեցին իրար ու Եֆիմին մի կողմ քշեցին։ Կրկին նրա սիրան երկիւղ ընկաւ. չը լինի թէ,—մտածում էր,—փոդիս քսակը հանեն։ Եֆիմը ձեռքով հուպ տուեց քսակն ու ժողովուրդը ճեղքելով աշխատում էր ազատ տեղ դուրս գալ։ Դուրս եկաւ ազատ տեղ ու սկսեց ման գալ և փնտռել Ելիսէյին թէ դուրսը և թէ տաճարում։ Տաճարում խուցերի մէջ շատ մարդիկ կային. նրանք այնտեղ էլ ուտում, գինի խմում, քնում ու կարդում էին։ Ոչ մի տեղ չը կար Ելիսէյը։ Եֆիմը վերադարձաւ հիւրատունը—չը գտաւ ընկերոջը։ Այդ երեկոյ օտարականը չեկաւ. կորաւ և մէկ մանէթն էլ չը տուեց։ Եֆիմը մնաց մենակ։

Հետևեալ օրն Եֆիմը նորից գնաց տաճար տամբովցի մի ծերունու հետ, որին առաջին անգամ հանդիպել էր նաւի վրայ։ Ուզում էր նորից առաջ անցնել, բայց էլի յետ քշեցին. նա կանգնեց սիւնի մօտ և սկսեց աղօթք անել։ Նայեց առաջ՝ տեսնում է, որ կանթեղների տակ, ուղիղ Քրիստոսի դերեզմանի մօտ, առաջին տեղում կանգնած է Ելիսէյը, ձեռքերը տարածած, ինչպէս քահանան սեղանի առաջ, ու տկլոր գլուխը փայլում է ամբողջովին։ «Է՛, հիմի,—մտածում է Եֆիմը,—էլ բաց չեմ թողնի նրան»։ Նա սկսեց առաջ անցնել։ Անցաւ, տեսաւ չը կայ Ելիսէյը։ Երևի գնացել է։ Եւ երրորդ օրը նորից տեսաւ նա Ելիսէյին Քրիստոսի դերեզմանի մօտ ամենից աւելի սուրբ տեղում, բազմութեան առաջ կանգնած. ձեռները տարածել էր նա ու վեր էր նայում, կարծես մի բան էր տեսնում իր գլխի վրայ։ Եւ նորից նրա ճաղատ գլուխը փայլում էր ամբողջովին։ «Է՛,—մտածում է Եֆիմը,—հիմի արդէն ձեռքիցս բաց չեմ թողնի, գնամ դռանը կանգնեմ։ Այնտեղ կը գտնենք իրար»։ Եֆիմը դուրս եկաւ տաճարից, կանգնեց դռանը, կանգնեց համարեա կէսօր, ամբողջ ժողովուրդը դուրս եկաւ—Ելիսէյը չը կար։

Եֆիմը վեց շաբաթ մնաց Երուսաղէմում ու ամեն տեղ գնաց, ամեն ինչ տեսաւ. գնաց Բեթղեհէմ, Բեթանիա, Յորդանան, Քրիստոսի դերեզմանի մօտ նոր շապկի վրայ կնիք խփել տուեց, որ նրանով էլ թաղուի. Յորդանանից ջուր վերցրեց փոքրիկ սրուակով, հող վերցրեց, մոմ առաւ կենարար հրով, ուխտ տեղ յիշելիք գրել տուեց, բոլոր փողերը ծախսեց ու իր մօտ թողեց այնքան, որ հազիւ մնացածով կարող էր տուն հասնել։ Ու Եֆիմը ճանապարհ ընկաւ դէպի տուն։ Եկաւ Եաֆֆա, նաւ նստեց, հասաւ Օդեսսա ու ոտքով սկսեց գնալ դէպի տուն։

դէմ Եֆիմը մօտենում էր այն գիւղին, ուր անցած տարի Ելիսէյն յետ էր մնացել։ Հէնց որ մտաւ գիւղը՝ խրճթի եռևից սպիտակ շապիկով դուրս թռաւ մի աղջիկ ու մօտեցաւ Եֆիմին։—«Պապի, պապի, արի մեր տունն»։

Եֆիմն ուզում էր առաջ անցնել, բայց աղջիկը չէր թողնում, բռնել էր վիշից, քաշում էր դէպի տունն ու ձիծաղում։ Տանից դուրս եկաւ մի կին տղայի հետ միասին ու նոյնպէս սկսեց կանչել.—

—Արի, պապի, արի հաց կեր, գիշերը մեզ մօտ անցկացրու։

Եֆիմը մտաւ տուն։ «Համ գիշերը կը մնամ, համ էլ,—մտածում էր նա,—Ելիսէյի մասին կը հարցնեմ. թէ չեմ սխալվում, հէնց այս խրճիթը մտաւ նա ջուր խմելու»։

Երբ որ Եֆիմը ներս մտաւ տուն՝ տանտիկինը վեր առաւ պարկը նրա ուսից, ջուր տուեց լուացուելու և նստեցրեց սեղանի մօտ։ Կաթ, կարկանդակ ու խաշիլ բերեց, դրեց սեղանի վրայ։ Տարաւսիչը շնորհակալութիւն յայտնեց ու գովեց նրանց, որ օտարականներին այդպէս պատուում են։ Կինը թափ տուեց գլուխը։

—Մենք չենք կարող,—ասաց,—օտարականներին չը պատուել։ Օտարականի երեսից ենք մենք կեանք տեսել ու կեանքը ճանաչել։ Առաջ որ ապրում էինք, Աստծուն չէինք յիշում, մոռացել էինք. Աստուած էլ մեզ պատժեց. պատժեց այնպէս, որ ամենքս էլ մահուան դուռն հասանք։ Անցած տարի բանն էնտեղ հասաւ, որ բոլորս էլ պառկեցինք, համ քաղցած էինք, համ հիւանդ։ Ու կը մեռնէինք անպատճառ, թէ որ Աստուած չուղարկէր քեզ նման մի



XI.

Եֆիմը գնում էր էլի էն ճանապարհով, որով եկել էր։ Երբ սկսեց մօտենալ տանը, նորից հոգսը պաշարեց նրան. նա շարունակ մտածում էր, թէ արդեօք ինչպէս են տանեցիք, ինչ են անում առանց իրան։ «Մի տարուայ մէջ,—մտածում էր նա,—կամրջի տակով շատ ջուր կանցնի։ Ամբողջ կեանք ես գործ գնում, հաւաքում ես, հաւաքում, մի տուն հազիւ ես կարողանում սարք ու կարգ անել, իսկ տունն աւերելու համար շատ ժամանակ պէտք չէ. շինելը դժուար է, քանդելը՝ հեշտ։ Արդեօք որդիս ինչպէս է կառավարում գործերն առանց ինձ. գարունն ուշ եկաւ, թէ շուտ. անասուններն ինչպէս անցկացրին ձմեռը. արդեօք ինչպէս վերջացրին տան շինութիւնը»։ Եֆիմը հասաւ այն գիւղը, որտեղ անցած տարի բաժանուել էր Ելիսէյից։ Ժողովրդին ճանաչել չէր լինում։ Ուր որ անցած տարի ժողովուրդը նեղ օրեր էր քաշում, այս տարի ամենքն էլ լաւ էին ապրում։ Հացը լաւ էր եկել։ Ժողովուրդը դրստուել էր ու առաջուայ ցաւը մոռացել։ Իրիկուան

ծերունի։ Կէսօրին նա մեր տունը մտաւ ջուր խմելու, բայց երբ որ մեզ տեսաւ, խղճաց ու մնաց մեզ մօտ։ Համ կերցրեց, համ խմցրեց, համ տաքի կանգնեցրեց, համ վար ու ցանքի տեղերս գրուցց թափեց, համ ձի ու սայլ առաւ, թողեց մեզ մօտ ու գնաց։

Ներս մտաւ մի պառաւ կին, պատմողի խօսքը կարեց։—Մենք էլ չը գիտենք,—ասաց նա,—մարդ էր թէ Աստծու հրեշտակ։ Ամենքին սիրում էր, ամենքի վրայ ցաւում. գնաց ու անունն անդամ չասաց, որ իմանայինք, թէ ում համար պիտի աղօթք անենք Աստծուն։ Էսօրուայ պէս միտքս է. ես պառկած էի ու մտնուան էի սպասում. տեսնեմ, մի ծերուկ ներս մտաւ, հասարակ մի մարդ, գլուխը ակլոր, ուզում էր ջուր խմել։ Դեռ իմ մտքովս էլ,—վայ հոգուս,—անցաւ, թէ ով է, ինչ մարդ է, ինչու է մտնում ուրիշի տները։ Իսկ նա տես թէ ինչ արաւ։ Հէնց որ մեզ տեսաւ, իսկոյն պարկը վայր առաւ ուսից, դրեց այ էստեղ ու բերանը քանդեց։

Խօսքի մէջ խառնուեց և մի փոքր աղջիկ։

—Չէ,—ասաց,—տատի, նա պարկն առաջ էստեղ, տան մէջտեղը դրեց, յետոյ վերցրեց ու դրեց սեղանին։

Եւ նրանք սկսեցին վիճել իրար հետ ու նրա բոլոր խօսքերն և գործերը յիշել, թէ որտեղ էր նստում, որտեղ քնում, ինչ էր անում և թէ ում ինչ խօսք ասաց։

Գիշերուան դէմ ձիով տուն դարձաւ և տան տղամարդը. նա էլ սկսեց պատմել Ելիսէյի մասին, թէ նա ինչ էր անում իրանց մօտ։—Թէ որ նա մեզ մօտ չը գար,—ասաց նա,—մենք բոլորս մեղքի մէջ կո-

րած կը մեռնէինք։ Մենք մեռնում էինք յուսահատութեան մէջ, Աստծու ու մարդկանց վրայ տրտնջալով։ Իսկ նա մեզ ոտքի կանգնեցրեց և նրանով մենք Աստուած ճանաչեցինք ու հաւատացինք, որ բարի մարդիկ էլ կան աշխարհիս վրայ։ Թող Աստուած օգնական ու պահապան լինի նրան։ Առաջ մենք անասունների պէս էինք ապրում, նա մեզ մարդ դարձրեց։

Տանտէրերը կերցրին, խմցրին Եֆիմին, տեղաշոր գցեցին, որ քնի ու իրանք էլ պառկեցին։

Եֆիմը պառկել էր և քունը չէր առնում. գլխի մէջ շարունակ Ելիսէյն էր պտոյտ գալիս. միտքն էր բերում, թէ ինչպէս ինքն երեք անդամ տեսաւ նրան Երուսաղէմում, Յարութեան տաճարի մէջ, ուղիղ սեղանի առաջ։

«Մէյ թէ որտեղ է նա առաջ անցել ինձանից,—մտածում էր Եֆիմը։ Իմ ուխտս ու չարչարանքս ընդունել է, թէ չէ ընդունել Աստուած, յայտնի չէ, իսկ նրանն արդէն ընդունել է»։

Առաւօտեան տանտէրերը ճանապարհ գցեցին Եֆիմին. շատ կարկանդակ դրին նրա պարկի մէջ, իբրև պաշար, ու իրանք գնացին աշխատանքի, իսկ Եֆիմը բռնեց տան ճանապարհը։

—Բարով, բարով, սանսոնէր,—ասաց,—բարով ես եկել. ինչպէս գնացիր, լաւ գնացիր։

Եֆիմ Տարասիչը կանգ առաւ։

—Փառք Աստծու,—ասաց նա,—գնացի. քո ծերուկիդ կորցրի ճանապարհին, միայն այստեղ լսեցի, որ տուն է դարձել. հա։

Եւ պառաւն սկսեց խօսել,—խիստ սիրում էր նա զրոյց անել։—Դարձել է,—ասաց նա,—քեզ մատաղ, վաղուց է դարձել։ Աստուածածնայ տօնից յետոյ էր, կարծեմ։ Եւ ինչպէս ուրախացանք մենք, գիտես, որ Աստուած նրան նորից տուն ուղարկեց։ Մեր կեանքը տխուր է առանց նրան։ Աշխատանքի համար չեմ ասում. նա ինչ աշխատող է հիմա, տարիքն անցել են. բայց ինչ էլ որ լինի, տան գլուխ է և մենք ուրախ ենք, երբ որ նա տանն է։ Հապա տղէս ինչպէս ուրախացաւ։ Աշխարքի լոյսն,—ասում է,—նա է ինձ համար. առանց նրան կարծես խաւար են իմ աչքերս։ Հա, երբ որ նա մեզ մօտ չէ, տխուր են անցնում օրերը։ Մենք սիրում ենք նրան, էնպէս որ էլ չեմ կարող ասել։

—Լաւ, իսկ հիմա տա՞նն է նա։

—Տանն է, հոգիս, տանն է, մեղուանոցում, ձագ է հաւաքում։ Շատ լաւ ձագի տարի է, ասում է։ Ճանճն էնպէս է զօրացել, որ ծերուկն իսկի չէ յիշում, թէ էսպէս տարի եղած լինի։ Մեր մեղքերին չէ նայել Աստուած ու տուել է, ասում է։ Ներս արի, մատաղ, գիտե՞ս ինչպէս կուրախանայ ծերուկը։

Եֆիմը մտաւ հաշտը, այնտեղից անցաւ բակն ու գնաց մեղուանոցը Ելիսէյին տեսնելու։ Երբ մտաւ մեղուանոց, տեսաւ, որ Ելիսէյը կանգնած է առանց երեսակալի, առանց թաթմանների, մոխրագոյն արխալու-

—Բարով, բարով, սանսոնէր,—ասաց,—բարով ես եկել. ինչպէս գնացիր, լաւ գնացիր։

Եֆիմ Տարասիչը կանգ առաւ։

—Փառք Աստծու,—ասաց նա,—գնացի. քո ծերուկիդ կորցրի ճանապարհին, միայն այստեղ լսեցի, որ տուն է դարձել. հա։

Եւ պառաւն սկսեց խօսել,—խիստ սիրում էր նա զրոյց անել։—Դարձել է,—ասաց նա,—քեզ մատաղ, վաղուց է դարձել։ Աստուածածնայ տօնից յետոյ էր, կարծեմ։ Եւ ինչպէս ուրախացանք մենք, գիտես, որ Աստուած նրան նորից տուն ուղարկեց։ Մեր կեանքը տխուր է առանց նրան։ Աշխատանքի համար չեմ ասում. նա ինչ աշխատող է հիմա, տարիքն անցել են. բայց ինչ էլ որ լինի, տան գլուխ է և մենք ուրախ ենք, երբ որ նա տանն է։ Հապա տղէս ինչպէս ուրախացաւ։ Աշխարքի լոյսն,—ասում է,—նա է ինձ համար. առանց նրան կարծես խաւար են իմ աչքերս։ Հա, երբ որ նա մեզ մօտ չէ, տխուր են անցնում օրերը։ Մենք սիրում ենք նրան, էնպէս որ էլ չեմ կարող ասել։

—Լաւ, իսկ հիմա տա՞նն է նա։

—Տանն է, հոգիս, տանն է, մեղուանոցում, ձագ է հաւաքում։ Շատ լաւ ձագի տարի է, ասում է։ Ճանճն էնպէս է զօրացել, որ ծերուկն իսկի չէ յիշում, թէ էսպէս տարի եղած լինի։ Մեր մեղքերին չէ նայել Աստուած ու տուել է, ասում է։ Ներս արի, մատաղ, գիտե՞ս ինչպէս կուրախանայ ծերուկը։

Եֆիմը մտաւ հաշտը, այնտեղից անցաւ բակն ու գնաց մեղուանոցը Ելիսէյին տեսնելու։ Երբ մտաւ մեղուանոց, տեսաւ, որ Ելիսէյը կանգնած է առանց երեսակալի, առանց թաթմանների, մոխրագոյն արխալու-

XII.

Եֆիմը ճանապարհորդեց մի ամբողջ տարի ու գարնանը վերադարձաւ տուն։

Երեկոյ էր, երբ տուն հասաւ։ Որդին տանը չէր. գիւղատուն էր գնացել։ Տուն եկաւ հարբած։ Եֆիմն սկսեց հարց ու փորձ անել նրան։ Ամեն բանից երևում էր, որ առանց հօրը՝ որդին, կապը կտրածի նման, ինչ ասես արել էր։ Բոլոր փողերը վատնել ու գործերը թողել էր երեսի վրայ։ Հայրն սկսեց յանդիմանել նրան, իսկ որդին կոպիտ պատասխաններ տալ։

—Դու ինքդ թող մնայիր,—ասաց նա,—ու քո ձեռքովդ անէիր, ինչ որ ուզում էիր. թէ չէ՝ դու ինքդ գնացիր ման գալու, բոլոր փողերը հեռդ տարար ու հիմա ինձանից ես ուզում։

Ծերունին բարկացաւ ու ծեծեց որդուն։

Եֆիմ Տարասիչն առաւօտեան տանից դուրս եկաւ, որ գնայ գիւղական տանուտէրի մօտ որդու մասին խօսելու. նա անցնում էր Ելիսէյի դռան առաջից։ Այնտեղ կանգնած էր Ելիսէյի կինը. երբ նա տեսաւ Եֆիմին, բարևեց։

ղով, կեչի ծառի տակ. ձեռները տարածել է ու վեր է նայում, իսկ տակը գլուխը փայլում էր ամբողջովին։ Կանգնած էր նա այնպես, ինչպես Երուսաղեմում Քրիստոսի գերեզմանի մոտ, իսկ նրա գլխավերևում, ինչպես Երուսաղեմում, ծառի ճիւղերի միջից բոց կրակի նման վառվում, խաղում էր արևը, և նրա գլխի շուրջը ոսկեգոյն մեղուները պար էին կազմել ու պոռյա-պոռյա էին անում, բայց չէին խայթում նրան։ Եֆիմը կանգ առաւ։

Ելիսեյի պառաւը ձայն տուեց մարդուն։

—Սանահէրն եկել է,— ասաց։

Յետ նայեց Ելիսեյն, ուրախացաւ, սկսեց մօտենալ սանահօրն ու զգուշութեամբ մօրուքի միջից հանել մեղուներին։

—Բարով, սանահէր, բարով, հոգի ջան, լաւ գնացիր։

—Ոտներս գնացին, հա. քեզ համար ջուր եմ բերել Յորդանան գետից. կը գաս մեր տուն՝ կը տանես, բայց ընդունելի է Աստուած ուխտս..

—Է՜հ, փառք Աստծու, փառք Աստծու։

Եֆիմը լռեց մի րոպէ։

—Ոտներով գնացի, հա, բայց հոգով էս էի այնտեղ, թէ մէկ ուրիշը...

—Աստծու բանն է, սանահէր, Աստծու բանն է։

—Յետ գառնալիս մտայ ես նոյնպէս էն խրբճիթը, որտեղ դու յետ ընկար ինձանից...

Ելիսեյը վախեցաւ. սկսեց շտապել։

—Աստծու բանն է, սանահէր, Աստծու բանն է։ Տուն մտնենք, մի քիչ նստենք, մեղր բերեմ, անուշ արա։

Եւ Ելիսեյը խօսքը փոխեց ու սկսեց խօսել տրնական գործերի մասին։

Հոգոց քաշեց Եֆիմն ու այլ ևս չը պատմեց Ելիսեյին խրճթի մարդկանց մասին և թէ տեսել էր նրան Երուսաղեմում։ Ու հասկացաւ Եֆիմը, որ Աստուած հրամայել է ամեն մարդու իր պարտքը տալ և ուխտը կատարել աշխարհի ու մարդկանց մէջ—սիրով և բարի գործերով։

ՇԱՏ ՀՈՂ Է ԱՐԴԵՕՔ ՀԱՐԿԱՒՈՐ ՄԱՐԴՈՒՆ

I.

Մեծ քոյրը հիւր եկաւ քաղաքից գիւղ՝ փոքր քրոջ մօտ։ Մեծը քաղաքում ամուսնացած էր վաճառականի հետ, իսկ փոքրը՝ գիւղում գիւղացու հետ։ Քոյրերը թէյ էին խմում ու զրոյց անում։ Մեծ քոյրն սկսեց պարծենալ ու գովել իր քաղաքային կեանքը։ Նա պարծենում էր, թէ ինչպէս ինքը ընդարձակ բնակարանում է ապրում, ինչպէս մաքուր է հագնվում ու ման գալիս, ինչպէս որդկերանցը զուգում-զարդարում է, ինչպէս անուշ-անուշ ուտում է ու խմում, ինչպէս զբօսանքներ ու թատրոններ է գնում։

Մեծ քրոջ խօսքերը դիպան փոքրի սրտին ու նա սկսեց փնովել վաճառականների կեանքն ու գովել գիւղացունը։

—Ես իմ կեանքը չեմ փոխի քոնի հետ,—ասաց նա։ Ինչ անենք, որ աղքատավարի ենք ապրում, գոնէ ահ չունենք սրտերումս։ Դուք թէկուզ աւելի լաւ էք ապրում, բայց մի օր շատ էք դատում, միւս օրը՝ դատածն էլ կորցնում. հէնց առածն էլ այդպէս է ասում—օգուտն ու վնասն իրար ախպէր են։ Ինչ-

պէս էլ է լինում, որ էսօր հարուստ ես, վաղը ուրիշների դռներն ընկած ողորմութիւն ես խնդրում։ Իսկ մեր գիւղականի բանն աւելի հաստատ է. գիւղացու փորն, ուղիղ է, նուազ է, բայց հացն անպակաս է։ Հարուստ չենք, բայց կուշտ ենք։

—Էդ ինչ կշտութիւն է,—վրայ բերեց մեծ քոյրը,—որ ապրում էք խոզերի ու հորթերի հետ։ Ոչ ոներիդ մէջ զարդ ու զարդարանք կայ, ոչ մարդու հետ վարուելու ձևը գիտէք։ Ինչքան էլ որ քոմարդն աշխատի, էլի էն էք ու էն. աղբի մէջ ապրում էք, աղբի մէջ էլ կը մեռնէք. ձեր որդիքն էլ ձեզանից հեռու չեն գնայ։

—Ի՞նչ անենք,—պատասխանեց փոքր քոյրը,—մեր բանն էդպէս է. բայց դրա տեղակ մեր գործը հաստատ է. ոչ ոքի գլուխ չենք ծռում, ոչ ոքից չենք վախենում։ Իսկ դուք բոլորդ էլ քաղաքում աչք շլացնող ու խաբուսիկ բաների մէջ էք ապրում. էսօր լաւ էք, վաղը, մէկ էլ տեսար, սատանէն մարդուդ փորը մտաւ, ու նա սկսեց կամ խմել, կամ թուղթ խաղալ, կամ որև է գեղեցկուհու ետևից քաշ դալ։ Ու ամեն ինչ տակն ու վրայ է լինում։ Հը, ասա, չէ՞ պատահում։

Տան տղամարդը՝ Պախոմը՝ վառարանի վրայ պառկել ու տկանջ էր գնում, ինչ որ կանայք խօսում էին։

—Ուղիղ է,—ասաց նա,—շատ ուղիղ, շատ ճըշմարիտ. մեր գիւղականը որ մանկութիւնից սովորում է հողի վրայ դարձնել իր ուշքն ու միտքը, էլ յիմար բաներ նրա գլուխը չեն գալիս։ Մի ցաւ ունենք մենք—հողը քիչ է։ Թէ որ հողը շատ լինէր, ես էլ ոչ ոքից, թէկուզ սատանայից, չէի վախենայ։

Կանայք թէյը խմեցին, վերջացրին, էլի մի քիչ զրույց արին շորի ու զուգսի մասին, հաւաքեցին ամանեղէնն ու պառկեցին քնելու։

Իսկ սատանէն նստած էր վառարանի ետևն ու ամեն բան լսում էր։ Նա ուրախացաւ, որ գիւղացու կինն առիթ տուեց մարդուն պարծենալու։

—Մեծ-մեծ բրդում է,—մտածում էր սատանան,—ասում է, թէ հող շատ ունենամ՝ սատանէն էլ ոչինչ չի կարող անել ինձ։ Լաւ, շատ լաւ. մենք կը վիճենք իրար հետ. ես քեզ հող շատ կը տամ, հողով էլ կը յաղթեմ։

II.

Գիւղից քիչ հեռու կենում էր մի տիկին, ոչ էնքան շատ հարուստներից։ Նա 120 դեսեատին հող ունէր։ Առաջ գիւղացիների հետ նա հաշտ ու բարիշ էր ապրում—ոչ ոքի չէր նեղացնում։ Բայց երբ նրա մօտ գործակատար մտաւ ծառայութիւնից հեռացած մի զինուոր, սկսեց գիւղացիների հողին հանել տուգանքներով։ Ինչքան որ զգուշանում էր Պախօմը, էլի չէր լինում,—կամ ձին էր մտնում տիկնոջ վարսակի մէջ, կամ կովն էր անցկենում այգին, կամ թէ չէ՝ հորթերն էին փախչում դէպի նրա մարգերը. ու ամեն բանի համար Պախօմն ստիպուած էր տուգանք վճարել։

Պախօմը վճարում էր և հայհոյում, ծեծում տանեցիներին։ Այսպէս շատ մեղք բարձեց նա իր հոգու վրայ մի ամառուայ մէջ։ Երբ ձմեռը վրայ հասաւ՝ նա մինչև անգամ ուրախացաւ, անասունները պէտք է տանը մնան. թէև ափսոսում էր խոտ ու դարմանին, բայց գոնէ ահ ու դողից ազատ կը լինէր։

Ձմեռը լուր տարածուեց, թէ տիկինը ծախում է հողը և թէ հողը գնել է ուզում մեծ ճանապարհի վրայ իջևան պահողը։ Լսեցին այս բանը գիւղացիք ու սրտերի մէջ դող ընկաւ. «Է՛,—մտածեցին նրանք,—իջևանատէրը կառնի հողն ու տիկնոջից աւելի վատ կը սկսէ չարչարել մեզ տուգանքներով. մենք առանց էդ հողի չենք կարող ապրել. չորս կողմից նա մեզ փաթաթել է»։

Գիւղացիները գնացին տիկնոջ մօտ գիւղ-գիւղովի ու խնդրեցին, որ հողը չը ծախէ իջևանատիրոջը, այլ տայ իրանց։ Խոստացան աւելի թանգ գին վճարել։ Տիկինը համաձայնեց։ Գիւղացիներն սկսեցին խօսել իրար մէջ, որ բոլոր հողը գնեն միասին, ամբողջ հասարակութեամբ։ Հաւաքուեցին մէկ անգամ, հաւաքուեցին ուրիշ անգամ—բան դուրս չեկաւ։ Զար սատանէն մէջ էր ընկնում, իրար զցում ու նրանք ոչ մի կերպ չէին կարողանում համաձայնել միմեանց հետ։ Գիւղացիները վճռեցին առանձին-առանձին գնել, ով ինչքան կը կարողանայ։ Տիկինը դրան էլ կամք տուեց։ Պախօմը լսեց, որ իր հարևանը 20 դեսեատին հող է առել տիկնոջից ու տիկինը համաձայնել է փողի գէսը մաս-մաս, տարէց-տարի ստանալ։ Նրա նախանձը շարժուեց։ «Ամբողջ հողը կը գնեն,—մտածում էր նա,—ես գառն գատարկ կը մնամ»։ Սկսեց խորհուրդ անել կնոջ հետ։—«Ուրիշները գնում են,—ասաց,—պէտք է մենք էլ գոնէ տասը դեսեատին գնենք. թէ չէ՝ անկարելի է ապրել. գործակատարը հոգիս բերանս բերեց իր տուգանքներով»։

Սկսեցին մտածել, թէ ինչպէս գնեն։ Նրանք հարիւր մանէթ ունէին յետ զցած, դրա հետ միա-

սին ծախեցին մի քուռակ, փեթակների կէսը, որ-դուն մշակ տուին մէկի մօտ, մի քիչ փոխ առան քենակալից ու մի կերպ դրատեցին հարկաւոր գու-մարի կէսը։

Պախօմը հաւաքեց փողերը, ընտրեց սրտի ու-զած հողը,—15 դեսեատին փոքրիկ անտառի հետ միասին,— ու գնաց տիկնոջ մօտ գինը բարիշելու։ Բա-րիշեց 15 դեսեատինի գինը, ձեռք ձեռքի խփեց տիկնոջ հետ ու տուեց գրաւականը։ Յետոյ գնացին քաղաք, գրել տուին հաստատման թուղթը։ Պախօմը տուեց փողերի կէսը, իսկ միւս կէսը խոստացաւ տալ երկու տարուայ մէջ։

Ու Պախօմն ունեցաւ իր սեփական հողը։ Նա սերմ փոխ առաւ ուրիշներից, ցանեց նոր առած հողը, լաւ բերք ստացաւ ու մի տարուայ մէջ տուեց թէ տիկնոջ և թէ քենակալի պարտքը։ Եւ այսպէս Պա-խօմը դարձաւ կալուածատէր—նա իր հողն էր վա-րում ու ցանում, իր հողի վրայ խոտ հարում, իր հողից ցցեր կտրում ու իր հողում անտա-ռուններին կերակրում։ Երբ որ Պախօմը գուրս էր գալիս իր յաւիտենական հողը վարելու կամ գնում էր նոր ծլած արտերն ու մարգագետինը տեսնելու,— էլ նրա ուրախութեանը չափ չը կար։ Թուում էր, թէ բոլորովին ուրիշ տեսակ խոտեր ու ծաղիկներ են բուսնում նրա հողի վրայ։ Նրան առաջ էլ շատ էր պատահել անցնել այդ հողով. այն ժամանակ ոչինչ չէր նկատում, հող էր, ինչպէս որ հողը պիտի լինի, իսկ հիմա բոլորովին ուրիշ բան էր դարձել։



III.

Պախօմն ապրում էր սրտի ուզածի պէս և ուրախանում։ Ամէն բան լաւ էր, միայն մի բան էր մտածել տալիս—գիւղացիներն սկսել էին տրտ-ունել նրա արտերն ու մարգերը։ Քաղ-ցրութեամբ խնդրում էր—չէր լինում. երբեմն նախրապաններն էին անզգու-շաբար բաց թողնում կովերին նրա մարգերի մէջ, երբեմն ձիերն էին գի-շերուայ աղօտից մտնում արտերը։ Շատ անգամ Պախօմը քշում էր անա-սուններին, ներում ու չէր դիմում դատաստանի, բայց յետոյ ձանձրացաւ ու գնաց գիւղական դատարանը գան-գատուելու։ Ու թէև գիտէր, որ այդ ամենի պատճառը հողի քչութիւնն է, որ գիւղացիք դիտմամբ չեն անում, բայց և նոյնպէս մտածում էր, թէ «չը պէտք է անպատիժ թողնել. բանը որ էդպէս գնայ՝ նրանք բոլորը կը փչացնեն. պէտք է խրատ տալ»։

Պախօմը դատարանով խրատ տուեց մէկ անգամ, խրատ տուեց միւս անգամ, տուգանքի տակ դցեց սրան ու նրան։ Հարևան գիւղացիներն ոչ պահե-

ցին Պախօմի դէմ. սկսեցին երբեմն նոյն իսկ դիտամամբ տրորել նրա արտերը, իսկ մէկը նրանցից գիշերով մտաւ նրա փոքրիկ անտառն ու մի տասի չափ լորենիք կտրատեց կեղևելու համար։ Մի անգամ Պախօմն անցնում էր անտառով. նայում, տեսնում է, որ ինչ որ մի բան սպիտակին է տալիս։ Մօտեցաւ, տեսաւ, որ միջուկները վեր ընկած պառկած են, իսկ կոճղերը ցից-ցից մնկուել են։ Գոնէ թփի միջից ծայրերինը կտրէր ու մի հատը թողնէր, չէ, չարագործ անպիտանը բոլորն էր կտրել ու տարել։ Պախոմի բարկութիւնն եկաւ։ «Ախ,—մտածում էր նա ինքն իրան,—թէ իմանայի ով է արել, հոգին կը հանէի»։ Մտածեց, մտածեց, թէ ով կարող է արած լինել ու վճռեց, որ դա «Սեօմկայի բանն է, ուրիշ ոչ ոքի»։ Պախոմը գնաց Սիօմկայի բակը՝ նրա գողութիւնը բռնելու, բայց ոչինչ չը գտաւ, միայն հայհոյեցին իրար։ Ու Պախոմն իր մտքումն աւելի խոր համոզուեց, որ Սիմեօնն է արել։ Գնաց, գանգատ տուեց։ Սեմեօնին դատարան կանչեցին։ Դատեցին, դատեցին՝ արդարացրին մարդուն—ապացոյցներ չը կային։ Պախոմն աւելի վիրաւորուեց, հայհոյեց տանուտէրին ու դատաւորներին։ «Դուք,—ասաց,—գողերի կողմն էք պահում. թէ որ ինքներդ իսկակ մարդիկ լինէիք—գողին չէիք արդարացնի»։ Պախոմը կռուեց թէ դատաւորների և թէ հարևանների հետ։ Հարևաններն սպառնացին Պախոմին, որ եթէ այդպէս կը շարունակէ, կրակ կը տան տունը։ Ու Պախոմի վիճակն աւելի վատացաւ. հիմա թէև նա շատ հոգ ունէր, բայց սրտի մէջն էլ դող ունէր։

Այդ ժամանակ լուր տարածուեց գիւղի մէջ, թէ ժողովուրդը գնում է նոր տեղեր՝ նոր գիւղեր գցելու։ Պախոմը լսեց ու սկսեց մտածել. «Ես ինչու պէտք է փախչեմ իմ սեփական հողից, իմ տանից տեղից. այ, եթէ մերոնցից գնացողներ լինէին, մեր տեղը կը բնանար. ես նրանց հողերից կառնէի ու կը միացնէի ունեցածիս. էն ժամանակ ինչ լաւ կը լինէր, ինչ լաւ կապրէինք. թէ չէ էլի տեղերս նեղուածք է»։

Մի անգամ Պախոմը նստած էր տանը, որ մի անցորդ գիւղացի ներս մտաւ։ Հաց կերցրին, պատուեցին, թոյլ տուին, որ գիշերը կենայ, սկսեցին խօսակցել. հարց ու փորձ արին, թէ որտեղից է նա գալիս։ Գիւղացին ասաց, թէ գալիս է Ներքևից, Վոլգայի միւս ափերից, թէ այնտեղ գնացել էր բանելու։ Խօսք խօսքի վրայ՝ գիւղացին սկսեց պատմել, թէ ինչպէս ժողովուրդը գնում է այնտեղ նոր գիւղեր գցելու, նոր տեղերում ապրելու։ Պատմում էր, թէ իրանց գիւղից էլ մարդիկ են գնացել, գրուել են այնտեղի գիւղացի և թէ ամեն մի հոգուն տաս դեսեատին հող են բաժին տուել։ Իսկ հողն էնպէս հող է,—ասում էր,—որ երբ կորեկ ցանեցին՝ ձին մէջը չէր երևում. էնպէս խիտ էր բուսել, որ 4-5 բուռ քաղէիր՝ մի խուրձ դուրս կը գար։ Մի գիւղացի,—ասում էր,—բոլորովին աղքատ, դատարկ ձեռներով գնաց, հիմի վեց ձիու և երկու կովի տէր է։ Պախոմի սիրտը կրակ ընկաւ։ «Ինչ պէտք է այստեղ, այս նեղուածքի մէջ ճնալ ու չարչարուել,—մտածում էր նա,—քանի որ կարելի է լաւ ապրել։ Կը ծախեմ այստեղ տունն ու տեղս. այդ փողերով այնտեղ նոր տուն կը շինեմ ու բոլոր հարկաւոր բաները կառնեմ. իսկ այստեղ, այս նեղուածքի մէջ ապրելը միայն հոգի կորցնել է, ուրիշ ոչինչ։ Միայն թէ մարդ պէտք

է ինքը գնայ ու իր աչքով ամեն ինչ տեսնի ու իմանայ»։

Ամառն որ եկաւ, Պախոմը վեր կացաւ, գնաց։ Մինչև Սամարա գնաց Վոլգա գետով, շոգենաւով, յետոյ 400 վերստ անցաւ ոտքով ու տեղ հասաւ։ Ամեն բան այնպէս էր, ինչպէս պատմել էր անցորդը։ Գիւղացիք ապրում են ազատ, հողի նեղութիւն չեն քաշում. շունչ գլուխ 10 դեսեատին հող ունեն և ցանկացողին էլ ուրախութեամբ ընդունում են իրանց մէջ ու հող տալիս բաժին։ Իսկ եթէ մարդ փող ունենայ, բացի իր բաժին հողից, կարող է գնել ուրիշ հողեր էլ, ինչքան կամենայ, իբրև յաւիտենական սեփականութիւն. ամենալաւ հողի դեսեատինը՝ 3 մանէթ. գնիր, ինչքան ուզում ես։

Պախոմը լաւ հարց ու փորձ արեց, ամեն բան իմացաւ, յետ եկաւ տուն ու սկսեց ծախել-ծախծխել։ Հողը ծախեց օգուտով, յետոյ ծախեց տունը, բոլոր անասուններին, դուրս եկաւ հասարակութիւնից, սպասեց մինչև գարուն ու գարնանն ընտանիքն առաւ ու գնաց նոր տեղերը։

IV.

Պախոմը հասաւ իր ընտանիքով նոր տեղերը, գրուեց մի մեծ գիւղի հասարակութեան մէջ, գինի-արաղ խմեցրեց համփաներին ու գրել տուեց բոլոր թղթերն, ինչպէս հարկաւոր էր։ Պախոմին ընդունեցին, 50 դեսեատին հող տուին 5 շնչի բաժին զանազան տեղերում, բացի արօտներից։ Տուն ու տեղ եղաւ Պախոմը, անասուններ առաւ։ Հիմա նրան բաժին ընկած հողը երեք անգամ աւելի էր առաջուայ ունեցածից։ Ու հողն էլ հացաւէտ. ապրուստը—տասն անգամ աւելի լաւ քան առաջ։ Արօտատեղ, խոտատեղ—ինչքան կամենաս։ Անասուններ պահիր—ինչքան սիրտդ ուզում է։

Առաջ, երբ Պախոմը նոր տուն ու տեղ, նոր սարք ու կարգ էր լինում, ամեն բան լաւ էր թըւում. բայց երբ մի քիչ մնաց, նոր կեանքին սովորեց—այստեղ էլ տեղը նեղ երևաց։ Առաջին տարին Պախոմը ցորեն ցանեց իր բաժին հողի վրայ ու լաւ բերը ստացաւ։ Ցորեն ցանելը շատ դուրն եկաւ։ ուզում էր էլի ցանել, բայց նրա բաժին հողը քիչ

էր։ Ու ինչ էլ ունէր՝ նա էլ անպէտք էր։ Ցորենը ցանում են այնտեղ երկար ժամանակ հանգստացրած ու ձաղ խոտ ծածկուած հողի վրայ։ Մի-երկու տարի ցանում են ու թողնում, մինչև որ հողը նորից ծածկուի ձաղ խոտ։ Իսկ այդ տեսակ հող ուզողներ շատ կան, ամենքին հերիք չէ անում։ Շատ անգամ հէնց դրանից էլ վէճեր են ծագում. ով որ հարուստ է, ուզում է ինքը վերցնել ու ցանել, իսկ խեղճերն իրանցը տալիս են վաճառականներին հարկի փողն ստանալու համար։ Պախօմն ուզեց աւելի շատ ցանել։ Հետևեալ տարին գնաց վաճառականի մօտ, մի տարով հող վերցրեց։ Ցանեց այս անգամ աւելի ու էլի լաւ բերք ստացաւ. բայց բանն այն էր, որ հողը հեռու էր գիւղից. 15 վերստ ճանապարհ պէտք էր կտրել որանը կրելու համար։ Տեսնում է, որ վաճառական-գիւղացիները մեծ հողեր են առել, տներ ու գոմեր են շինել իրանց հողերի մէջ ու ապրում են իրարից հեռու. վարում, ցանում, անասուններ են պահում ու ծախում բոլոր բերքն ու արդիւնքը։ «Ի՜նչ լաւ կը լինէր,— մտածում էր ինքն իրան Պախօմը—եթէ ես էլ նրանց պէս սեփական հող գնէի և նրանց նման գործ բռնէի։ Ամեն բան մէկ տեղ կը լինէր»։ Ու Պախօմն սկսեց մտածել, թէ ինչպէս սեփական հող գնէ։

Այսպէս Պախօմն ապրեց երեք տարի. ուրիշից վարձով հող էր վերցնում ու ցորեն ցանում։ Լաւ տարիներ էին, ցորենը լաւ էր բուսնում, այս պատճառով էլ Պախօմը բաւական օգուտ ստացաւ ու բաւական փող յետ դցեց։ Գնա՛ ու ապրիր, բայց չէ. Պախօմին ձանձրալի թուաց ամեն տարի ուրիշներից վարձով հող վերցնելը, գլուխ ցաւեցնելը։ Որտեղ լաւ հող էր լինում, ամեն կողմից վրայ էին թափվում գիւղացիք, բոլորը վերցնում էին. եթէ ժամանակին մէկը վրայ չը հասաւ, հող չէր ունենայ ցանելու։ Բացի սրանից մի դէպք էլ պատահեց Պախօմին. երրորդ տարին մի վաճառականի հետ ընկերացան՝ կիսովի արօտներ վերցին գիւղացիներից և հողը վարեցին, բայց գիւղացիները յետոյ հրաժարուեցին, դատ բաց արին ու հողը յետ առան. ամբողջ աշխատանքը կորաւ։ «Եթէ ես իմ սեփական հողն ունենայի,— մտածում էր Պախօմը,— ոչ օրի առաջ գլուխ չէի ծռի և հոգուս էլ մեղք չէի բառնայ»։

Եւ Պախօմն սկսեց հարց ու փորձ անել, թէ որտեղ կարելի է սեփական հող գնել։ Դուրս եկաւ, որ մի գիւղացի ծախում էր։ Նա գնել էր 500 դեսեատին, բայց սնանկացել էր ու հիմա էժան ծախում էր։ Պախօմն սկսեց բարիշել նրա հետ. խօսեց, 1500 մանէթով բարիշեց, փողերի կէսը յետոյ վճարելու պայմանով։ Հէնց էն է՝ ուզում էին գործը վերջացնել, որ մի անգամ Պախօմի դուռն եկաւ, իջաւ մի անցորդ վաճառական ձիերին կերակրելու։ Թէյ խմեցին, սկսեցին զրոյց անել։ Վաճառականը պատմում էր, թէ գալիս է հեռու տեղից, բաշկիրների երկրից։ Նա պատմում էր, թէ բաշկիրներից հինգ հազար դեսեատին հող է գնել և այդ բոլորը նստել է նրա վրայ հազար բուբլի։ Պախօմը հետաքրքրուեց, սկսեց հարց ու փորձ անել։ «Միայն,— ասաց վաճառականը,— ծերունիների սիրտը շահեցի. սրան նրան շորեր ու գորգեր ընծայեցի 100 մանէթի, մի արկղ թէյ բաժանեցի, գինի խմեցրի, ով որ խմում էր, ու 20 կոպէկով առայ դեսեատինը»։ Վաճառականը ցոյց տուեց հաստատման գիրը։ «Հողը,— ասաց նա,—

գետի ափին է ու հարթ-հաւասար, ծածկուած ձար խոտ»։ Պախոմն աւելի հետաքրքրուեց, էլի սկսեց հարց ու փորձ անել, թէ ո՞նց, ի՞նչպէս։ «Հողն այնտեղ այնքան է,—ասաց վաճառականը,—որ մի ամբողջ տարի մարդ գաս, վերջը չի գայ և բոլորը բաշկիրներինն է։ Ժողովուրդն անհասկացող է—ոչխարի նման։ Կարելի է համարեա ձրի վերցնել»։—«Է՜, որ այդպէս է,—մտածում է Պախոմը,—ինչու՞ 1000 բուբլիով 500 դեսեատին առնեմ ու վրիս էլ պարտք թողնեմ. եթէ այնտեղ գնամ 1000 մանէթով ով գիտէ ինչքան հողի կը տիրանամ»։

V.

Պախոմը հարցրեց, թէ ինչպէս պէտք է տեղ հասնել. և հէնց որ վաճառականին ճանապարհ դրեց, ինքն էլ պատրաստուեց գնալու։ Տունը թողեց կնոջ վրայ, մի մշակ վերցրեց իր հետ ու ճանապարհ ընկաւ։ Գնացին քաղաք, առան մի արկղ թէյ, ընծաներ, գինի, արաղ,—ամեն բան, ինչ որ ասելէր վաճառականը։ Գնացին, գնացին, 500 վերստ հեռացան։ Եօթներորդ օրը հասան բաշկիրների վրանները։ Տեսան, որ, ուղիղ, ամեն բան հէնց այնպէս է, ինչպէս պատմել էր վաճառականը։ Ամենքն էլ ապրում են բաց դաշտում, գետի ափին, թաղիքեայ վրանների տակ։ Ոչ վար են անում և ոչ հաց ուտում։ Դաշտում արածում են ձիանների ջոկերն ու միւս անասունները։ Վրանների եռոը կապած են քուռակներն և օրն երկու անգամ քշում նրանց մօտ են բերում մայրերին. մատեանների կաթը կթում և նրանից կումիս են շինում։ Կանայք հարում են կումիսը, պանիր են շինում, իսկ տղամարդկանց գործը միայն թէյ ու կումիս խմելն է, ոչխարի միս ուտելն և ղուղուկ ածելը։ Բոլորն էլ գէր, կլոր և ուրախ են,

ամբողջ ամառը քէֆ են անում։ Մութ, ագէտ մարդիկ են, խօսում են միայն իրանց լեզուով, բայց և այնպէս բարի են ու քաղցրաբարոյ։

Հէնց որ բաշկիրները տեսան Պախօմին, դուրս եկան վրաններից, շրջապատեցին նրան։ Մէջները գտնուեց մի թարգման։ Պախօմը նրան ասաց, թէ եկել է հող տեսնելու։ Բաշկիրներն ուրախացան, վեր առան տարան Պախօմին մի լաւ վրան, նստեցրին գորգերի վրայ, տակը դրին բմբուլի բարձեր, իրանք շարուեցին նրա չորս կողմն ու սկսեցին հիւրասիրել նրան թէյով ու կումիսով։ Ոչխար մորթեցին և նրան մսով կերակրեցին։ Պախօմը հանեց կառքից իր ընծաները, սկսեց բաժանել բաշկիրներին։ Բոլորին էլ մի-մի ընծայ տուեց ու թէյը մաս-մաս բաժանեց։ Բաշկիրներն ուրախացան։ Նրանք սկսեցին իրար մէջ բլբլացնել, բլբլացնել ու յետոյ ասացին թարգմանին, որ հասկացնէ։

—Ինձ պատուիրեցին ասել քեզ,—դարձաւ թարգմանը Պախօմին,—թէ դու շատ դուր եկար մեզ և թէ մեր սովորութիւնն այն է, որ աշխատենք հիւրի սիրան ամեն կերպ շահել և նրա ընծաների դէմ ուրիշ ընծաներ տալ։ Դու մեզ ընծաներ տուիր. հիմի ասա, մեր ունեցածից ինչ բանին ես հաւան կենում, որ մենք էլ քեզ ընծայենք։

—Ես հաւան կացայ,—ասում է Պախօմը,—ամենից շատ ձեր հողին։ Մեզ մօտ հողը քիչ է. նեղուածքի մէջ ենք ապրում. ունեցած հողերս էլ էնքան ենք ցանել, որ մէջն այժ չէ մնացել, իսկ ձեզ մօտ հողը շատ է ու լաւ։ Ես էդպէս հող իսկի չեմ էլ տեսել։

Թարգմանը հաղորդեց նրանց Պախօմի ասածը։

Բաշկիրներն սկսեցին իրար մէջ խօսել։ Պախօմը թէև չէր հասկանում նրանց խօսածը, բայց տեսնում էր, որ նրանք ուրախ են, ինչ որ բղաւում են, ծիծաղում։ Յետոյ լռեցին ու նայում են Պախօմի երեսը։

—Պատուիրեցին քեզ ասել,—խօսեց թարգմանը,—թէ նրանք ուրախութեամբ քո ընծաներիդ տեղ այնքան հող կը տան քեզ, որքան ուզում ես, միայն ցոյց տուր ձեռքով, թէ որ հողն ես ուզում և էն էլ քոնը կը լինի։

Նրանք էլի սկսեցին խօսել և վիճել իրար հետ մի ինչ որ բանի մասին։ Պախօմը հարցրեց, թէ ինչ բանի վրայ են վիճում։ Թարգմանը պատմեց, թէ մի քանիսն ասում են, որ հողի համար պէտք է հարցնել քեռխվին, առանց նրան չէ կարելի. միւսներն էլ ասում են, թէ առանց հարցնելու էլ կարելի է։

VI.

Հենց այս վէճի ժամանակ տեսան՝ գալիս է մի մարդ՝ աղուէսի մորթու գդակը գլխին։ Ամենքն էլ լռեցին ու տեղերից վեր կացան։ Թարգմանն ասաց, որ նա ինքը քեօխվէն է։ Պախօմն խակոյն հանեց ամենից լաւ կապն և ընծայեց նրան. բացի սրանից՝ 5 գրուանքայ էլ թէյ։ Քեօխվէն ընդունեց և նստեց պատուաւոր տեղը։ Բաշկիրներն խակոյն սկսեցին նրան ինչ որ բան պատմել։ Քեօխվէն լսեց, լսեց, թափ տուեց գլուխը, որ նրանք լռեն, ու դարձաւ Պախօմին, սկսեց խօսել ռուսերէն։

—Ինչու չէ,— ասաց,—կարելի է։ Վերցրու որտեղ սիրտդ ուզում է. հող շատ կայ։

«Ինչպէս թէ վերցնեմ, որքան ուզում եմ,— մտածում էր ինքն իրան Պախօմը,—չէ՞ որ պէտք է, ինչ էլ որ լինի, հաստատել ինձ վրայ. թէ չէ հիմի կասեն քոնն է, յետոյ ձեռքիցս կառնեն»։

—Շնորհակալ եմ,—ասաց Պախօմը,—ձեր քաղցը խօսքի համար։ Գիտեմ, դուք հող շատ ունիք, բայց ինձ քիչ է հարկաւոր։ Միայն թէ ես իմանայի որը պէտք է իմը լինի։ Չէ՞ որ՝ ոնց որ էլ լինի՝ պէտք է

չափել ու ինձ վրայ հաստատել։ Թէ չէ մեր կեանքն ու մահն Աստծու ձեռին է. դուք բարի մարդիկ էք, էսօր տալիս էք, իսկ վաղը, ով գիտէ, կարող է պատահել, որ ձեր որդիքը յետ առնեն։

—Ճշմարիտ ես ասում,— խօսեց քեօխվէն,— պէտք է հաստատել։

—Ա՜յ, ես լսել եմ,—ասաց Պախօմը,—որ ձեզ մօտ մի վաճառական է եկել. դուք նրան էլ հող էք ընծայել ու հաստատման գիր տուել. ես կուզէի, որ ինձ հետ էլ էդպէս վարուէիք։

Քեօխվէն հասկացաւ ամեն ինչ։

—Էդ բոլորն էլ կարելի է անել,—ասում է. մենք գրագիր ունենք, քաղաք էլ կարող ենք գնալ, բոլոր հարկաւոր կնիքներն էլ դնել։

—Բայց գինն ինչ է,—հարցրեց Պախօմը։

—Գինը մէկ է մեղանում—1000 մանէթ մէկ օրուայ համար։

Պախօմը չը հասկացաւ։

—Օ՜ր—դա ինչ չափ է. քանի՞ դեսեատին կը լինի նրա մէջ։

—Մենք այդքանը չը գիտենք հաշուել. մենք օրով ենք ծախում. մի օրուայ մէջ ինչքան տեղ որ ման եկար՝ հէնց այն էլ քոնն է, իսկ օրուայ գինը—1000 ռուբլի։

Պախօմը զարմացաւ։

—Բայց չէ՞ որ,—ասաց նա,—մի օրուայ մէջ շատ տեղ կարելի է ման գալ, մեծ պտոյտ անել։

Քեօխվէն ծիծաղեց։

—Բոլորը քոնն է,—ասաց,—միայն մի պայման կայ. եթէ լուսով յետ չը դառնաս էն տեղը, որից սկսել ես գնալ—փողերդ կը կորչեն։

—Բայց ինչպէս պէտք է անել,—հարցնում է Պախոմը,—նշանները պիտի դնել էն տեղերում, որոնցով կանցնեմ։

—Մենք այսպէս կանենք։ կը գնանք այն տեղը, որին կը հասնես. մենք կը մնանք, իսկ դու գնա, պտոյտ արի, հետդ էլ փորիչ վերցրու, և որտեղ պէտք է, նշան արա. անկիւններում փոռեր—փորիր ու ճիմ դիր մէջը, յետոյ գութանով փոսից փոս մենք ակօս կանցկացնենք։ Ինչպիսի պտոյտ ուզում ես արա, միայն արևի մայր մտնելուց առաջ արի այն տեղը, որտեղից գնացել ես։ Ինչքան տեղ մէջ առար՝ բոլորը քոնն է։

Պախոմն ուրախացաւ։ Խօսք կապեցին, որ առաւօտեան վաղ դուրս գան։ Մի քիչ խօսեցին, էլի կումիս խմեցին, ոչխարի միս կերան, էլի թէյ խմեցին, արդէն սկսեց մթնել։ Պախոմին պառկեցրին բմբուլի ներքնակի վրայ ու իրանք՝ բաշկիրները՝ հեռացան։ Խոստացան էքսը՝ լուսաբացին հաւաքուել, որ արևը ծագելուց առաջ տեղ հասնեն։

VII.

Պախոմը պառկեց բմբուլի ներքնակի վրայ։ բայց քունը չէր տանում, նա շարունակ մտածում էր հողի մասին։ «Մեծ պատառ կը փախցնեմ,—մտածում էր նա ինքն իրան,—50 վերստի չափ պրտոյտ կարելի է անել մի օրում։ Օրը հիմա տարի է. 50 վերստի մէջ ինչքան հող կը լինի, հաշուել անկարելի է։ Որն աւելի վատ է՝ կը ծախեմ կամ գիւղացիներին կը տամ վարձով, իսկ ամենալաւն ես ինձ համար կը վերցնեմ և տուն տեղ կը լինեմ. երկու գութան կը սարքեմ, մի երկու մշակ էլ աւելի կը բռնեմ. 50 դեսեատինի չափ վար կանեմ, իսկ մնացած հողի վրայ անասուններ բաց կը թողնեմ չաղանալու»։

Պախոմն ամբողջ գիշերը չը քնեց։ Լուսաբացից առաջ միայն մի քիչ աչքերը կպան։ Ու հէնց որ աչքերը կպան՝ երազ տեսաւ։ Տեսնում էր, որ իբր թէ ինքը պառկած է այդ նոյն վրանի մէջ և լսում է, որ դուրսը մի մարդ հռհռում, տրաքվում է ծիծաղից։ Եւ իբր թէ նա ուզեց տեսնել, թէ ով է այդպէս ծիծաղում. վեր կացաւ, դուրս եկաւ վրանից

ու տեսնում է, բաշկիրների քեօխվէն է նստած վրանի առաջ. երկու ձեռքով բռնել է փորը, ծիծաղում, հռհռում է մի ինչ որ բանի վրայ։ Պախոմը մօտեցաւ ու հարցրեց՝ «Ի՞նչ բանի վրայ ես ծիծաղում»։ Եւ տեսնում է նա, որ իբր ծիծաղողը բաշկիրների քեօխվէն չէ, այլ այն վաճառականը, որ իրանց տունն էր իջել ու պատմել հողի մասին։ Ու հէնց որ նա հարցրեց, թէ՝ «Դու վաղուց ես եկել այստեղ», նայեց տեսաւ, որ դա վաճառականը չէ, այլ էն գիւղացին, որ ներքևից, Վոլգա գետի էն կողմի ափերից էր գալիս։ Եւ Պախոմը տեսնում է, որ իբր ոչ էլ էն գիւղացին է, այլ ինքը սատանէն պոզերով ու պճեղներով, նստել է ու քոքռում է, իսկ նրա առաջ մի մարդ է պառկել սատաբոբիկ, շապիկ-վարտիկով։ Ու իբր թէ Պախոմն աւելի մօտ նայեց՝ տեսնելու, թէ էդ ինչ մարդ է, որ պառկել է։ Ու տեսնում է նա, որ պառկած մարդը մեռած է և որ դա—նա ինքն է։ Պախոմը զարհուրեց ու արթնացաւ։ «Ինչ բաներ է մարդ տեսնում երազի մէջ» —մտածեց նա։ Զորս կողմը նայեց, տեսաւ բաց դռնից, որ դուրսը սպիտակին է տալիս, արդէն լուսանում է։ «Պէտք է զարթեցնել բաշկիրներին,— մտածեց նա,— գնալու ժամանակ է»։ Պախոմը վեր կացաւ տեղից, ձայն տուեց մշակին, հրամայեց լծել կառքը, իսկ ինքը գնաց բաշկիրներին զարթեցնելու։ «Ժամանակ է,—ասում է,—դաշտ գնալ չափելու»։ Բաշկիրները վեր կացան, հաւաքուեցին միասին. եկաւ և քեօխվէն։ Նրանք սկսեցին էլի կումիս խմել, ուզում էին Պախոմին էլ թէյ խմեցնել, բայց նա չը սպասեց.—«Թէ որ գնում ենք, գնանք, ժամանակ է»—ասում է։

VIII.

Հաղորդուեցին բաշկիրները միասին. որը ձի հեծաւ, որը կառք նստեց ու բոլորն իրար հետ ճանապարհ ընկան։ Պախոմն էլ նստեց իր կառքը մշակի հետ ու վերցրեց հեռը մի փորիչ։ Դաշտ որ հասան՝ բարի լոյսն արդէն բացվում էր։ Բարձրացան մի բլրի վրայ, որ բաշկիրների լեզուով կոչվում է շիխան։ Կառքերից ու ձիերից վայր իջան, հաւաքուեցին իրար մօտ։ Քեօխվէն մօտեցաւ Պախոմին ու ձեռքով ցոյց տուեց.

—Ա՛յ տես,—ասում է,—բոլորը մերն է, ինչքան որ աչքդ կարում է։ Ընտրիր որը սիրտդ կուզէ։

Պախոմի աչքերը շաղ ընկան—հողն ամբողջովին ծածկուած է ձարխոտով, հարթ-հաւասար՝ ինչպէս հայելի, սև՝ ինչպէս ածուխ, իսկ որտեղ ձորակ կայ՝ այնտեղ էլ տեսակ-տեսակ խոտեր ու ծաղիկներ են բուսնել այնքան բարձր, որ մարդ մէջը հաղիւ կերևայ։

Քեօխվէն վերցրեց գլխից մորթու գդակն ու դրեց գետին։

—Տես,—ասում է,—սա թող նշան լինի։ Այս-

տեղից գնա, այստեղ էլ արի։ Ինչքան տեղ մէջ առնես՝ բոլորը քոնն է։

Պախոմը հանեց փողերը, դրեց գլխարկի վրայ. հանեց վերնազգեստը, մնաց արխալուղով. գոտին քանդեց ու նորից ամուր կապեց փորի տակով. հացի կապոցը ծոցը դրեց, ջրամանը կապեց գոտուց, կոշիկների բկերը վեր քաշեց, մշակի ձեռքից վերցրեց փորիչն ու սկսեց մտածել։ Մտածում էր, թէ ո՞ր կողմը գնայ։ Որ կողմն էլ գնայ՝ լաւ է։ «Էհ, բոլորն էլ մէկ է,—վճռեց նա իր մտքում,—կը գնամ արեւելքի կողմը»։ Երեսն արաւ դէպի արեւելք, փոքր ինչ կանգ առաւ—սպասում էր, որ արևի ծայրն երևայ։ Ոչ մի բոպէ չեմ կորցնի,—մտածում էր նա,—առաւօտուայ զովին ման գալն էլ հեշտ է։ Ու հէնց որ արևը շաղ տուեց իր առաջին ճառագայթները, Պախոմը փորիչն ուսեց ու առաջ գնաց։

Պախոմն սկսեց գնալ ոչ դանդաղ և ոչ արագ։ Առաջ գնաց մի վերստ, կանգ առաւ, փոս փորեց և ճիմի կտորներ դրեց իրար վրայ, որ նշանն աւելի լաւ երևայ։ Թողեց գնաց։ Նրա ոտները սկսեցին բացուել ու նա արագացրեց քայլերը։ Մի քիչ էլ առաջ գնաց՝ մի ուրիշ փոս փորեց։

Պախոմը յետ նայեց։ Շիխանը լաւ երևում էր. ժողովուրդը կանգնած էր այնտեղ ու կառքերի անիւների երկաթեայ օղակները փայլում էին արևի տակ։ Պախոմը մտածեց, որ հինգ վերստ անցած կը լինի։ Նրա մարմինն սկսեց տաքանալ։ Հանեց արխալուղը, գցեց ուսին, առաջ գնաց։ Շորն սկսվում էր։ Նայեց արևին, տեսաւ, որ նախաճաշի ժամանակ է։

«Մէկ ժամն անցաւ,—մտածեց Պախոմը,—իսկ օրուայ մէջ չորս ժամ կայ. դեռ վաղ է. քիչ յետոյ

կը ծռեմ ճանապարհս։ Արի ոտներս հանեմ միայն»։ Նստեց, կօշիկները հանեց, կոխեց գոտու տակը, առաջ գնաց։ Սկսեց աւելի թեթև ման գալ։ «Արի,—մտածում էր նա,—էլի հինգ վերստ անցնեմ, յետոյ ծռեմ ճանապարհս դէպի ձախ։ Լաւ տեղեր են շատ, ափսոս է ձեռքից բաց թողնել. քանի առաջ ես գնում՝ էնքան աւելի հողը լաւանում է»։ Էլի սկսեց ուղիղ գնալ։ Յետ նայեց, տեսաւ, որ շիխանը հազիւ երևում է, իսկ մարդիկը մրջիւնների նման սեւին են տալիս ու շիխանի վրայ ինչ որ բան է փայլում։

«Է՛,—մտածում է Պախոմը,—էս կողմից բաւական գերցրի, պէտք է ծռուել. համ էլ որ քրտնեցի, ջուր եմ ուզում»։ Նա կանգ առաւ, մի քիչ աւելի մեծ փոս փորեց, ճիմի կտորներ դրեց, ջրամանը յետ արեց, ջուր խմեց և թեքեց ճանապարհը։ Գնաց, գնաց, բարձր խոտերի մէջ մտաւ ու շոքեց։

Պախոմն սկսեց դադրել։ Նայեց արևին, տեսաւ՝ ճաշի ժամանակ է։ «Է՛,—մտածում է,—պէտք է հանգստանալ»։ Նա կանգ առաւ, նստեց։ Հաց կերաւ, վրէն էլ ջուր խմեց, բայց չուզեց պառկել. «Վա՛յ թէ պառկեմ ու քնեմ»—մտածեց նա։ Մի քիչ նստեց, յետոյ վեր կացաւ առաջ գնաց։ Սկզբում լաւ էր գնում։ Հաց ուտելուց մի քիչ ոյժերն աւելացան, միայն սաստիկ շոքեց ու քունն էլ սկսեց տանել, բայց էլի շարունակում էր առաջ գնալ. «Մի ժամ կը հանբերես,—մտածում էր նա,—բայց ամբողջ կեանքիդ մէջ կը վայելես»։

Այս կողմի վրայ էլ նա շատ տեղ գնաց և ուզում էր արդէն թեքուել դէպի ձախ, բայց նայեց տեսաւ, որ մօտեցել է մի փոքրիկ ձորակի. «Ափսոս է,—մտածեց նա,—վուշն այստեղ շատ լաւ կը բուսնի»։

Ու նորից առանց ծռուելու առաջ գնաց, մէջ առաւ ձորակը, փոս փորեց նրա միւս կողմն ու երկրորդ անկիւնը կազմելով թեքուեց դէպի ձախ։ Մտիկ տուեց Պախոմը շիխանին, տեսնում է, որ շոքից մշուշ է կանգնել, ինչ որ մի բան տատանվում է օդի մէջ և մշուշի միջից մարդիկ հազիւ են երևում շիխանի վրայ։ «Է՛,—մտածում է Պախոմը,—կողքերն երկար վերցրի, էս մէկը պէտք է կարճ կտրել»։ Երրորդ կողմով գնալիս, սկսեց քայլերն արագացնել։ Նայեց արևին, տեսաւ որ արդէն թեքվում է դէպի իր մուտքը, այն ինչ երրորդ կողմով նա ընդամենը երկու վերստ է անցել, իսկ մինչև տեղ հասնելը դեռ 15 վերստ կայ։ «Չէ,—մտածում է Պախոմը,—թէպէտ հողաբաժինը ծուռ դուրս կը գայ, բայց և այնպէս պէտք է ուղիղ ճանապարհով գնամ, որ հասնեմ, աւելորդ բան պէտք չէ. առանց էն էլ հող շատ եմ մէջ առել»։ Պախոմը շտապով փոս փորեց և թեքեց ճանապարհն ուղիղ գծով դէպի շիխանը։

IX.

Պախոմն ուղիղ դէպի շիխանն է գնում, բայց արդէն յոգնած ու դաղրած՝ ոտները դժուարութեամբ է փոխում։ Քրտնել է, բոբիկ ոտները քերծել ու կտրատել, այնպէս որ քիչ է մնում տակը ծալ անցնի։ Ուզում է հանգստանալ, բայց չէ կարելի—տեղ չի հասնի մինչև արևի մայր մտնելը։ Արևը չէ սպասում, իջնում է հա իջնում։ «Ախ,—մտածում է նա,—չը սխալուեցի՞ արդեօք, շատ չը վերցրի՞. ինչ կը լինի, թէ որ չը հասնեմ»։ Նայում է առաջ դէպի շիխանը, նայում է արևին և տեսնում, որ շիխանից դեռ հեռու է, իսկ արևն էն է՝ ուզում է մայր մտնել։

Պախոմն այսպէս առաջ է գնում ու թէպէտ ծանր է նրա համար, բայց և այնպէս էլի արագացնում է քայլերը։ Գնաց, գնաց, տեսաւ՝ դեռ էլի հեռու է, սկսեց վազ տալ։ Վայր գցեց վրայից արխալուղը, դէն շպրտեց կօշիկները, ջրամանը, գլխարկը, միայն փորիչը պահեց ձեռքին ու նրանով առաջ էր քշում իրան։ «Ախ,—մտածում է նա,—ագահութիւն արի, ամբողջ գործը փչացրի, տեղ չեմ հասնի մինչև արևի մանելը»։ Երկիւղից նրա շունչն աւելի ևս կտրվում է։ Պախոմը վազում է հա վազում. շապիկն ու վարտիկը քրտնքից կպել են նրա մարմնին, բերանը չորացել

է։ Կրծքի մէջ կարծես դարբնի փուքսեր են փչում, իսկ սրտի մէջ՝ մուրճեր են խփում. ոտներն էլ ասես իրանը չը լինեն—ծալ են անցնում։ «Չը լինի՞ թէ զօռ տալուց մեռնեմ»,—զարհուրած մտածում է Պախօմը։

Մեռնելուց վախենում է, բայց կանգնել չէ կարողանում։ «Այսքան տեղ,—մտածում է նա,—վազ տուի, հիմա որ կանգնեմ, յիմար կասեն ինձ»։ Նորից վազում է, վազում, արդէն մօտենում է ու լսում, որ բաշկիրները բղաւում, հարայ տալիս, կանչում են նրան։ Պախօմի սիրտը նրանց աղաղակից աւելի ևս բորբոքվում է։ Նա վերջին ոյժն է գործ դնում ու նորից վազում, բայց արևն արդէն մայր է մտնում. մշուշի մէջ երևում է նա իբրև մեծ, կարմիր, արնագոյն մի գունդ։ Հը, էս է մայր կը մտնի։ Արևը, ուղիղ է, մտնելուն մօտիկ է, բայց տեղն էլ արդէն հեռու չէ։ Պախօմն արդէն տեսնում է մարդկանց շիխանի վրայ. նրանք ձեռքով են անում, շտապեցնում են նրան։ Տեսնում է նաև մորթու գդակը, տեսնում է նրա վրայի փողերն և քեօխվին, որ նստել է գետնին և ձեռքերով փորը բռնել։ Ու Պախօմը յիշեց իր երազը։ «Ճշմարիտ է, հող շատ մէջ առայ, բայց Աստուած կը կամենայ, որ ապրեմ ու վայելեմ։ Օ՜խ, սպանեցի ես ինձ. տեղ չեմ հասնի»։

Պախօմը մտիկ տուեց արևին, իսկ նա արդէն հասել էր գետնին, արդէն մէկ ծայրը մթնում էր։ Պախօմը վերջին շունչը հաւաքեց, ամբողջ մարմնով առաջ ընկաւ ու վազ տուեց այնպէս, որ ոտներն հազիւ կարողանում էին հասնել մարմնի ետևից։ Երբ Պախօմը հասաւ շիխանին, յանկարծ մթնեց չորս կողմը. նայեց տեսաւ, որ արևն արդէն մտել է։ Զարհուրեց Պախօմը։ «Կորաւ աշխատանքս»,—մտածեց

նա և արդէն ուզում էր կանգ առնել, բայց լսեց, որ բաշկիրներն էլի բղաւում, կանչում են նրան։ Ու հասկացաւ Պախօմը, որ ներքևից նրան արևը մայր մտած է երևում, բայց շիխանի գլխից դեռ երևում է, դեռ մայր չէ մտել։ Շունչը բերանն առաւ Պախօմը, վազեց բարձրացաւ շիխանի գլուխը. այնտեղ դեռ լոյս էր. տեսաւ գլխարկը, տեսաւ որ գլխարկի առաջ նստած է քեօխվէն ու փորը բռնած քոքռում է։ Պախօմը յիշեց երազը, հառաչեց. նրա ոտները ծալուեցին և նա երեսի վրայ վայր ընկաւ ու ձեռքը դցեց գլխարկին։

—Ա՜յ, ղօչաղ,—աղաղակեց քեօխվէն,—շատ հող տիրեցիր։

Պախօմի մշակը վազեց նրա մօտ, ուզում էր վեր հանել, բայց տեսաւ, որ Պախօմի բերանից արիւն է հոսում և նա արդէն մեռած է։

Բաշկիրները շրջապատեցին Պախօմին, ցաւեցին նրա վրայ։

Մշակը վերցրեց փորիչը, գերեզման փորեց Պախօմի համար, ճիշտ այնքան, որքան նա գլխից մինչև ոտքը հողի էր տիրացել—երեք արշին—ու թաղեց նրան։

ՀԱՆԳՅՐՈՒ ԿՐԱԿԸ՝
ՔԱՆԻ ԲՈՑ ՉԸ ԿԱՅ

Գիւղում ապրում էր մի մարդ՝ Իւան Շչերբակով անունով, և ապրուստի կարօտութիւն չէր քաշում։ Առողջ և ուժեղ՝ գիւղի մէջ նա առաջին աշխատաւորն էր. ունէր երեք հասակաւոր որդի—մէկն ամուսնացած, միւսը—նշանած, իսկ երրորդը՝ մի նորահաս տղայ, որ արդէն կարողանում էր վար անել և ձիանը լծած՝ բեռներ կրել։ Իւանի կինը մի խելօք ու տնտեսագէտ պառաւ էր, իսկ հարսը՝ համեստ և աշխատասէր։ Էլ ինչ էր հարկաւոր Իւանին. նրա տան մէջ մի հացակեր կար միայն, որ չէր աշխատում—դա նրա ծերունի հիւանդ հայրն էր. նա շնչարգելութիւն ունէր և եօթներորդ տարին էր՝ կեանքը վառարանի վրայ պառկած էր անցկացնում։ Ամեն ինչ կար Իւանի տանը. նա երեք ձի ունէր և մի քուռակ, մի կով իր հորթի հետ և 15 ոչխար։ Կանայք տնական բաներն էին անում,—կարում, կարկատում ու դաշտում աշխատում,—տղամարդիկ էլ իրանց գիւղական գործերն էին կատարում։ Նոր հացը կոխում էր հնին։ Միմիայն վարսակը ծախելով նրանք կարողանում էին համ տէրութեան հարկը վճարել, համ տան պակաս-

պառաւը հոգալ։ Թող ապրէին ու փառք տային Աստծուն։ Բայց արի տես, որ նրան պատկից ապրում էր մի հարևան՝ կաղլիկ Գաւրիլոն՝ Գօրդէյ Իւանովի որդին։ Իւանի և նրա մէջ թշնամութիւն սկսուեց։

Քանի դեռ ծերունի Գօրդէյը կենդանի էր և Իւանի տանն էլ հայրն էր գլխաւորը՝ նրանք իրար հետ հաշտ ու բարիշ, լաւ հարևանների նման էին ապրում։ Մաղ էր հարկաւորվում կանանց թէ տաշտ, անիւ էր պէտք գալիս տղամարդկանց՝ սայլը նորոգելու համար՝ ուղարկում էին մէկը միւսից ուզելու և, իբրև հարևան, օգնում էին իրար։ Թէ մէկի հորթը մանում էր միւսի կալի մէջ, դուրս էին քշում և ասում. «Մի թողնի, կալը դեռ չէ հաւաքած»։ Իսկ պահել ու փակել հորթը մարագում կամ մի այլ տեղ, և կամ զուր գցել իրար վրայ—այդ տեսակ բաներ չէին էլ լսուած։

Այսպէս էին ապրում ծերերի ժամանակ, իսկ երբ ջահէլներն անցան գործի գլուխ—բանը փոխուեց։

Կռիւն սկսուեց դատարկ պատճառից։

Իւանի հարսը հաւեր էր պահում. նրանցից մէկը վաղ սկսեց ձու ածել. հարսը հաւաքում էր ձուերը Զատկի համար։ Ամեն օր նա գնում էր մարագը և բունկալից մի ձու էր բերում։ Մի օր, երևի, երեխաները քշել էին հաւին և նա թռել էր ցանկապատից հարևանի բակն ու այնտեղ ձու ածել։ Հարսը մի ժամանակ լսեց, որ իր հաւը կրկչում է, բայց չը գնաց ձուն բերելու։ «Հիմա ժամանակ չը կայ,—մտածեց նա,—տունը պէտք է սրբել ու հաւաքել տօներից առաջ. բանս պրծնեմ, յետոյ կը գնամ բերելու»։ Երեկոյեան նա գնաց մարագը, նայեց բունկալը, տեսաւ ձու չը կայ։ Հարսն սկսեց հարցնել

սրան նրան—սկեսրոջը, տագերը, թէ ձու խօ չէն վերցրել։ Ոչ,—պատասխանեցին, — չենք վերցրել։ Միայն Տարասնկան, կրտսեր տագրը, ասաց, թէ քո փուսփուլլիկդ հարևանի բակում ձու ածեց, այնտեղ էր կրկչում ու այնտեղից էլ թռաւ եկաւ մեր բակը։ Հարսը նայեց իր փուսփուլլիկին, որ թառի վրայ հանգիստ նստել էր աքաղաղի կողքին և աչքերը կիսախուփ՝ քնելու էր պատրաստվում։ Շատ էլ ուզենար հարցնել, թէ որտեղ ես ածել քո ձուդ, բայց գիտէր, որ հաւը չէր պատասխանի, ուստի թողեց գնաց հարևանի մօտ։ Հարևան պառաւը դէմ դիպաւ նրան ու հարցրեց.

—Ի՞նչ ես ուզում, հարսիկ։

—Ինչ պիտի ուզեմ,—ասում է,—տատի, էսօր մեր հաւը ձեր բակն է թռել, խօ ձու չէ՞ ածել ձեզ մօտ։

—Երեսն էլ չենք տեսել,—ասաց պառաւը,—մեր հաւերը, փառք Աստծու, վաղուց ձու են ածում. մենք վերցրել ենք ինչ որ մերն է, իսկ ուրիշինը մեզ պէտք չէ։ Մենք, աղջի ջան, ուրիշների բակերը չենք գնում ձու հաւաքելու։

Հարսը վիրաւորուեց, աւելորդ խօսք ասաց. հարևան պառաւը մէկին երկուսով պատասխանեց ու նրանք սկսեցին հայհոյել իրար։ Իւանի կինը ջուր էր տանում այդ ժամանակ. նա էլ մէջ խառնուեց։ Դուրս վազեց Գաւրիլոյի կինը, սկսեց հարևանուհուն յանդիմանել, ասաց այն բաները, որոնք եղել էին ու հնարեց այնպիսիներ, որոնք երբէք չէին էլ եղել։ Ու այսպէս կռիւը տաքացաւ։ Ամենքը միասին աղաղակում էին և աշխատում մի անգամից երկու խօսք ասել. ու խօսքերն էլ բոլորը վատ, բոլորն անպիտան։ Դու էսպէս ես, դու էնպէս ես, դու գող ես,

բոզ ես, դու քո սկեսայրիդ քաղցած սպանում ես, դու տկլոր ես հարս գնացել։

—Իսկ դու, մուրացկան, իմ մաղս փչացրիր։ Հէնց հիմի էլ մեր ջրի լծակը ձեր տանն է. բեր լծակը։

Լծակից բռնեցին, քաշքշեցին, ջուրը թափեցին, գլխի աղլուխները պոկոտեցին և սկսեցին խփել իրար։ Գաւրիլոն դաշտից տուն եկաւ, սկսեց պաշտպանել կնոջը։ Ծանից դուրս վազեց Իւանն իր որդու հետ և ամենքը խառնուեցին իրար ու թափուեցին իրար վրայ։ Իւանն ուժեղ տղամարդ էր, ցրիւ տուեց ամենքին, Գաւրիլոյի մօրուքից մի բուռն մաղ պոկեց։ Մարդիկ հաւաքուեցին, հազիւ կարողացան բաժանել նրանց իրարից։

Այդ օրուանից էլ սկսուեց թշնամութիւնը երկու հարևան ընտանիքի մէջ։

Գաւրիլոն իր մօրուքից պոկած մազերը փաթաթեց թղթի մէջ և գնաց գիւղական դատարանը գանգատուելու։

—Ես,—ասում է,—մօրուք նրա համար չեմ թողել, որ չեչոտ Վանկէն պոկէ։

Իսկ նրա կինը հարևանների մօտ պարծենում էր, թէ նրանք հիմա Իւանին կը մեղաւորցնեն ու Սիբիր քշել կը տան։

Ու թշնամութիւնն աւելի ևս բորբոքուեց նրանց մէջ։

Դեռ առաջին օրուանից, երբ կռիւը պատահեց, ծերունին վառարանի վրայից համոզում էր նրանց, որ այդպէս չանեն, բայց ջահէլները չը լսեցին։ Ծերունին ասում էր.

—Դատարկ բան էք բռնում, տղէք, և դատարկ

բանից էլ բան էք շինում։ Աւր մէկ մատածեցէք, ամբողջ խայտառակութիւնը մի ձուի պատճառով ըսկսուեց։ Երեխաները վերցրել էին ձուն, էհ, Աստուած նրանց հետ, մի ձուն մեծ բան չէ։ Աստուած ամենքին էլ կը տայ։ Իսկ եթէ վատ խօսք ասաց, դու ուղղիր նրա ասածը, սովորեցրու, թէ ինչպէս պիտի ասել, որ լաւ լինի։ Ասենք թէ, կռուեցիք, մարդը սիսալական է. էդպէս էլ է պատահում. գնացէք իրարից թողութիւն խնդրեցէք ու վերջ տուէք գիշութեանը. իսկ եթէ գիշութեան դէմ գիշութիւն կանէք—ձեզ համար վատ կը լինի։

Ջահէլները չը լսեցին ծերունուն, այնպէս կարծեցին, թէ նա զուր տեղը փնթփնթում է, թէ ծեր է և ծերերի սովորութեամբ սիրում է ամենքի գլխին խրատներ կարդալ։

Իւանը հարևանի գանգատի տակը չը մնաց։

—Ես,—ասում է,—նրա մօրուքը չեմ պոկել, ինքն է իրան մօրուքը փետել, հիմի ինձ վրայ է դցում. ու թէ ուզում էք ուղիղն իմանալ՝ նրա տղէն է իմ շապիկս վրէս պատառ-պատառ արել. այ տեսէք։

Եւ Իւանը լծեց սայլն ու գնաց դատարան։ Նրանց դատը քննուեց թէ հաշտարարի մօտ և թէ գիւղական դատարանում։ Հէնց այդ ժամանակ Գաւրիլոյի բակից կորաւ սայլի երկաթեայ սողնակը։ Գաւրիլոյի տան կանայք մեղքը գցեցին Իւանի որդու վրայ։ «Մենք,—ասում էին,—տեսանք, որ նա գիշերով պատուհանի առաջից մօտենում էր սայլին, իսկ մեր քաւորկինը պատմում է, որ նա դրանից յետոյ գինետուն է գնացել և գինեվաճառին սողնակով սպառնացել է»։

Նորից նրանք վազեցին դատարան։ Իսկ տանը

ամեն Աստծու օր կամ հայհոյում էին կամ ծեծում իրար։ Երեխաներն էլ, մեծերին նայելով, իրար էին հայհոյում, իսկ կանայք, երբ գնում էին գետը լուացքի, ոչ այնքան թակիչներով, որքան լեզուներով էին աշխատում ու միշտ իրար հակառակ, իրար տրաքեցնելու համար։

Առաջ տղամարդիկ զուր մեղք էին գցում իրար վրայ, բայց յետոյ իսկապէս, ինչ որ ձեռքերն ընկնում էր, գողանում էին։ Այդպէս էլ կանանց ու երեխաներին սովրեցրին։ Ու նրանց կեանքը, քանի գնաց, աւելի ու աւելի վատացաւ։ Իւանն ու Գաւրիլոն մաշեցին դատարանների շէմքերը՝ իրար վրայ գանգատ տալով. նրանք իրար դէմ դատ բաց արին թէ գիւղական ժողովներում, թէ գիւղական դատարանում և թէ հաշտարարի մօտ, այնպէս որ ամենքին էլ ձանձրացրին իրանց դատ ու գանգատով. երբեմն Գաւրիլոն էր Իւանին տուգանքի տակ գցում կամ բանտ նստեցնում, երբեմն Իւանը Գաւրիլոյին։ Եւ որքան նրանք իրար վատութիւն էին անում, այնքան աւելի ոխակալվում էին իրար դէմ։ Երբ շներն իրար վրայ են թափվում, ինչքան կռուեն, այնքան աւելի կը կատաղեն։ Շանը որ ետեւից խփում են, նա կարծում է, թէ իրան հետ կռվող շունն է կծում և նա սկսում է աւելի կատաղել։ Այսպէս էլ մեր գիւղացիներն էին. գնում էին գանգատվում իրար վրայ՝ նրանցից մէկին կամ միւսին պատժում էին, տուգանք էին առնում կամ բանտ նստեցնում, և նրանք աւելի ու աւելի թշնամանում էին իրար դէմ։ «Սպասիր,—ասում էր նրանցից ամեն մէկն իր մտքում,—ես էդ բոլորի տեղը կը հանեմ»։ Ուայսպէս նրանց թշնամութիւնը շարունակուեց վեց տարի։ Միայն ծերունին էր, որ վառարանի վրայից միշտ միևնոյն բանն էր ասում։ Երբեմն երբեմն նա սկսում էր խրատել։

—Ի՞նչ էք անում, տղէք. թողէք էդ բոլոր հաշիւները, գործերիդ մտիկ արէք. ոխ մի պահէք մարդկանց դէմ. քանի ոխակալուէք, այնքան վատ կը լինի։

Ծերունուն ականջ չէին դնում։

Եօթներորդ տարին մի անգամ այնպէս պատահեց, որ հարանքաւորների մէջ Իւանի հարսն սկսեց ամենքի առաջ խայտառակել Գաւրիլոյին, թէ նա բռնաւել է ձիաների հետ։ Գաւրիլոն հարբած էր. նա չը կարողացաւ զսպել իր բարկութիւնը, խփեց հարսին և այնպէս ամուր, որ նա մի շաբաթ պառկեց։ Հարսն երկուհոգիս էր. Իւանն ուրախացաւ, գնաց, խնդիրք տուեց քննիչին։ «Հիմի,—մտածում էր նա,—կազատուեմ հարևանից, անպատճառ նրան կամ բերդը կը նստեցնեն կամ Սիբիր կը քշեն»։ Բայց Իւանի մտածածը չը կատարուեց. քննիչը չընդունեց նրա խնդիրքը. հարսին բժշկական քննութեան ենթարկեցին—նա տեղից վեր էր կացել և մարմնի վրայ ոչ մի նշան չէր երևում։ Իւանը գնաց հաշտարարի մօտ. նա գործն ուղարկեց գիւղական դատարան։ Իւանն սկսեց աշխատել գիւղական դատարանում—գրագրին և տանուտէրին կէս վէգրօ արաղ խմացրեց և բանն էն տեղը հասցրեց, որ դատարանը վճռեց ծեծել Գաւրիլոյին ճիպոտներով։ Դատարանում Գաւրիլոյին կարդացին վճիռը։

Կարդացողը գրագիրն էր։ «Դատարանը վճռեց,—ասուած էր թղթի մէջ,—պատժել գիւղացի Գաւրիլո Գօրդէեվին ճիպոտի 20 հարուածով գիւղական վարչութեան մէջ»։ Իւանն ևս լսում էր վճռի կարդալն

ու նայում Գաւրիլոյի երեսը, որ տեսնի, թէ ինչ կանի նա։ Գաւրիլոն լսեց, գոհնատուեց, ինչպէս պատի ծեփը, շուռ եկաւ ու դուրս գնաց հաշտը։ Նրա ետևից դուրս ելաւ Իւանն և ուզում էր գնալ ձիու մօտ, բայց լսեց, որ Գաւրիլոն ասում էր. «Շատ լաւ, թող նա ձաղկել տայ իմ մէջքս. ուղիղ է, իմ մէջքս կը վառուի, բայց տեսնենք նրա մօտ էլ մի էնալիսի բան չի՞ վառուի, որ աւելի ցաւ տայ»

Այս խօսքերն որ լսեց Իւանը, իսկոյն յետ եկաւ գատաւորների մօտ։ «Արդար դատաւորներ,—ասաց նա,—Գաւրիլոն սպառնում է, որ կրակ կը տայ իմ տունս։ Դատ արէք, վկաների մօտ ասաց»

Կանչեցին Գաւրիլոյին։

— Ուղի՞ղ է դու ասացիր։

—Ես ոչինչ չեմ ասել։ Ծեծեցէք, թէ որ դա ձեր իշխանութիւնն է։ Երևում է, որ իմ արդարութիւնը բանի տեղ չէ բռնում ու մենակ ես պիտի տանջուեմ, իսկ նա ամեն բան կարող է անել։

Գաւրիլոն էլի մի ինչ որ բան կամենում էր ասել, բայց նրա պռունկները ու թշերը դողդողացին և նա շուռ տուեց երեսը դէպի պատը։ Դատաւորներն անգամ վախեցան՝ Գաւրիլոյին նայելով։ Չը լինի՞ թէ յիրաւի,—անցաւ նրանց մտքից,—էդ մարդը մի վատ բան բերէ կամ իր կամ հարևանի գլխին։

Ու ծեր դատաւորն սկսեց այսպէս խօսել.

—Տեսէք ինչ կասեմ ձեզ, սիրելի եղբայրներ։ Աւելի լաւ է՝ բարիշեցէք իրար հետ։ Դու, եղբայր Գաւրիլո, լա՛ւ արիր, որ ծանրոտք կնոջը խփեցիր։ Դեռ լաւ է, որ Աստուած ողորմացել է, բան չէ պատահել, թէ չէ գիտէս ինչ մեղք գործած կը լինէիր։ Աստ, լա՛ւ է։ Դու մեղքդ վիզդ առ ու թողութիւն խնդրէ

նրանից և նա կը ներէ։ Մենք այդ վճիռը կը փոխենք։

Երբ գրագիրը լսեց այդ խօսքերն՝ ասաց.

—Այդպէս չէ կարելի, որովհետև 117-րորդ յօդուածի զօրութեամբ հաշտութեան համաձայնութիւնը չը կայացաւ ու դատարանը տուեց իր վճիռը և այդ վճիռը պէտք է կատարուի։

Բայց դատաւորը չը լսեց գրագրին։

—Հերիք է,—ասաց նա,—լեզուդ բլբլացնես։ Առաջին յօդուածն էն է, եղբայր, որ միշտ պէտք է յիշես Աստծուն, իսկ Աստուած հրամայել է հաշտ ապրել իրար հետ։

Եւ ծերունին սկսեց համոզել գիւղացիներին, բայց չը կարողացաւ. Գաւրիլոն նրան ականջ չը դրեց։

—Ես,—ասաց նա,—համարեա յիսուն տարեկան մարդ եմ. որդիս արդէն պսակած է ու ես էս տասակ առել եմ, ոչ մի օր ծեծ չեմ կերել, իսկ հիմա չեչոտ Վանկէն ինձ ճիպոտի տակ է քաշում ու էլի ե՞ս գլուխ վէր բերեմ նրան։ Է՛, լաւ, հերիք է... Մի օր էլ Վանկէն ինձ միտը կը բերէ։

Գաւրիլոյի ձայնը նորից դողաց. էլ չը կարողացաւ խօսել։ Շուռ եկաւ ու դուրս գնաց։

Գիւղական դատարանից մինչև տուն 10 վերստ ճանապարհ պէտք էր անցնել, այս պատճառով Իւանն ուշ վերադարձաւ տուն։ Արդէն կանայք տաւարին դէմ էին գնացել։ Իւանը ձին արձակեց, տեղաւորեց ամեն բան ու տուն մտաւ։ Տանը ոչ ոք չը կար։ Տղեքը դաշտից չէին վերադարձել, կանայք էլ տաւարի հետ էին։ Իւանը նստեց թախտի վրայ ու մտածման մէջ ընկաւ։ Նա միտը բերեց, թէ ինչպէս յայտնեցին վճիռը Գաւրիլոյին, ինչպէս նա սփրթնեց

ու երեսը շուռ տուեց պատին։ Ու նրա սիրտը ճմլուեց տրտմութիւնից։ Նա մտածում էր, թէ ինչ կը լինէր իր դրութիւնը, եթէ իրան վճռէին ճիպոտներով ծաղկել։ Ու նա խղճաց Գաւրիլոյին։

Ծերունին այդ ժամանակ հազաց վառարանի վրայ, շուռ ու մուռ եկաւ, ոտները կախեց ու վայր իջաւ վառարանից։ Վայր իջաւ, հազիւ հազ հասաւ թախտին ու նստեց։ Այնպէս յոգնեց, որ կարծես մեծ ճանապարհ էր կտրել. հազաց, հազաց, խորխեց, յենուեց սեղանին ու հարցրեց.

—Հ՞ը, դատապարտեցին։

—20 հարուածի դատապարտեցին։

Ծերունին գլուխը տարաւ ու բերեց։

—Վատ բան ես անում, Իւան,—ասաց,—շատ վատ բան։ Ոչ թէ նրան, քեզ ես անում։ Լաւ, ասենք, թէ նրան ծեծեցին ճիպոտներով, քո բանդ կը հեշտանա՞յ դրանով։

—Էլ չի անի,—պատասխանեց Իւանը։

—Ի՞նչ չի անի. նա միթէ քեզանից աւելի վատ բան է անում։

—Էլ ի՞նչ պիտի անէր. կնիկ մարդուն քիչ է մնում սպանէր. հիմի էլ ան է տալիս, որ տունը կը կրակէ։ Ի՞նչ, շնորհակալութիւն անենք նրան դրա համար։

Ծերունին խորը շունչ քաշեց ու ասաց.

—Է՜հ, Իւան, Իւան, դու ամբողջ աշխարհը ման ես գալիս, իսկ ես ահա քանի տարի է վառարանի վրայ եմ օրս անցկացնում ու դու կարծում ես, թէ դու ամեն բան տեսնում ես, իսկ ես՝ ոչինչ։ Չէ, որդիս, դու ես, որ ոչինչ չես տեսնում, ոխն ու Հարութիւնը քո աչքերդ փակել են։ Ուրիշի մեղքերը

մէկ-մէկ համբում ես, իսկ քոնդ մոռանում։ Ինչ ասել կուզէ, որ Գաւրիլոն լաւ բան չէ անում. բայց եթէ մենակ նա վատ բան ասէր, գիշութիւն առաջ չէր գայ։ Աշխարհիս մէջ գիշութիւնը միթէ միայն մի մարդուց է ծագում։ Գիշութիւնը երկու կողմից է։ Նրա վատը դու տեսնում ես, իսկ քոնը—չէ։ Թէ որ մենակ նա լինէր վատ, իսկ դու՝ լաւ, գիշութիւն չէր լինի։ Ո՞վ փեսեց նրա մօրուքը. խոտի դէզը ո՞վ տարաւ միջնատեղից. ո՞վ էր քաշ տալիս նրան դատարանները։ Դու ամեն բան նրա վրայ ես գցում։ Ինքդ վատ ես ապրում, դրա համար էլ ամեն բան վատ է գնում։ Է՜հ, որդի, ես էդպէս չէի ապրում ու էդպէս էլ չէի սովրեցնում քեզ։ Մենք նրա հօր, լուսահոգու հետ էդպէ՞ս էինք ապրում։ Մենք, գիտես, ի՞նչպէս էինք ապրում։ Ինչպէս հարևաններ։ Թէ նրա ալիւրը վերջանում էր՝ գալիս էր կինն ու ասում.—Ֆրոլ ապէր, ալիւր է պէտք։—Գնա, ասում էի, հարսի, ամբարը, տար ինչքան պէտք է։ Թէ որ մարդ չէր ունենում ձիանը քշելու, ես ասում էի, գնա, Վանեատակ, տար ձիանը։ Իսկ իմ տանս էլ ինչ պակասութիւն էր լինում—վազում էի նրա մօտ։ Գօրդէյ ապէր, էս է պէտք, էն է պէտք։—Տա՛ր, ասում էր, Ֆրոլ ապէր։ Էսպէս էր գնում մեր բանը ու դրա համար էլ հեշտ էինք ապրում։ Իսկ հիմա ինչ է։ Մ՚ քիչ առաջ զինուորը Պլևնայի մասին էր պատմում. ձեր հիմիկուայ կռիւը Պլևնայից էլ վատ է։ Դա կեանք է, դա ապրե՞լ է։ Հապա մեղքը։ Դու աղամարդ ես, դու տան գլխաւորն ես, քեզանից էլ կը պահանջուի։ Դու ի՞նչ ես քո տան կնիկ մարդկանց ու երեխաներին սովրեցնում։ Շներին նմանել։ Քիչ առաջ Տարասկան, էն խլնքոտը, տեսնէիր,

թէ ինչպէս էր Արինա նանին հէր ու մէր հայհոյում, իսկ մայրը նայում էր ողային ու ծիծաղում։ Լաւ բան է։ Չէ՞ որ քեզանից կը պահանջուի։ Դու մէկ հոգուդ մասին մտածիր։ Մի՞թէ էդպէս է պէտք։ Դու ինձ մէկ խօսք ասա, ես քեզ երկուսը, դու ինձ մէկ ապտակ տուր, ես քեզ—երկուսը։ Չէ՞, որդի, Քրիստոս որ աշխարհիս վրայ շրջում էր, մեզ, անխելքներիս, էդպէս չէր սովրեցնում։ Քեզ մէկը թէ որ մէկ խօսք ասեց—դու լռիր. նա ինքը կը հասկանայ ու նրա խիղճը կը տանջէ իրան։ Ա՜յ թէ ինչ էր նա, մեր Հայրը, մեզ սովրեցնում։ Քեզ մի ապտակ տուին, դու շուռ արի, մէկէլ երեսդ դէմ արա, ահա, ասա, խփիր, թէ որ ես դրան արժանի եմ։ Կը տեսնես, որ նրա խիղճը կը խօսի, նա կը խոնարհի ու կը լսէ քեզ։ Այսպէս է Նա մեզ հրամայել և ոչ թէ հպարտանալ ու ամեն չարութիւն գործել։ Հ՛ը, ինչ ես լռում. էնպէս չեմ ասում։

Իւանը լռել էր ու ականջ էր դնում։

Ծերունին սկսեց հազալ, հազիւ կարողացաւ խորխել ու նորից սկսեց խօսել։

—Դու կարծում ես, Քրիստոս մեզ վա՞տ բան էր սովրեցնում։ Չէ՞ որ ամեն բան մեզ համար, մեր լաւութեան համար էր ասում։ Դու հէնց միայն քո երկրային կեանքիդ վրայ մտածիր. լաւ եղաւ, թէ վատ, որ էդ Պլենան ձեր մէջ սկսուեց. դու մէկ հաշուիր, տես, թէ ինչքան փող փչացրիր դատարաններում, ինչքան ճանապարհի ծախս արիր, ինչքան ուրիշ ծախսեր ունեցար։ Քո որդիքդ մեծացել, դարձել են մէկ-մէկ առիւծ, դու հիմի պիտի ուրախ-զուարթ, քո քէֆին ապրէիր ու բարիքդ աւելացնէիր, այն ինչ քո ունեցածդ կամաց-կամաց սկսել է

պակասել։ Ինչի՞ցն է. ամեն բան հէնց նրանից՝ քո հպարտութիւնից։ Դու պէտք է քո որդոցդ հետ գնաս վար անես ու քո ձեռքովդ ցանես, չարը քեզ տանում է դատարան կամ աբլակատի մօտ է քշում։ Թէ որ ժամանակին չը վարես, ժամանակին չը ցանես, հողն էլ ի հարկէ, չի բուսցնի։ Վարսակն ինչի՞ այս տարի լաւ չեկաւ։ Ե՞րբ ցանեցիր։ Երբ որ քաղաքից եկար. և ինչ տարար դատարանում. ինչ որ տարբար քո գլխիդ կը թափուի։ Է՜հ, որդի, դու քո գործդ իմացիր. քորանիդ կաց դաշտումն ու տանը, իսկ եթէ մէկը քեզ վիրաւորէ, դու, ինչպէս Աստուած պատուիրել է, ներիր, համ գործդ յաջողակ կը գնայ, համ սիրտդ հանգիստ ու թեթև կը լինի։

Իւանը լռում էր։

—Դու գիտե՞ս ինչ, Վանեա, արի ականջ դիր ծերի խօսքին. գնա լծիր բոզ ձին ու էն ճանապարհով, որով եկար, գնա գիւղական վարչութիւնը. վերջ տուր էնտեղ բոլոր հաշիւներին. առաւօտեան գնա Գաւրիլօյի մօտ, հաշտուիր հետը քրիստոնէի պէս ու կանչիր նրան քեզ մօտ. վաղը տօն է (Աստուածածնի ծննդեան նախընթաց օրն էր), ինքնաեռ դնել տուր, կէս շտոֆ արաղ առ ու թափ տուր վրայիցդ բոլոր մեղքերդ, էնպէս որ էլ անունը չը լինի, ու էդ միևնոյն բանը պատուիրիր բոլոր կնիկ-մարդկանց ու երեխաներին։

Իւանը հոգոց քաշեց. նա մտածում էր, թէ ծերունին ուղիղ է ասում. նրա սիրտը բոլորովին կակղել էր, միայն չէր իմանում, թէ ինչպէս անէ այդ բանը, ինչպէս հաշտուի։

Ու ծերունին կրկին սկսեց խօսել. կարծես հասկացաւ, թէ ինչ է մտածում Իւանը։

—Գնա, Վանեա, բանը յետ մի դցիր. հանգցրու կրակը, քանի դեռ ուշ չէ. թէ չէ՝ կը բորբոքուի, էլ չես կարողանայ։

Ծերունին ուզում էր էլի մի բան ասել, բայց խօսքը կիսատ մնաց,—ներս եկան կանայք ու սկսեցին վրայ տալ կաչաղակի պէս։ Բոլոր լուրերն արդէն հասել էին նրանց ականջը. նրանք արդէն գիտէին, որ Գաւրիլոյին դատապարտել էին ծեծի, գիտէին, որ նա սպառնացել էր կրակ տալ հարևանի տունը։ Ամեն բան իմացել էին, իրանցից էլ մի բանի սուտ վրայ դրել ու արդէն կարողացել էին արօտում Գաւրիլոյի տանեցիների հետ մի բերան կռուել. նրանք սկսեցին պատմել, թէ Գաւրիլոյի հարսը նրանց ասէ տուել գիւղական վարչութեան գործավարի անունով,—իբր թէ գործավարը Գաւրիլոյի կրտսն է պահում. հիմա նա ամբողջ գործը շուռ կը տայ, իսկ ուսուցիչն արդէն մի ուրիշ խնդիրք է գրել Իւանի վրայ թաղաւորին իրան, ու խնդրքի մէջ ամեն բան գրուած է՝ և երկաթեայ սողնակի մասին, և բանջարանոցի մասին, և թէ սրանից յետոյ Իւանի բակի կէսը իրանց կը հասնի։ Իւանը լսեց նրանց պատմածներն ու նորից բարկութիւնն եկաւ. նա միտքը փոխեց ու չը գնաց Գաւրիլոյի հետ հաշտուելու։

Գիւղացու տանը միշտ բանն անպակաս է։ Իւանը չուզեց խօսել կանանց հետ, վեր կացաւ տեղից ու դուրս գնաց. գնաց կալն ու մարագը նայելու։ Մինչև որ նա վերջացրեց այնտեղ գործն ու դարձաւ բակը՝ արևը մայր մտաւ։ Տղէքն էլ տուն դարձան դաշտից։ Նրանք գարնանացանի համար աշունքուանից վար էին անում երկու դութանով։ Իւանը դէմ գնաց նրանց, հարց ու փորձ արեց աշխատանքի մասին, օգնեց բանները տեղաւորելու, յետ դրեց ձիու պատառոտուած վզնոցը, որ կարկատէ, ուզում էր փայտեայ ձողերն էլ տանել ու դարսել երդի տակ, բայց արդէն բոլորովին մթնեց։ Իւանը թողեց ձողերը վաղուան, անասունների առաջ խոտ գցեց, դուռը փակեց և դռնատակի անցքը ծածկեց։ «Հիմի հաց ուտեմ ու քնեմ»—մտածեց Իւանը, վեր առաւ ձիու վզնոցն ու ներս մտաւ տուն։ Ու մոռացաւ նա այդ ժամանակ և Գաւրիլոյին և այն խօսքերը, որ հայրը ասաց։ Հէնց էն էր բռնեց դռան օղակը և ուզում էր հաշտը մոռնել, որ լսեց հարևանի խռպոտ ձայնը ցանկապատի ետևից. հարևանը հայհոյանքներ էր թափում բերանից։ «Ինչացու է էդ սատանի որդին,—բղավում էր Գաւրիլոն,—նրան պէտք է սպանել»։ Այդ խօսքերից Իւանի սրտում կրկին զարթեց առաջուայ տենչութիւնը հարևանի դէմ։ Կանգնեց նա մի քիչ, ականջ դրեց քանի որ Գաւրիլոն հայհոյանքներ էր թափում։ Երբ Գաւրիլոն լռեց, Իւանը տուն մտաւ։ Ներս մտաւ, տեսաւ արդէն ճրագը վառել են. ջահել հարսը, անկիւնում նստած, բուրդ էր մանում, պառաւն իրիկնամաց էր գցում, մեծ որդին կաշի էր ոլորում արեխների համար, երկրորդ որդին սեղանի առաջ գիրք էր կարդում, իսկ Տարասկան պատրաստվում էր ձիանը գիշերն արօտ տանելու։

Տանն ամեն բան լաւ էր ու դուրեկան, թէ որ էդ ցաւը չը լինէր—էդ չար հարևանը։

Իւանը ներս մտաւ բարկացած, վայր գլորեց կատուին թախտի վրայից և յանդիմանեց կանանց, որ տաշտն իրան տեղը չեն դրել։ Ու տխրեց Իւանը. նստեց, յօնքերը կախեց և սկսեց ձիու վզնոցը կարկատել, բայց նրա մտքից դուրս չէին գալիս Գաւ-

բիլոյի խօսքերը. նա միտը բերեց, թէ ինչպէս Գաւրիլոն դատարանում ան էր տուել իրան և թէ ինչպէս հէնց հիմա խռպոտ ձայնով բղաւում էր մէկի մասին, թէ պէտք է սպանել նրան։

Պառաւը Տարասկային իրիկնահաց դցեց։ Տարասկան հացը կերաւ, մուշտակը հագաւ, գօտին կապեց, հետն էլ հաց վերցրեց ու գնաց ձիանների մօտ։ Մեծ եղբայրը կամենում էր վեր կենալ, գնալ ճանապարհ դնելու Տարասկային, բայց Իւանն ինքը վեր կացաւ ու դուրս եկաւ։ Դուրսն արդէն մութը պատել էր. աչք աչքի չէր տեսնում. սև-սև ամպեր էին կախուել ու քամի էր բարձրացել։ Իւանը վայր իջաւ պատշգամբից, փոքր որդուն հեծցրեց ձիուն, քշեց ձիու ետևից քուռակին, կանգնեց, նայեց ու ականջ դրեց Տարասկայի ձիու ոտնաձայնին. լսեց, որ որդին միացաւ միւս տղերանցը և ամենքը միասին հեռացան այնքան, որ էլ ոչ մի ձայն չէր հասնում Իւանի ականջին։ Իւանն երկար կանգնեց բակի մեծ դռան մօտ և շարունակ յիշում ու մտածում էր Գաւրիլոյի խօսքերի մասին, «Վայ թէ նրա մօտ էնպիսի բան վառուի, որ աւելի ցաւ տայ»։

«Ինչ որ մաքում դրել է՝ կանէ,—մտածում էր Իւանը,—իրան անդամ չի խնայի։ Հիմի չորայինն է ու հետն էլ քամի. ետևի կողմերից ներս կը մտնի բակը, կրակ կը տայ ու կը փախչի, արի ու բռնիր նրան։ Տունս կը քանդէ սևահոգին ու արդար դուրս կը գայ։ Ա՜յ, թէ որ տեղն ու տեղը բռնէի, էլ ձեռքիցս չէր պրծնի»։ Ու այնպէս ամուր ցցուեց այս միտքն Իւանի գլխում, որ նա յետ չը գնաց դէպի պատշգամբը, այլ իջաւ ցած, դռնից դուրս եկաւ փողոցն ու գնաց անկիւնի կողմը։ «Արի մէկ

պատուիր բակի չորս կողմը. ով է իմանում ինչ կարող է պատահել»։ Ու կամաց քայլերով Իւանն անցաւ առաջ՝ դռան կողմի վրայ։ Նա նոր էր ծռուել անկիւնից, որ նայեց ցանկապատի երկայնութեամբ ու նրան թուաց, թէ միւս անկիւնում ինչ որ մի բան երևաց, կարծես դուրս հանեց գլուխն և նորից թաց կացաւ անկիւնի ետևը։ Իւանը կանգ առաւ, շունչը պահեց, սկսեց ականջ դնել. տեսնում է, որ ամեն ինչ խաղաղ է, միայն քամին է խշխշացնում ծառի տերևները և ծղնոտը կտուրի վրայ։ Առաջ որ տանից դուրս եկաւ, այնքան մութն էր, որ աչք աչքի չէր տեսնում, բայց յետոյ աչքերը սովորեցին մթութեան ու Իւանը տեսաւ ամբողջ անկիւնը, և արօրը, և քիւը։ Մի քիչ կանգնեց, նայեց, տեսաւ ոչ ոք չը կար։

«Շատ կարելի է երևոյթք էր, բայց էլի մէկ պտոյտ գամ», մտածեց ինքն իրան Իւանն և գողի նման սկսեց առաջ գնալ մարագի առաջով։ Նա տրեխներով էր ու ոտներն այնպէս կամաց էր փոխում, որ ինքն էլ չէր լսում իր ոտների ձայնը։ Հասաւ անկիւնը. նայեց տեսաւ, որ յանկարծ միւս ծայրում մի բան փայլեց արօրի մօտ ու հանգաւ։ Իւանի սիրտն սկսեց լիլիպալ. նա կանգ առաւ։ Հէնց որ կանգ առաւ, տեսաւ միևնոյն տեղում կրակն աւելի պայծառ փայլեց. պարզ երևում էր, որ գլխարկը հագին մի մարդ, քամակն Իւանին արած, չոքել էր ծնկների վրայ և մի խուրձ ծղնոտ ձեռքին բռնած՝ փչում էր, որ կրակը թէժանայ։ Իւանի սիրտն աւելի սաստիկ սկսեց խփել. նա ամբողջ ոյժը հաւաքեց ու մեծ-մեծ քայլերով առաջ վազեց, բայց այնպէս արագ, որ ինքն էլ չը գիտէր, թէ ոտներն

ինչպէս է փոխում։ «Է՛,—մտածում էր Իւանը,—հիմա ձեռքից չի պրծնի. տեղն ու տեղը կը բռնեմ»։

Իւանը մի քանի քայլ հազիւ էր առաջ անցել, որ յանկարծ կրակը փայլեց շատ պարզ ու պայծառ ու ոչ միևնոյն տեղում և ոչ փոքր կրակ, այլ ահագին բոց, —ծղնոտը կպել էր քիւի տակ ու քամին բոցը քշում էր դէպի կտուրը. Գաւրիլօն կանգնած էր այնտեղ և ամբողջովին երևում էր։

Ինչպէս բազէն դեղձանիկի, այնպէս վրայ պրծաւ Իւանը կաղին բռնելու։ «Ծալեմ, տակս կը կոխեմ, էլ չի պրծնի»։ Բայց կաղը, երևի, լսեց ոտնաձայնը, յետ նայեց ու, զարմանք բան, որտեղից այժ եկաւ վրէն, պուկ եկաւ, սկսեց ընկին տալ ու փախչել մարագի առաջով նապաստակի նման։

—Ձեռ փախչի,—բղաւեց Իւանն ու վրայ ընկաւ։

Հէնց էն է, ուզում էր օձիքից բռնել, որ Գաւրիլօն դուրս պրծաւ նրա ձեռքից ու Իւանի բռի մէջ մնաց նրա փէշը միայն. փէշը պատռուեց և Իւանը վայր ընկաւ. վեր թռաւ նա ու «հա՛յ, հաւա՛ր, բռնեցէք» բղաւելով կրկին վազեց Գաւրիլօյի ետևից։

Մինչև որ Իւանը վեր կացաւ ընկած տեղից, Գաւրիլօն արդէն իր բակի մօտ էր. բայց այնտեղ էլ Իւանը հասաւ նրան և ձեռքը տարաւ, որ բռնէր, յանկարծ մի հարուած շշմեցրեց նրան, կարծես մի մեծ քար դիպաւ գլխին. դա Գաւրիլօյի բանն էր. երբ Իւանը հասնում էր նրա ետևից, Գաւրիլօն վեր առաւ մի կաղնի հաստ փայտ ու ամբողջ ուժով խփեց նրա գլխին։

Իւանի ուշքը գնաց. նրա աչքերը կայծակեցին, յետոյ մթնեցին ու նա երերաց ոտների վրայ։ Երբ ուշքի եկաւ, Գաւրիլօն չը կար. չորս բոլորքը

լոյս էր, ինչպէս ցերեկը, և նրա բակի կողմից գըռռոցի ու ճաքճքոցի ձայն էր լսվում, կարծես երկաթուղու գնացք էր անցնում։ Իւանը շուռ եկաւ ու տեսաւ, որ իր բակի մէջ ետևի մարագն ամբողջովին բոցերի մէջ է, կողքի մարագը նոր է սկսել վառուել և կրակը, ծուխն ու ծղնոտի վառ կտորները քամին քշում, տանում է տան կողմը։

«Էս ինչ բան է, վա՛յ, ձեր հոգուն մեռնիմ,—բղաւեց Իւանն և երկու ձեռքը բարձրացնելով խփեց ծնկներին։—Ախր պէտք էր միայն դուրս քաշել ծղնոտը քիւի տակից ու տրորել։ Վա՛յ, էս ինչ բան է»,—կրկնեց նա։ Ուզում էր էլի բղաւել, շունչը կտրուեց, ձայնը դուրս չէր գալիս։ Ուզում էր վազել—ոտները չէին շարժվում, մէկը միւսին էր դիպչում։ Սկսեց կամաց առաջ գնալ, բայց էլի երեբաց, էլի շունչը կտրուեց։ Կանգնեց մի քիչ, ուշքը հաւաքեց, կրկին առաջ գնաց։ Մինչև որ նա պատյա տուեց մարագի առաջով ու հասաւ հրդեհին, կողքի մարագն էլ բոցավառվում էր. արդէն կրակն անցել էր տանը. նրա մի անկիւնը և բակի դուռը այրվում էին. տանից բոցեղէն լեզուներ էին դուրս գալիս ու բակն անգամ մտնելու ճանապարհ չը կար։ Մարդկանց մեծ բազմութիւն հաւաքուեց, բայց ինչ կարող էին անել։ Հարևանները տներից դուրս էին կրում իրանց ունեցածն և բակերից փողոց քշում անասուններին։ Իւանի տնից յետոյ սկսեց այրուել Գաւրիլօյի տունը. ապա քամի բարձրացաւ, կրակը քշեց փողոցի միւս կողմը. գիւղի կէսն այրուեց։

Իւանի տանից ոչինչ չը կարողացան ազատել, միայն ծերունուն դուրս տարան ու իրանք դուրս վազեցին իրանց հագի շորերով։ Բացի այն ձիերից,

որոնց տարել էին գիշերով արածացնելու, բոլոր անասուններն այրուեցին. այրուեցին հաւերը թառերի վրայ, սայլերը, արօրները, տափանները, կանանց սնդուկները, հացի ամբարները—ամեն ինչ այրուեց։

Գաւրիլօյի տանից անասուններին դուրս քշեցին ու քիչ ու միչ բան ազատեցին։

Հրդեհը վառվում էր երկար, ամբողջ գիշերը։ Իւանը կանգնած էր իր տան մօտ, նայում էր կրակին ու շարունակ կրկնում. «Էս ինչ բան է, ձեր ջանին մեռնեմ, ախր պէտք էր միայն դուրս քաշել քիւի տակից ու կոխոտել»։ Բայց երբ տան առաստաղը փուլ եկաւ, նա վազեց մտաւ բոց կրակի մէջ, բռնեց կիսայրուած գերանն ու աշխատում էր դուրս քաշել։ Կանայք տեսան նրան ու սկսեցին յետ կանչել, բայց Իւանը դուրս բերեց մէկ գերանը և վազեց միւսի եռևից, միայն այս անգամ ուշքն անցաւ և նա ընկաւ կրակի վրայ։ Այդ որ տեսաւ որդին՝ մտաւ կրակի մէջ ու դուրս բերեց նրան։ Իւանն այրել էր մօրուքը, մազերը, շորերը, փչացրել ձեռքերը, բայց ոչինչ չէր զգում։ «Ցաւից խելքը կորցրել է»,—ասում էր ժողովուրդը։ Հրդեհն սկսեց հանգչել, բայց դեռ Իւանը կանգնած էր և միայն կրկնում էր նոյն խօսքերը։ «Ձեր հոգուն մեռնեմ, էս ինչ բան էր. պէտք էր միայն դուրս քաշել»։

Առաւօտուայ դէմ գիւղական տանուտէրն ուղարկեց իր որդուն կանչելու Իւանին։

—Իւան ապէր, հէրդ մեռնում է, պատուիրեց կանչել քեզ, որ տեսնի։

Իւանը մոռացել էր հօրը. նա չը հասկացաւ, թէ ինչ են ասում։

—Ի՞նչ հէր, ինչ ես խօսում,—ասաց նա տղային,—ուր են կանչում։

—Ասաց, որ քեզ կանչենք, նա մեր տանը մեռնում է։ Գնանք, Իւան ապէր։

Տանուտէրի որդին սկսեց քաշել նրա թևից։ Իւանը գնաց նրա ետևից։ Երբ ծերունուն դուրս էին բերում տանից՝ վառուող ծղնոտը թափուեց նրա վրայ ու տեղ-տեղ այրեց նրա մարմինը։ Նրան տարան գիւղի հեռաւոր թաղը, որ ազատուել էր հրդեհից։

Երբ Իւանը գնաց հօր մօտ, տանուտէրի խրճիթում մնացել էր միայն նրա պառաւը և երեխաներն էլ քնած էին վառարանի վրայ. միւս բոլոր տանեցիք հրդեհի մօտ էին։ Ծերունին պառկած էր թախտի վրայ՝ մոմը ձեռքին բռնած ու աչքը գցել էր դռանը։ Երբ որդին ներս մտաւ, նա շարժուեց տեղի մէջ։ Պառաւը մօտեցաւ նրան ու ասաց, թէ որդիդ եկաւ։ Նա պատուիրեց, որ մօտիկ կանչէ նրան։ Իւանը մօտեցաւ և ծերունին սկսեց խօսել։

—Տեսնում ես, Վանեատակա,—ասաց նա,—ես քեզ չէի ասում։ Ո՞վ վառեց գիւղը։

—Նա, ապէր, նա, ես տեղն ու տեղը տեսայ նրան կրակ տալիս։

—Իւան,—ասաց ծերունին,—իմ մահս հասել է, դու էլ մահկանացու ես, դու էլ մի օր պիտի մեռնիս. ասա, ուր մեղքն է։

Իւանն աչքերը գցեց հօր վրայ և լռեց. նա ոչինչ չը կարողացաւ պատասխանել։

—Խոստովանիր Աստծու առաջ, ուր մեղքն է։ Ի՞նչ էի ասում ես քեզ։

Իւանն ուշքի եկաւ և նոր միայն հասկացաւ

ամեն ինչ։ Նա խորը շունչ քաշեց պնչերով ու ասաց.

—Իմս է, ապէր, իմ մեղքս է։ Եւ նա ծունկ չոքեց հօր առաջ, լաց եղաւ ու ասաց.—Ներիր ինձ, ապէր, մեղաւոր եմ ես քո և Աստծու առաջ։

Ծերունին շարժեց ձեռները, մոմը ձախ ձեռքն առաւ, իսկ աջն ուզեց տանել ճակատին, որ խաչակնքուի, բայց չը կարողացաւ ու վայր թողեց։

—Փառք քեզ, Աստուած, փառք քեզ,—ասաց նա և աչքերը դցեց որդու երեսին։

—Վանկա, ա՛յ Վանկա։

—Ի՞նչ է, ապէր։

—Ի՞նչ պիտի անես հիմի։

—Չը գիտեմ, ապէր, ես էլ չը գիտեմ, թէ ինչպէս պիտի ապրենք։

Ծերունին փակեց աչքերը, շրթունքները շարժեց, կարծես հաւաքեց իր ամբողջ ոյժն և նորից բացեց աչքերն ու ասաց։

—Կապրիք։ Թէ Աստուած կը յիշէք, կապրիք։ Ծերունին էլի մի քիչ լռեց, ժպտաց ու ասաց.

—Տես, Վանեա, չասես, թէ ով կրակ տուեց։ Ուրիշի մէկ մեղքը որ թաղցնես, Աստուած քեզ երկուսը կը ներէ։

Եւ ծերունին բռնեց մոմն երկու ձեռքով, ձեռները դրեց կրծքի վրայ, շունչը փչեց, ձգուեց ու մեռաւ։

Իւանն ոչ ոքի բան չասաց Գաւրիլոյի մասին. և ոչ մի մարդ չիմացաւ, թէ ինչից ծագեց հրդեհը։

Եւ Իւանի սիրտն ինչաւ ու այլ ևս ոչ չէր պահում Գաւրիլոյի դէմ։ Գաւրիլոն զարմանում էր Իւանի վրայ, որ նա ոչ ոքի բան չասաց։ Սկզբում նա

վախենում էր Իւանից, յետոյ սովորեց։ Տղամարդիկ որ դադարեցին կռուելուց, դադարեցին և կանայք ու երեխաները։ Քանի որ նոր տներ էին շինում, երկու ընտանիքն էլ մէկ բակում էին ապրում, իսկ երբ գիւղը նորից շինուեց ու տներն աւելի լայն ու ընդարձակ տեղաւորուեցին, Իւանն ու Գաւրիլոն մնացին էլի հարևաններ, միևնոյն ծուարի մէջ։

Եւ դրանից յետոյ Իւանն ու Գաւրիլոն ապրում էին իրար հետ, ինչպէս լաւ հարևաններ, այնպէս, ինչպէս առաջ ապրել էին նրանց հայրերը։ Եւ միշտ Իւան Շչերբակովը յիշում էր հօր պատուէրն ու Աստծու ցուցմունքները, որ կրակը պէտք է հանգցնել սկզբում։

Եւ եթէ նրան մէկը մի վատ բան էր անում, աշխատում էր ոչ թէ վրէժ հանել նրանից, այլ բանը ուղղել. և եթէ մէկը մի վատ խօսք էր ասում նրան, աշխատում էր ոչ թէ աւելի վատ խօսքով պատասխանել, այլ մտածում էր, թէ ինչպէս անէ, որ վատ խօսողին սովրեցնէ չասել այդպիսի բան։ Ու այդպէս էլ իր տանեցի կանանց ու երեխաներին էր սովորեցնում։

Այսպէս վարուելով Իւան Շչերբակովը բոլորովին դրստուեց ու սկսեց առաջուանից աւելի լաւ ապրել։

ՈՒՐ ՍԷՐ ԿԱՅ՝
ԱՅՆՏԵՂ ԷԼ ԱՍՏՈՒԱԾ

Քի քաղաքում ապրում էր կոշկակար Մարտին Աւդէյիչը։ Նա կենում էր նկուղում, մի հատիկ պատուհան ունեցող փոքրիկ սենեակում։ Պատուհանը նայում էր փողոցին. այնտեղից երևում էր մարդկանց անցուդարձը. թէպէտ երևում էին միայն անցնողների ոտները, բայց Մարտին Աւդէյիչը կոշիկներից էլ ճանաչում էր նրանց։ Վաղուց նա ապրում էր միենոյն տեղում և շատ ծանօթներ ունէր։ Շատ քիչ կոշիկներ կը գտնուէին թաղի մէջ, որ մէկ, երկու կամ աւելի անգամ անցած չը լինէին նրա ձեռքով։ Որոնց տակերին կաշի էր դցել, որոնց կարկատան, որոնց պատռուածներն էր կարել, որոնց էլ բկերից կարել՝ բոլորովին նորն էր կարել։ Ու շատ անգամ պատուհանից նա տեսնում էր իր աշխատանքը։ Աւդէյիչը գործ շատ ունէր, որովհետև բանը լաւ էր շինում, լաւ ապրանք բանեցնում, աւել գին չէր ուզում ու տուած խօսքը սրբութեամբ պահում էր։ Եթէ կարող էր ժամանակին հասցնել, յանձն էր առնում, թէ որ չէ՝ չէր խաբում, այլ առաջուց ասում էր։ Ու ամենքն այդպէս էլ գիտէին Աւդէյիչին. դրա համար էլ նրան աշխատանք երբէք չէր պակասում։

Աւդէյիչը միշտ էլ լաւ մարդ էր եղել, բայց երբ ծերացաւ, հոգու մասին աւելի սկսեց մտածել ու մօտենալ Աստծուն։ Երբ դեռ Մարտինը բանուոր էր ուրիշ վարպետի մօտ, նրա կինը մեռաւ ու թողեց երեք տարեկան մի տղայ։ Նրանց երեխաները չէին ապրում. մեծերն առաջ էին մեռել։ Աւդէյիչն առաջ ուզում էր որդուն ուղարկել գիւղ՝ քրոջ մօտ, բայց յետոյ թողեց այդ միտքը. «Դժուար կը լինի իմ Կապիտօշկի համար ուրիշի ընտանիքի մէջ ապրել, աւելի լաւ է ինձ մօտ պահեմ»—մտածեց նա։

Եւ Աւդէյիչը դուրս եկաւ վարպետի մօտից ու որդու հետ միասին առանձին սենեակում սկսեց ապրել։ Բայց Աստուած որդկերանց կողմից բաղդ չէր կամեցել Աւդէյիչին։ Տղէն նոր էր մեծացել, նոր էր սկսել օգնել և ուրախացնել հօրը, որ նրա վրայ մի ինչ-որ հիւանդութիւն եկաւ. երեխան պառկեց, մի շաբաթ չարչարուեց տաքութեան մէջ ու մեռաւ։ Մարտինը թաղեց որդուն ու յուսահատուեց։ Այնպէս յուսահատուեց, որ սկսեց Աստծու վրայ տրտնջալ։ Մարտինի վրայ մի այնպիսի տրամութիւն եկաւ, որ շատ անգամ մահ էր խնդրում Աստծուց ու իր մրքում մեղադրում Նրան, որ Նա իրան, ծերուկին, չը տարաւ, այլ մինուճար սիրելի որդուն։ Աւդէյիչը ժամ-պատարագից անգամ կտրուեց։

Եւ ահա մի անգամ Երրորդութեան վանքից Աւդէյիչի մօտ եկաւ նրա երկրացի մի շրջիկ ծերուկ։ Ուլթերորդ տարին էր, որ այդ ծերուկը վանքից վանք էր ման գալիս։ Աւդէյիչն սկսեց զրոյց անել նրա հետ ու գանգատուել իր բաղդից։

—Ապրելու ցանկութիւն անգամ չունեմ, մարդ Աստուծոյ,—ասում էր,—կեանքն էլ աչքիս չէ գա-

լիս. հէնց միայն մեռնելու վրայ եմ մտածում. մէկ էդ խնդիրքն ունեմ Աստծուց. էլ ես հիմի մի անյոյս մարդ եմ. իմ բանս պրծած է։

—Էդպէս չէ կարելի խօսել,—ասաց ծերունին,—լաւ չէ. լաւ խօսքեր չեն, մենք չը պիտի քննենք Աստծու գործերը։ Բանն ոչ թէ մեր խելքով պիտի լինի, այլ Աստծու դատաստանով։ Աստուած էնպէս էր կամեցել, որ քո որդին մեռնի, իսկ դու—ապրես։ Ուրեմն բարին էդ է։ Դու որ յուսահատվում ես՝ էդ նրանից է, որ դու ուզում ես լոկ քո անձնական ուրախութեան համար ապրել։

—Հապա էլ ինչո՞ւ համար են ապրում,—հարցրեց Մարտինը։

—Աստծու համար պէտք է ապրել, Մարտին,—ասաց ծերուկը,—Նա է տուել քեզ կեանքը. Նրա համար էլ պէտք է ապրես։ Երբ որ կը սկսես Նրա համար ապրել, ոչ մի բանի վրայ չես տրտնջայ ու կեանքը քո աչքին թեթև կերևայ։

Մարտինը մի քիչ լռեց ու յետոյ ասաց.

—Բայց ինչպէս պէտք է ապրել Աստծու համար։

—Թէ ինչպէս պէտք է ապրել Աստծու համար՝ էդ մեզ Քրիստոս ցոյց է տուել։ Դու կարդալ գիտես. գնիր Աւետարան ու կարդա. Նրանից էլ կիմանաս, թէ ինչպէս են ապրում Աստծու համար. նրա մէջ ամեն բան նշանց է տուած։

Այս խօսքերը շատ դուր եկան Աւդէյիչի սրտին. հէնց նոյն օրը նա գնաց ու գնեց իրան համար մի հատ խոշոր տառերով տպած Նոր-Կտակարան ու սկսեց կարդալ։

Աւդէյիչն ուզում էր կարդալ միայն տօն օրե-

ելին, բայց երբ սկսեց կարդալ՝ նրա հոգին այնպէս փառաւորուեց, որ սկսեց ամեն օր կարդալ։ Պատահում էր՝ Աւդէյիչը կարդալով այնքան էր գրաւվում, որ լամպայի մէջ ամբողջ նաւթը վառվում պրծնում էր, իսկ նա չէր կարողանում պոկ գալ գրքից։ Ու այսպէս Աւդէյիչն սկսեց կարդալ ամեն երեկոյ։ Եւ որքան աւելի էր կարդում, այնքան աւելի պարզ հասկանում էր, թէ ինչ է ուզում Աստուած նրանից և թէ ինչպէս պէտք է ապրել Աստծու համար։ Ու նրա սիրտը քանի գնում այնքան աւելի թեթևանում էր։ Առաջ, երբ պառկում էր քնելու, միշտ ախ ու վախ էր քաշում, միշտ միտքն էր բերում Կապիտոշկին, բայց հիմա միայն ասում էր. «Փառք քեզ, Տէր, փառաց թագաւոր. թող քո կամքդ լինի»։

Եւ այդ օրերից սկսած Աւդէյիչի ամբողջ կեանքը փոխուեց։ Առաջ, պատահում էր, որ ուսներին նա գնում էր թէյատուն թէյ խմելու ու արաղից էլ, տեղն եկած ժամանակ, երեսը չէր շուռ տալիս։ Խմում էր ծանօթ մարդկանց հետ ու թէպէտ չէր հարբում, բայց էլի թէյատնից դուրս էր գալիս քիչ կոնծած ու դատարկ բաներ էր խօսում—բղաւում, ճղաւում դուռ տեղը և բամբասում մարդկանց։ Հիմա այդ ամենը ինքն իրան մոռացուեց։ Նրա կեանքը դարձաւ խաղաղ և ուրախ։ Առաւօտից նա նստում էր աշխատելու. աշխատում էր մինչև երեկոյ, ինչքան որ պէտք էր, յետոյ լամպը վայր էր բերում կախած տեղից, գնում սեղանի վրայ, վերցնում էր գիրքը դարակից, բաց անում ու նստում կարդալու։ Եւ որքան շատ էր կարդում, այնքան աւելի էր հասկանում և այնքան աւելի ուրախանում ու պայծառանում էր նրա սիրտը։

Մի անգամ այնպէս պատահեց, որ Աւդէյիչը երկար կարդաց։ Նա կարդում էր Մարկոսի Աւետարանը. կարդաց վեցերորդ գլուխը և նրա մէջ այս խօսքերը. «Ով որ քո մէկ երեսիդ ապտակ խփէ, դէմ արա նրան և միւս երեսդ, և ով որ հանէ վրայիցդ քո վերնահագուստդ, մի արգելի նրան հանել և շապիկդ։ Ամեն մի խնդրողին տուր և վերցնողից յետ մի ուզիր տուածդ։ Եւ ինչպէս ուզում էք, որ մարդիկ ձեզ հետ վարուին, այնպէս էլ դուք վարուեցէք նրանց հետ»։ Յետոյ կարդաց այն տեղը, ուր Աստուած ասում է.

«Ի՞նչ էք կանչում ինձ Տէր, Տէր և չէք անում այն, ինչ որ ես ասում եմ ձեզ։ Ամեն մարդ, որ գալիս է Ինձ մօտ, լսում է իմ խօսքերն ու կատարում՝ կասեմ ձեզ, թէ ում նման է։ Նա նման է այն մարդուն, որ տուն է շինում և փորում, խորը քանդում ու ատն հիմքը դնում քարի վրայ, այս պատճառով էլ երբ հեղեղ բարձրացաւ ու ջուրն ամբողջ ուժով ընկաւ ատն վրայ՝ չը կարողացաւ շարժել նրան, որովհետև նա հիմնուած էր քարի վրայ։ Իսկ նա, որ լսում է և չէ կատարում, նման է այն մարդուն, որ իր տունը շինել է ու հիմքը դրել հողի վրայ, ուստի երբ ջուրը զօր տուեց նրան՝ խսկոյն քանդուեց ու այդ տան աւերումը մեծ եղաւ»։

Աւդէյիչը կարդաց այս խօսքերն ու նրա սիրտն ուրախացաւ։ Նա ակնոցները վերցրեց աչքերից, դրեց գրքի վրայ, յենուեց սեղանին ու մտածման մէջ ընկաւ։ Եւ նա սկսեց չափել ու ձևել իր կեանքն այդ խօսքերի համեմատ։ Նա մտածում էր ինքն իրան.

«Արդեօք իմ տունը քարի՞ թէ աւազի վրայ է։ Լաւ է, թէ որ քարի վրայ լինի։ Հեշտ է, ի հարկէ,

երբ որ մենակ նստած ես, թւում է, թէ ամեն բան արել ես, ինչ որ Աստուած հրամայում է, բայց երբ որ ուշքդ ուրիշ բաների վրայ ես դարձնում, մէկ էլ տեսար՝ մեղանչեցիր։ Չէ, ինչ էլ որ լինի, պիտի աշխատեմ կատարել։ Տէր, դու ինձ օգնական եղիր»։

Այսպէս մտածելուց յետոյ նա ուզում էր պառկել, բայց ափսոսում էր գիրքը վայր դնել ձեռքից։ Ու նա սկսեց կարդալ 7-րորդ գլուխը։ Նա կարդաց հարիւրապետի մասին. կարդաց այրի կնոջ որդու մասին. կարդաց Յովհաննէս Մկրտչի աշակերտներին տուած պատասխանը և հասաւ այն տեղը, ուր պատմվում է, թէ մի հարուստ փարիսեցի կանչեց Տիրոջն իր մօտ հիւր։ Եւ նա էլի կարդաց մեղաւոր կնոջ մասին, թէ ինչպէս այդ կինն օծել է Տիրոջ ոտները ու լուացել արտասուքով և թէ ինչպէս Տէրն արդարացրել է նրան։ Ու հասաւ նա 44-րորդ տունին ու սկսեց կարդալ.

«Եւ դառնալով կնոջը, ասաց Սիմէօնին.—Տեսնո՞ւմ ես դու այս կնոջը։ Ես մտայ քո տունդ և դու ջուր չը տուիր Իմ ոտները լուալու, իսկ սա արտասուքով թրջեց Իմ ոտները ու իր գլխի մազերով սրբեց։ Դու Ինձ համբոյր չը տուիր, իսկ այս կինն այն ժամանակից, երբ ես եկել եմ, չէ դադարում իմ ոտները համբուրելուց։ Դու Իմ գլուխս իւղով չօծեցիր, իսկ սա միւռոնով օծեց Իմ ոտները»։ Կարդաց նա այս տողերն ու մտածեց. «Ոտներիս ջուր չը տուիր, համբոյր չը տուիր, գլուխս իւղով չօծեցիր»...

Ու նորից Աւդէյիչը հանեց ակնոցը, դրեց գրքի վրայ և նորից մտածման մէջ ընկաւ։

«Երևի, նա էլ, ինձ նման, մի փարիսեցի էր... Շատ կարելի է միմիայն իր գլխի վրայ էր մտածում,

թէ ինչպէս լաւ ու իւղոտ ուտէ, ինչպէս տաք ու փափուկ ապրի. էլ էն չէ որ հիւրի մասին հոգս քաշէ. իր անձը չէր մոռանում, իսկ հիւրը պէտքն էլ չէր։ Եւ հիւրն ով էր—ինքը Տէրը։ Եթէ ինձ մօտ գար, ես էղպէս կանէի»։

Եւ Աւդէյիչը գլուխը դրեց երկու ափի վրայ ու ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս սկսեց ննջել։

—Մարտին,—յանկարծ մի ինչ-որ շունչ լսեց նա իր ականջի տակ։

Աւդէյիչը յանկարծ սթափուեց քնից ու հարցրեց. «Ո՞վ ես»։

Նա շուռ եկաւ, նայեց դռանը,—ոչ ոք չը կար։ Աւդէյիչը նորից սկսեց ննջել։ Յանկարծ շատ պարզ կերպով նա լսեց.

—Մարտին, ա՛յ Մարտին, վաղը մաիկ տուր փոզոցին, կը գամ։

Մարտինը զարթեց, վեր կացաւ աթոռից, ըսկըսեց տրորել աչքերը։ Ինքն էլ չը գիտէր՝ քնի՞ մէջ թէ արթուն ժամանակ լսեց այդ խօսքերը։ Լամպը հանգցրեց ու պառկեց քնելու։

Առաւօտը վաղ, լուսաբացից առաջ, Աւդէյիչը վեր կացաւ տեղից, աղօթք արաւ Աստծուն, վառարանը վառեց, դրեց մէջը կաղամբի սպաս, խաշիլ. ինքնաեռը դցեց, գոգնոցը կապեց և նստեց պատուհանի մօտ աշխատելու։ Աւդէյիչը նստած աշխատում էր ու շարունակ մտածում իրիկուայ խօսքերի մասին։ Մէկ մտածում էր, թէ սուտ է, այնպէս թուաց միայն իրան, մէկ էլ մտածում, թէ ուղիղ որ ինքը ձայն լսեց։ «Ի՞նչ կայ սը. չեղած բան չէ»։

Մարտինը պատուհանի մօտ նստել, ոչ այնքան աշխատում է, ինչքան պատուհանին է նայում, և հէնց

որ մէկն անցում է անծանօթ կօշիկներով, ծռվում, դուրս է նայում պատուհանից, որ ոչ միայն ոտները, այլ և երեսը տեսնի։

Անցաւ դռնապանը թաղիքեայ նոր կօշիկներով, անցաւ ջրկիրը. պատուհանի հետ հաւասարուեց Նիկոլայ Թագաւորի ժամանակուայ մի ծեր զինուոր կարկատած թաղիքեայ կօշիկներով՝ թիակը ձեռքին։ Աւդէյիչը ճանաչեց նրան թաղիքեայ կօշիկներից։ Ծերունուն Ստեպանիչ էին ասում։ Նա ապրում էր հարևան վաճառականի մօտ, որ խղճալով նրա վրայ՝ դռնապանի օգնական էր կարգել։ Ստեպանիչն ընկրկեց ձիւնը մաքրել Աւդէյիչի պատուհանի դիմացը։ Աւդէյիչը նայեց նրան ու կրկին ձեռքն առաւ աշխատանքը։

«Տեսնում ես, իսկ որ խելքս կորցրել եմ ծերութիւնից,—ինքն իր վրայ ծիծաղեց Աւդէյիչը,—Ստեպանիչը ձիւն է մաքրում, իսկ ես մտածում եմ, թէ Քրիստոսն է գալիս ինձ մօտ։ Էհ, իստակ դժուել ես, քաւթառ ծերունի»։ Բայց մի քիչ կարելուց յետոյ՝ նա էլի աշխատում էր պատուհանին նայել։ Նայեց կրկին պատուհանին, տեսաւ, որ Ստեպանիչը թիակը դէմ է տուել պատին ուինքը կանգնել՝ ոչ է թէ տաքանում է, ոչ է թէ հանգստանում։

Ստեպանիչը ծեր, ջարդուած—փշրուած մարդ էր. ձիւն քերելու անգամ ոյժ չունէր։ «Արի թէյ խմցնեմ նրան,—մտածեց Աւդէյիչը,—հազիր ինքնաեռն էլ եփելու վրայ է»։ Աւդէյիչը վայր դրեց բիզը, տեղից վեր կացաւ, ինքնաեռը դրեց սեղանի վրայ, թէյի վրայ ջուր քաշեց ու մատով թիկթիկացրեց ապակին։ Ստեպանիչը յետ նայեց ու մօտեցաւ պատուհանին։ Աւդէյիչը ձեռքով կանչեց նրան ու դրնաց դուռը բանալու։

—Ներս արի, մի քիչ տաքացիր,—ասաց նա,—մրսած կը լինես։

—Ողորմի հօրդ, դրուստ որ ոսկորներս նվում են,—ասաց Ստեպանիչը։

Ծերունի զինուորը ներս մտաւ, ձիւնը թափ տուեց վրայից, սկսեց ոտները սրբել, որ յատակը չը կեղտոտէ. նա այն վիճակի մէջ էր, որ հազիւ էր կանգնում ոտների վրայ։

—Նեղութիւն մի քաշի ոտներդ սրբելու. ես կը մաքրեմ յատակը. մեր բանն էնպէս է։ Ա՛նց կաց, նստիր,—ասաց Աւդէյիչը,—թէյ խմիր։

Աւդէյիչը լցրեց երկու բաժակ, մէկը քշեց հիւրի առաջը, իսկ միւսն ածեց բաժակակալի մէջ ու սկսեց փչել։

Ստեպանիչը խմեց իր բաժակը, շուռ տուեց գլխիվայր, վրէն դրեց աւելցուկ շաքարն ու սկսեց շնորհակալութիւն յայտնել։ Բայց երևում էր, որ էլի էր ուզում։

—Էլի անուշ արա,—ասաց Աւդէյիչը և նորից ածեց մի բաժակ իրան, մի բաժակ էլ հիւրին։

Աւդէյիչը խմում էր իր թէյն ու մէկ-մէկ նայում փողոցին։

—Զբլինի՞ մարդու ես սպասում,—հարցրեց հիւրը։

—Մարդու եմ սպասում. բերանս չի էլ գնում, որ ասեմ, թէ ում եմ սպասում։ Սպասել չեմ սպասում, միայն գլխիս մէջ մի բան է պտոյտ գալիս. տեսիլք է, թէ էնպէս, դատարկ բան—ինքս էլ չեմ իմանում։ Գիտես ինչ, ախպէր ջան. երեկ ես Աւետարան էլի կարդում մեր Տէր Յիսուս Քրիստոսի մասին, թէ

ինչպէս Նա չարչարուել է, ինչպէս շրջել է երկրի վրայ։ Լսած կը լինես, էնպէս չէ։

—Լսելը լսել եմ,—պատասխանեց Ստեփանիչը,—բայց մենք, էհ, խաւար մարդիկ ենք, գրի սին ու ապիտակը չենք ճանաչում։

—Հա, ես էն էի ասում, կարդում էի, թէ ինչպէս Նա մեն էր գալիս երկրի վրայ։ Կարդացի, գիտես, թէ ինչպէս Նա գնաց փարիսեցու մօտ, իսկ փարիսեցին Նրան պատիւ չը տուեց։ Ա՛յ, երեկ, ախպէր ջան, ես հէնց էդ տեղը կարդացի ու մտածեցի. էդ ինչպէս բան է, որ Քրիստոսին առաք-փառաք չընդունեց։ Թէ որ, խօսք օրինակ, ինձ կամ մէկ ուրիշին պատահէր էդ բանը, էնպէս եմ կարծում, որ չէր էլ իմանայ, թէ ինչպէս ընդունէ։ Իսկ նա մի հասարակ պատիւ անգամ չը տուեց։ Ա՛յ, ես էդ բանն էի մտածում, երբ որ քունս տարաւ։ Քունս տարաւ, ախպէրս որ դուն ես, ննջացի ու լսում եմ, որ մէկը անունս է տալիս. տեղիցս վեր կացայ. մի ձայն, ասես թէ, շշնջում է ականջիս. ապասէր, ասում է, վաղը կը գամ։ Ու մէկ անգամ էլ չէ, երկու անգամ։ Հիմի, ախպէր ջան, էդ է, որ մտել է գլուխս ու դուրս չէ գալիս. ինքս բարկանում եմ ինձ վրայ, բայց էլի սպասում եմ Նրան, մեր Հօրը։

Ստեփանիչը թափ տուեց գլուխն և ոչինչ չասաց. նա իր բաժակը խմեց, վերջացրեց ու կողքի դրեց, բայց Աւդէյիչը նորից առաւ բաժակն ու էլի ածեց։

—Խմիր, Աստուած սիրես։ Ախր ես էնպէս եմ կարծում, որ երբ Նա, մեր Հայրը, աշխարհիս վրայ էր, ոչ ոքի չէր արհամարհում, այլ աւելի հասարակ մարդկանց մօտ էր գնում, աշակերտներին էլ ջոկում էր

աւելի մեզ պէսներից, բանող-աշխատողներից։ Ով, ասում է, բարձրացնում է իր անձը, նա կը ցածրանայ, իսկ ով ցածրացնում է, նա կը բարձրանայ։ Դուք ինձ, ասում է, Տէր էք կանչում, իսկ ես, ասում է, ձեր ոտներն եմ լուանում։ Ով ուզում է լինել առաջինը, ասում է, նա թող ամենքին ծառայ լինի։ Որովհետև, ասում է, երանի է աղքատներին, հեզերին, խաղաղարարներին, ողորմածներին։

Ստեփանիչը մոռացաւ իր թէյը. նա ծեր ու փափկասիրտ մարդ էր. նստած անխօս լսում էր ու արտասուքը գլորվում էր նրա աչքերից։

—Է՛, էլի անուշ արա,—ասաց Աւդէյիչը։ Բայց Ստեփանիչը խաչ հանեց երեսին, շնորհակալութիւն յայտնեց, բաժակը յետ քշեց ու վեր կացաւ տեղից։

—Շնորհակալ եմ քեզանից, Մարտին Աւդէյիչ,—ասաց,—պատուեցիր գու ինձ, հոգիս ու մարմինս կշտացրիր։

—Համեցէք, արի ուրիշ անգամ էլ. ես ուրախ եմ, երբ հիւր է գալիս ինձ մօտ,—ասաց Աւդէյիչը։

Ստեփանիչը գնաց, իսկ Մարտինն ածեց թէյի ճաշարանը իր բաժակի մէջ, խմեց, վերջացրեց, հաւաքեց ամանները ու կրկին նստեց պատուհանի մօտ աշխատելու՝ կրունկը կարելու։ Աւդէյիչը կարում էր ու աչքը շարունակ գցում պատուհանին,—սպասում էր Քրիստոսին և ինքն իրան միշտ Նրա ու Նրա գործերի մասին մտածում։ Նրա մտքի մէջ շարունակ Քրիստոսի խօսքերն էին պտոյտ գալիս։

Պատուհանի առաջից երկու զինուոր անցան, մէկն արքունական, իսկ միւսն իր սեփական կօշիկներով։ յետոյ անցկացաւ փայլուն կրկնակօշիկներով հարեան տան տէրը. անցկացաւ հացթուխն իր կողովով։ Բա-

լորն էլ անցան առանց կանգնելու. բայց ահա պատուհանին մօտեցաւ մի կին բրդէ դուլպաներով և գիւղական կիսակօշիկներով։ Նա անցաւ պատուհանի առաջից ու կանգնեց պատի մօտ. երկու պատուհանների մէջ տեղում։ Աւդէյիչը նայեց նրան պատուհանի տակով ու տեսաւ, որ օտար, անծանօթ կին է, վատ հագնուած, երեխան գրկին. կանգնել է պատի տակ, մէջքը քամու դէմ ու փաթաթում է երեխային, բայց փաթաթելու բան չունի։ Նրա հագին ամառուայ շորեր են, էն էլ հին, մաշուած շորեր։ Աւդէյիչը նոյնիսկ պատուհանի եռևից լսում էր, որ երեխան բղաւում է, իսկ կինն աշխատում է հանդստացնել նրան և ոչ մի կերպ չէ կարողանում։ Աւդէյիչը վեր կացաւ տանից դուրս եկաւ սանդուղքների վրայ ու կանչեց. «Խելօք, ա՛յ խելօք»։ Կինը լսեց և շուռ եկաւ։

—Ի՞նչ ես էդպէս ցրտի մէջ կանգնել երեխայի հետ։ Տուն արի. տաք տեղում աւելի լաւ կը փաթաթես երեխային։ Ա՛յ էստեղ։

Կինը զարմացաւ։ Տեսնում է, որ կանչողը ծերունի է, գոգնոցը կապած, ակնոցն աչքերին։ Զը վախեցաւ, գնաց եռևից։

Նրանք իջան սանդուղքի տակ, մտան սենեակ. ծերունին տարաւ կնոջը մահճակալի մօտ։

—Էստեղ նստիր,—ասաց,—խելօք, վառարանին մօտիկ. հում կը տաքանաս, հում էլ երեխային կը կերակրես։

—Կաթ չը կայ ծծերիս մէջ, հէնց ինքս առաւօտուանից ոչինչ չեմ կերել,—ասաց կինը, բայց էլի երեխային մօտեցրեց կրծքին։

Աւդէյիչը շարժեց գլուխը, գնաց սեղանի մօտ, հաց հանեց, աման հանեց, յետոյ բացեց վառարանի

բերանը, դուրս քաշեց կաղամբի սպասն ու ածեց ամանի մէջ։ Հանեց նաև խաշիլի պտուկը, բայց խաշիլը դեռ չէր եփել. մենակ կաղամբասպաս ածեց ու դրեց սեղանին։ Կախած տեղից վայր բերեց սրբիչն և նոյնպէս դրեց սեղանին։

—Նստիր,—ասաց,—խելօք, ու կեր. ես կը խաղացնեմ երեխային. ես էլ երեխաներ եմ ունեցել, գիտեմ, թէ ինչպէս պէտք է վարուել նրանց հետ։

Կինը խաչ հանեց երեսին, նստեց սեղանի մօտ ու սկսեց ուտել, իսկ Աւդէյիչը նստեց մահճակալին՝ երեխայի մօտ։ Աւդէյիչը ծփծփացնում, ծփծփացնում էր շրթունքներով երեխային ուրախացնելու համար, բայց չէր կարողանում լաւ ծփծփացնել—ատամներ չունէր։ Երեխան շարունակ բղաւում էր։ Աւդէյիչը մտածեց մատով վախեցնել նրան. թափ էր տալիս մատը մի քանի անգամ ուղիղ նրա բերանի առաջ և իսկոյն յետ քաշում, չէր թողնում, որ բերանն առնի, որովհետև մատը սև էր ու կուպրի մէջ կեղտոտած։ Երեխան նայեց, նայեց Աւդէյիչի մատին ու հանդարտուեց, իսկ յետոյ սկսեց նաև ծիծաղել։ Աւդէյիչն ուրախացաւ։ Իսկ կինն ուտում էր և պատմում, թէ ով է ինքը և ուր էր գնում։

—Ես զինուորի կին եմ,—ասում էր,—ութերորդ ամիսն է, որ մարդուս հետու տեղ ուղարկեցին ու տեղեկութիւն անգամ չունեմ նրանից։ Ինքս կերակուր էի եփում մէկի մօտ, էնտեղ էլ բերի երեխային։ Երեխային որ բերի, էլ չուզեցին պահել. և ահա երրորդ ամիսն է չարչարվում եմ առանց տեղի։ Ինչ որ ունէի՝ ծախեցի, կերայ։ Ուզում էի ծծմայր մտնել, չը վերցրին, լղար ես, ասում են։ Գնացի մի վաճառականի կնկայ մօտ,—էնտեղ մեր

տատն է ապրում,— խոստացան վերցնել։ Ես կարծում էի, թէ խկոյն կը վերցնեն, բանից դուրս եկաւ, որ չէ. պատուիրեցին միւս շաբաթ գնալ։ Տներն էլ հեռու. ես դագրեցի ու իմ անուշիկիս էլ չարչարեցի։ Շնորհակալ եմ, տանուտիրուհիս լաւ կնիկ է, ցաւում է մեզ վրայ ու Աստծու սիրոյ համար դուրս չէ անում սենեակից, թէ չէ՝ եգ էլ որ չը լինէր՝ ես գլուխս կը կորցնէի։

Աւդէյիչը հոգոց քաշեց ու հարցրեց.

—Տաք շոր չունիս, ինչ է։

—Է՛, հէրս, ինչ տաք շոր կը ունայ. երեկ գլխիս վերջին շալը գրաւ դրի մէկ աբասու։

Կինը մօտեցաւ մահճակալին ու վերցրեց երեխային, իսկ Աւդէյիչը վեր կացաւ, գնաց տախտակեայ պատի եռերը, որոնեց ու գտաւ բերեց մի հին կիսավերարկու։

—Ահա,—ասաց,—թէև եղածը բան չէ, բայց էլի պէտք կը գայ երեխային փաթաթելու համար։

Կինը նայեց կիսավերարկուին, նայեց ծերունու երեսին, վերցրեց շորն ու լաց եղաւ։ Աւդէյիչը նոյնպէս շուռ տուեց երեսը. ձեռքը տարաւ մահճակալի տակ, դուրս քաշեց մի փոքրիկ սնտուկ, մի ինչ-որ բան որոնեց նրա մէջ ու նստեց կրկին կնոջ դէմուդէմը։

—Հոգուդ արքայութիւն, պապի. թող Քրիստոս ինքն ապատէ քեզ ամեն փորձանքից։ Երևի, Նա ուղարկեց ինձ քո պատուհանի մօտ, թէ չէ՝ կը սառեցնէի երեխային։ Ես որ տանից դուրս եկայ՝ տաք էր, իսկ հիմա տես թէ ինչպէս կչկչան ցուրտ արեց։ Աստուած ինքը տուն տուեց քեզ պատուհանին նայելու ու ինձ՝ խեղճ անտէրիս ցաւելու։

Աւդէյիչը ժպտաց քթի տակ ու ասաց. «Եւ ուղիղ որ Նա տուն տուեց։ Պատուհանին, խելօք Ջան, ես զուր տեղը չէի մտիկ տալիս»։

Եւ Մարտինը պատմեց զինուորի կնոջն իր երազը և թէ ինչպէս ինքը ձայն լսեց, որով Քրիստոս խոստանում էր այդ օրը հիւր գալ նրա մօտ։

—Ինչի չէ, կարող է էգ էլ լինել,—ասաց կինը, վերկացաւ տեղից, գցեց վրան կիսավերարկուն, փաթաթեց նրա մէջ երեխային և սկսեց գլուխ տալ ու նորից շնորհակալութիւն յայտնել Աւդէյիչին։

—Ընդունիր ի սէր Քրիստոսի,—ասաց Աւդէյիչն ու տուեց նրան մի աբասի գլխի շալը գրաւից հանելու։ Կինը խաչ հանեց երեսին. խաչակնքուեց և Աւդէյիչն ու ճանապարհ գցեց կնոջը։

Կինը գնաց։ Աւդէյիչը կերաւ կաղամբով ապաստը, հաւաքեց ամանները ու նստեց կրկին աշխատելու։ Նստած, ուղիղ է, աշխատում էր, բայց պատուհանը մտքից չէր գցում—հէնց որ մի քիչ մթնում էր՝ դուրս էր նայում, թէ ով է անցնողը։ Անց էին կենում թէ ծանօթ, թէ անծանօթ մարդիկ և ոչ ոք առանձնապէս աչքի չէր ընկնում։

Եւ ահա Աւդէյիչը տեսնում է, որ ուղիղ նրա պատուհանի դիմացը կանգնեց մի պառաւ մրգավաճառ կին։ Իր հետ նա տանում էր տեփուրով խնձոր։ Արդէն քիչ էր մնացել տեփուրի մէջ. երևի, շատը ծախել էր։ Կինը շալակել էր նաև տաշեղներով լի մի պարկ։ Անպատճառ հաւաքել էր մի շինութեան տեղում ու հիմա տուն էր տանում։ Բայց, երևի, պարկը ծանր էր ու ցաւեցնում էր նրա ուսը։ Նա ուզեց պարկը գցել մէկէլ ուսին, վայր իջեցրեց, դրեց տա-

լերին, խնձորներով տեփուրը տեղաւորեց փոքրիկ սիւնի վրայ և սկսեց թափ տալ պարկը, որ տաշեղը լաւ տեղաւորուի։ Ու երբ նա պարկը թափ էր տալիս, որտեղից որտեղ, մի տղայ լոյս ընկաւ՝ պատառոտած գլխարկով, տեփուրից մի խնձոր չանթեց և ուզում էր ծլկուել, բայց պառաւը նկատեց, շուտ եկաւ ու բռնեց տղայի թևից։ Երեխան թրպրտաց, ուզում էր ազատուել պառաւի ձեռքից, բայց պառաւն երկու ձեռքով բռնեց տղային, վայր գցեց գլխարկը գլխից ու մազերից բռնեց։ Տղան սկսեց բղաւել, իսկ պառաւը հայհոյել։ Աւդէյիչը չը կարողացաւ բիզը կոխել տեղը, շպրտեց յատակին, դուրս վազեց դրռնից այնպէս արագ, որ սանդուղքի վրայ սոթ տուեց ու ակնոցը վայր գցեց աչքերից։ Աւդէյիչը վազեց փողոց։ Պառաւը քաշքշում էր տղայի մազերից ու հայհոյում, ուզում էր տանել ոստիկանի մօտ. տղան պաշտպանվում էր և կրկնում, թէ «ես չեմ վերցրել, թող, ինչու ես ծեծում»։ Աւդէյիչը մէջ մտաւ, բաժանեց նրանց. բռնեց տղայի ձեռքն ու ասաց.

—Թող, տատի, ներիր նրան ի սէր Քրիստոսի։

—Ես նրան էնպէս թողնել նշանց կը տամ, որ կեանքումն իսկի չը մոռանայ. էդ իշու ձագին պէտք է ոստիկանատուն տանել։

Աւդէյիչն սկսեց խնդրել պառաւին.

—Թող, տատի, էլ չի անի. թող ի սէր Քրիստոսի։

Պառաւը բաց թողեց տղային. նա ուզում էր փախչել, բայց Աւդէյիչը բռնեց նրա ձեռքից։

—Թողութիւն խնդրիր տատիկից,—ասաց,—և ուրիշ անգամ մի անի. ես տեսայ, որ դու վերցրիր։

Երեխան լաց եղաւ և սկսեց ներողութիւն խնդրել։

—Ա՛յ էդպէս։ Իսկ հիմա ասա, առ էս խնձորը։

Ու Աւդէյիչը վերցրեց տեփուրի վրայից մի խնձոր և տուեց տղային։

—Փողը կը տամ, տատի,—ասաց նա պառաւին։

—Երես կը տաս դու էդպէսով դրանց, էդ թոկից փախածներին,—ասաց պառաւը,—նրան մի էնպիսի ընծայ պիտի տալ, որ մի շաբաթ չը մոռանայ։

—Էհ, տատի, տատի,—ասաց Աւդէյիչը,—մեր խելքով էդպէս է, բայց Աստուծուց որ հարցնենք—էդպէս չէ։ Թէ որ նրան մի խնձորի համար պէտք է ծեծել, հապա մեզ ինչ պէտք է անել մեր մեղքերի համար։

Պառաւը լռեց։

Ու Աւդէյիչը պատմեց պառաւին առակն այն մասին, թէ ինչպէս տէրը բաշխեց իր ծառայի առաջին պարտքը, իսկ ծառան գնաց ու սկսեց խեղդել իր պարտապանին։ Պառաւն ականջ էր դնում. տղան էլ կանգնած լսում էր։

—Աստուած հրամայել է ներել,—ասաց Աւդէյիչը,—թէ չէ մեզ էլ չեն ների։ Ամենքին հարկաւոր է ներել, բայց փոքրերին ու անհասկացողներին աւելի էլ։

Պառաւը շարժեց գլուխն ու հոգոց քաշեց։

—Էդ խօ էդպէս է,—ասաց նա,—բայց էլի շատ են երես առել։

—Ուրեմն մենք, ծերերս, պէտք է սովորեցնենք նրանց,—ասաց Աւդէյիչը։

—Ես էլ էդ եմ ասում,—ասաց պառաւը,—ես ինքս էլ եօթը երեխայ ունէի, մի աղջիկ է մնացել հիմա։

Եւ պառաւն սկսեց պատմել, թէ որտեղ ու ինչ-

պէս է ապրում իր աղջկայ մօտ ու քանի թոռն ունի։

—Ա՜յ,—ասաց,—ես ինչ ոյժ ունեմ, բայց էլի աշխատում եմ. ցաւում եմ թոռներիս. լաւ երեխէք են շատ, ոչ ոք ինձ էնպէս չէ սիրում, ինչպէս նրանք։ Ակսիւտկան խօ ինձանից չէ հեռանում. «Տատի, սիրելի տատի, անուշ տատի»,—միշտ էդ է բերանում։

Ու պառաւի սիրտը բոլորովին փափկացաւ։

—Ցայտնի բան է, երեխայ է. Աստուած նրա հետ,—ասաց պառաւը՝ նայելով աղջին։

Հէնց որ պառաւն ուզում էր պարկը բարձրացնել ու շալակն առնել, աղէն առաջ վազեց ու ասաց.

—Տուր ես տանեմ, տատի, իմ ճամբէս վրայ է։

Պառաւը գլուխը թափ տուեց ու գցեց պարկը աղայի շալակը։ Եւ նրանք իրար հետ, կողք կողքի գնացին փողոցով։ Պառաւը մինչև անգամ մոռացաւ ուղել Աւդէյիչից խնձորի փողը։ Աւդէյիչը կանգնել ու շարունակ մտիկ էր տալիս նրանց և ականջ դնում, թէ ինչպէս նրանք գնում էին ու ինչ որ բան էին խօսում իրար հետ։

Աւդէյիչը ճանապարհ դրեց նրանց ու վերադարձաւ տուն. սանդուղքի վրայ գտաւ ակնոցը, որ չէր կոտրուել, վեր առաւ բիզն ու նորից նստեց բանելու։ Մի քիչ բանեց, տեսաւ, որ էլ ձաղը չէ կարողանում անցկացնել. լապտերները վառողն էլ արդէն անցաւ վառելու լապտերները։ «Երևում է, ժամանակ է ճրագ վառելու», մտածեց նա։ Լամպը նաւթ ածեց, վառեց ու կրկին նստեց աշխատելու։ Կօշիկներից մէկը բոլորովին վերջացրեց. շուռ տուեց ձեռքի մէջ, նայեց ու հաւանեց. լաւ էր կարել։ Յետոյ գործիքները վայր դրեց, կաշու կտորտանքն ալեց,

ձարերը, մախաթն ու բիզը պահեց. մեխի վրայից վայր բերեց լամպը, դրեց սեղանին. ապա դարակի վրայից վերցրեց Աւետարանը։ Նա ուզում էր բաց անել այն տեղը, ուր երեկ սեկի մի կտոր նշան էր դրել, բայց ուրիշ տեղ բացուեց։ Եւ հէնց որ Աւդէյիչը բաց արեց Աւետարանը, խսկոյն միտքն եկաւ երեկուայ երազն, ու հէնց որ միտքն եկաւ, յանկարծ նրան թուաց, թէ ոտքի ձայն է առնում, թէ մէկը շարժվում է նրա ետևը։ Աւդէյիչը յետ նայեց ու տեսաւ, որ կարծես մարդիկ են կանգնած մութ անկիւնում. մարդիկ, ուղիղ է, կանգնած են, բայց չէ կարողանում ճանաչել, թէ ով են։ Ու նրա ականջին մի ձայն շշնջում է.

—Մարտին, ա՛յ Մարտին, թէ՞ Ինձ չը ճանաչեցիր։

Ո՞ւմ,—հարցրեց Աւդէյիչը։

—Ինձ,—ասաց ձայնը,—չէ՞ որ Ես եմ։

Եւ մութ անկիւնից դուրս եկաւ Ստեպանիչը, ժպտաց և ինչպէս ամպ ցրուեց ու այլևս չերևաց...

—Սա էլ Ես եմ,—ասաց ձայնը։ Եւ մութ անկիւնից դուրս եկաւ կինն իր երեխայի հետ. կինը ժպտաց, երեխան ծիծաղեց ու երկուսն էլ անհետացան։

—Սա էլ Ես եմ,—ասաց ձայնը։ Դուրս եկան պառաւն ու երեխան խնձորը ձեռքին. երկուսն էլ ժպտացին ու անհետացան։

Աւդէյիչի հոգին ցնծաց ուրախութիւնից. նա խաչ հանեց երեսին, ակնոցը դրեց ու սկսեց կարդալ այն տեղը, որ բացուել էր։ Երեսի վերևում նա կարդաց.—

«Որովհետև Ես քաղցած էի և դուք Ինձ կերակրեցիք, ծարաւ էի և դուք յագեցրիք ծարաւս, օտար

էի և դուք ընդունեցիք Ինձ»...

Եւ երեսի ներքևում կարդաց.—

«Որովհետև դուք արիք այդ բանն Իմ այս փոքր եղբայրներից մէկին, ուրեմն և Ինձ արիք»։

Ու Աւդէյիչը հասկացաւ, որ երազը չը խաբեց նրան, որ, ուղիղ, նրա մօտ այդ օրն եկել էր նրա Փրկիչը և որ, ուղիղ, ինքն ընդունել էր Նրան։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publicnaya Biblioteka
1922
Ա. ՍՅԱՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«ԱՒԵՏԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՕՆԴ»

Լոյս են տեսել՝

№ 1. Պատմուածքներ կենդանիների կեանքից (պատկերազարդ), 1908 թ. Գինը՝ . . . . 40 կ.

№ 2. Լ. Ն. Տոլստոյ.—Ժողովրդական պատմուածքներ (հեղինակի ծննդեան ութսունամեայ յոբելեանի առիթով). Ա. Պրակ 1908 թ., գինը . . . . . 30 կ.

№ 3. Վիլհելմ Հաուֆ.—Ինքնակոչ իշխանը (պատկերազարդ), 1908 թ. Գինը՝ . . 10 կ.

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնի՝

№ 4. Լ. Ն. Տոլստոյ.—Ժողովրդական պատմուածքներ (հեղինակի ծննդեան ութսունամեայ յոբելեանի առիթով). Բ. Պրակ . . . —



Գրքերի պահեստը գտնվում է Թիֆլիս՝ «Գուտենբերգ» գրախանութում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0329161

140.85